

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն



1.-	Վ. ԾՇԱԿԱՆ	Ինքնաքիմ
✓ 5.-	Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Իմ արտահրավեր
21.-	Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Տեղապաշտ ցանկաբեամբ
23.-	Գ. ԱՐԷՂԵԱՆ	«Փսիխոստ»
42.-	* * *	Ժամ Ժխտում
43.-	Ժ. ԺԻՐՈՏՈՒ	Տրավադայի պատերազմը տեղի պիտի չունենայ
53.-	* * *	Բարձրացող վարագոյրներու ետին
55.-	Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ, Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ, Գ. ԽՐՂՈՊԵԱՆ	Վկայաքիմներ
56.-	Ա. ՅԱԿՈԲԵԱՆ	Սատոյցի տակ էլ գետը հասնւմ է...
57.-	Ա. ԱԼԻՔԵԱՆ	Կարմիր ագիտացիայի եւ սպիտակ ակացիայի մասին
61.-	* * *	Պատմութեան ամփոփումը
64.-	«ՆԱՅԻՐԻ»	Վերջին գոհը (ընկեր Անդրանիկ Թերզեան)
69.-	Ա. ԹԵՐԶԵԱՆ	Սերմացումներ
70.-	* * *	Ճշմարտութեան լոյսով
71.-	Գ. ԱՔԱՋԵԱՆ	Դարի քանաստեղծը
82.-	Գ. ԱՐՇԱԿԵԱՆ	«Օրը սեւ, ամպ կը պտտէ մեր գլխին»
83.-	* * *	Արարական արդի բանաստեղծութեան տագնապը
92.-	Բ. ԿՈՒՆԵԱՆ	Բիւզանդ կոնստաննանի արուեստը
95.-	* * *	Մշակութային լուրեր


Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՐ: ՏՐԻԻ. ԹԻԻ 5-6 ԿՈՍՏՈ-ՅՈՒՆԻՍ 1989 ՊԷՅՐՈՒԹ

Վ. ՕՇԱԿԱՆ

1989-91



ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

Ես սուտ մարդն եմ
ցուցափեղկի գանձ արձան
որուն ոչ ոք բարեւ կու տայ
կարծելով թէ տեղս կայնամ
մէկը կայ
համեղ պատառ անօթութեան աչքերուն մէջ
սովը ստուած՝ ներմակ լոյսի ակունքերով
գիս կը լափեն հազար կողմէն ու կը կլլեն
բայց չեն գիտեր ինչու քաղցը դեռ կը կրծէ
ներսը տեղ մը մթին փոսը յատակ շունի
հուժկու հովը լուռ անդադրում
կը փչէ:

Անճում գազտնի
էլեկտրոնիկ սու աչքն եմ ես
թանգարանին դուռը գոց էր
իբ բացումին առաւօտէն
կը դիտեմ

174-2000

2023.04

վանտալներու խելառ գրոհ գիշերին մէջ
 թազի լաներ ապակիները կը փշրեն
 ներսը արդեօք գանձեր կա՞ն թէ պարապ է
 ոչինչ երբեք հոն չէ մտած չէ պահուրտած
 ես եմ միայն չոսած պղնձ ու շուարուն՝
 հրաշքի մը երեւումին
 կը սպասեմ:

Անտես անյայտ
 անէութիւն մարդն եմ ես
 անպէտ շքեղ մեծդի ոստար
 հսկայ փարոս՝ գիտակցութեան
 լոյս կու տամ
 տիեզերքի հարթվայրը կը շողշողայ
 բայց ես ներսը մութին նստեր՝ ինչպէ՞ս գիտնամ
 ուր է լուցկին զարնեմ կեանքին յանկարծ վառի
 կարելի է ես եմ միակ տեսանելին
 բառերու մէջ յսանձարուրուած միակ ողջը՝
 խորհրդաւոր կրափիթի
 կը գծէ:

Ես լրտեսն եմ
 ըլլալ բային նրբանցներուն
 կը սլտամ գիս կը փնտռեմ
 ո՞վ է ի՞նչ է տեղս անցեր
 ու կ'ապրի
 կեանքս փախեր ինձմէ ծածուկ վանք մտեր է
 ետին թողած անթիւ անդէմ դերանունը
 մարդոց մասին իրար ձեռքէ ի՞նչ կը խլեն
 յետոյ չկան՝ կարօտներու գիրկը ինկած
 մինչ սգաւոր հիւլէները մեծ բակ կու գան՝
 ես եմ միայն որ տակաւին
 կը փնտռեմ:

Անգոյ մարդն եմ
 որ չէ եղած ու ա՛յ չըլլար
 բանդագուշակ կրկներեւոյթ՝
 ամէն ինչի ձեւը առնող
 դեւին պէս
 ձեր կեանքին մէջ առօք փառօք կը բնակիմ
 կը յօշոտեմ ներսէն դուրսէն ձեզ կը պարպեմ
 մինչեւ ձեզմէ ուշքի կեդեւ միայն մնայ
 ու ներս նայիք բան չգտնէք բացի ինձմէ

որ փոխանցէ՛ մէկգմէկու՝ մի՛նչեւ հասնիմ
անմահութեան դարպասները
ու հատնիմ:

Ոնրագործն եմ
բանտ նետուելիք միա՛կ մարդը
փախստական կը թափառիմ
փողոցներէն ազատ անմեղ
բայց ես եմ
մարդոց ցեղին աննախընթաց պատուհասի
ազդանշան տիւ ու զիշէր թակը լախտը
թաղանթներուն ու կոպերուն՝ ճամբայ բացէ՛ք
նշմարտութեան թափսններով պիտի սուրամ
պիտի անվերջ ձեզ կոխկոտեմ որ աթննաք —
ապրիլ չկայ առանց մահէն
անցնելու:

Մարդ էակն եմ
վկայ չունիմ նօտար չունիմ
բառէ լաստ մը վրան ելեր
նշան կ'ընեմ բան մը կ'ըսեմ
թէ ինչպէս
ես սա մարմնին վարձակալն եմ ու տանտէրը
գիրար գրկած դանակ դանկի ողջ ողջ թաղուած
վայրկեաններու շաղախին մէջ քար չկտրած՝
գուցէ յոյս կայ կեանքի ծէսը հեղ մը լարել
բանալ սիրոյ զաղտագողի ամբարտակը
ու փորձ ընել մահը չեկած
ապրելու:

Խեղճին մէկն եմ
տաշեղ ցեխոտ՝ սեւ սրիճզէն
ժամանակի՛ գետին ինկած
խուլ սուրբերու խօյ շուրջպարէն
կոխոտուած
ունայնամիտ եպերելի մեղկ թերածին
բառատունէն վրնտուած լկտի սիդեխ
օճագալար մեղք ու յանցանք գիս կը հեղձեն
եղծ շուշփան եմ ժանգոտ սոճակ խորտակ յեսան
նեխ դոժինքի քափի ժահս աշխարհ բռներ՝
ուրիշ կեղերջ ուրիշ լորուստ
չունիմ ես:

Ես Աստուածն եմ
որ պիտի գայ ստեղծելու
յոյսի շողը խաւարին մէջ
փսփսայու անցաբառը
խեղճ մարդոց
ծուղակ ինկեր՝ ապուշ ապուշ կր ծիծաղի՜
յոյսի յիմար բռուցիկներ բռներ կեցեր
դաշտերու մէջ տգիտութեան տառապանքի
մրրիկներու ցաւի նիշէն ա՛լ խուլցեր եմ
արդէն կոյր եմ լեզուս շատունց բռնուած է —
պատգամ չունիմ խրատ չունիմ՝
ես աս եմ:

2 Նոյեմբեր, 1988
Սան Ֆրանսիսկո:

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԻՄ ԱՐԱՀԵՏՈՎ ✓

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԻՈՆԻ ՀԱԻԱՔԱՎԱՅՐՈՒՄ

1

1943ի Յունուարի 28ի որր բացուեց Հայկական Լեգիոնի հիմնական հաւարակարում: Յուշակազմուից յետոյ մեզնից մէկը մնաց քարոզչական դասակում (Պրոպագանդացուդ), իսկ մնացածներս տեղաւորուեցինք երեք փոքրիկ սենեակներում, նոյն բարաքի շրջակում:

Աւելի առաջ վկայ եղանք Հետեւեալին: Բանից պարզուեմ էր, որ ինչպէս ի բարանչի բանգամ նման զէպքերում, մեր պարագայում եւս Աուշուիցի կայանից խմբի հետ միաժամանակ ուղարկել էին եւ որոշ զլիտաւոր յանձնարարականներ, որոնք կազմել էր, ինչպէս իմացանք հաւաստի ազգիւրներից, «Քարդանիւնի» Քարթուելաշուիլին ինքը, մի վերջին անգամ փորձելովք մեռալ իտալացեանց՝ թէկուզ եւ հետակայ կարգով:

Արդ, նա յանձնարարել էր, որ մեր խմբից երկու հոգի մտնեն ճամբարի քարոզչական դասակ: Ինքն էլ տուել էր այդ երկու անձանց անունները, Բայց այնպիսիներէ, որոնք բացարձակապէս ու ակնյայտօրէն ոչ մի հող եւ որ առ բնույտ թիւն շուտէին նման մի որեւէ զործի հետ,— Յովհաննէսի եւ սոյնցի Ռուբենի: Խօսքը նրանց մարդկային ընթացիկ յատկութիւններէ մասին չէ, որոնց բարեկամ էինք բոլորս: Այլ՝ աշխարհայացքային ու, մա՛նաւանդ՝ զործնական նպատակայարժարութեան: Բայց այդ մարդկանց օգային ու անհիմն թեկնածութիւնը զնուզը,— ինչ որ ուղղակի մազրի պէս էր հնչում մեր գիտակցութեան մէջ,— զիտաւ որեալ էր այդպէս վարուել՝ անխուսափելի շփոթութիւն ստեղծելու նպատակով:

Եթէ մեր խմբում կար մէկը, որը, առանց այլեւայլութեան, հարկաւ որ էր առաջին հերթին նկատի առնել քարոզչական դասակի նման՝ մտաւ որ որոշ մակարդակ պահանջող մի բաժանմունքում տեղաւորուելու համար, գաւ էլ հենց Գրիգորն էր: Բայց վրացիների կազմած չսեւ ցուցակում էր նա, Եանթոյաւորելիք: Այդ զէպքում, եթէ ողջմտութիւնը հաշուի մէջ չիներ, աւելի յաւ կը լինէր, որ տեղը բաց մնար՝ առհասարակ: Բայց ցուցակ կազմողի նպատակն էլ հենց մթնոլորտ պղտորելն էր, հայութեան շարքերում յաւելեալ շփոթութիւն յարուցելը, անկախ նրանից, թէ այդ շփոթութիւնը որքան կը տեւի՝ կարճ թէ երկար ժամանակով, նայած նմարաւոր հակազդեցութեան բնոյթին:

Ի վերջոյ, երկու «կանխատեսուած» թեկնածուները իրենք անձամբ ներկայացան դասակ ու յայտարարեցին, որ այդ զործն ինքնին իրենց բնաւ յարմար չէ: Իսկ Գրիգորն էլ իր հերթին պատշաճ կարգով բացատրեց իրերի վիճակը եւ ինքն ընդունուեց նրանց «փոխարէն», հետագայում աւելի առաջ քաշուելով լրացրութեան եւայլնի ուղղութեամբ, մինչեւ Բեռլին:

Ուրեմն, այնպիսի ռիթմացութիւններ չարթնելով սկսուեց օրը: Հաւաքովաբար, առհասարակ, կային քարաշէն շէնքեր, բայց շատ աւելի աչքի էին ընկնում փայտաշէն բարաքները:

Մեր սենեակում հինգ հողի էինք: Կային երկյարկանի մահճակալներ: Մի մեծ սեղան: Երկու փոքրիկ պահարան: Կար փտարան՝ փայտով ու քարածուխով ապահովում: Երեսու մ. էր, որ նոր վայրում կերակուրները, նախկին վայրի հետ համեմատած, քանակով աւելի էին, իսկ որակով՝ բաւական ցածր:

Բոլորս էլ յանձնեցինք մեր հին՝ յիսուական հագուստը եւ ստացանք շնորհա՝ երեսի լեհական: Իմացանք, որ զինուորները երկու կարգի են՝ մարտական եւ ուսումնական: Մենք վերջին տեսակի խմբի մէջ էինք: Զարմանալի արագութեամբ ստացանք ուսական հրացաններ:

Հաւաքովաբար հասնելու ն պէս հանդիպեցինք այնպիսիներին, որոնք աւելի առաջ էին հնուացել Աուշուիցից ու Լեզէոն հասել:

Ինքնարեւոյթաբար հանդիպեցի նաեւ համագերգացիներին ու յարակից համերկրացիներին, որոնցից անհամար տեղեկութիւններ քաղելի շատերի ու շատ բաների մասին:

Նախնական խօսակցութիւններից կարողացայ տեղեկանալ, որ հաւաքովաբար մ հագու աղէպ են ներկայացուցուցներ զնալու առիթները, իսկ կինացուցուցուցները անխափան էն: Վէլայաստան շարաթաթիւրից բացի, զժուար կամ անկարելի է ուրիշ պարբերականներ տեսնելը: Զինուորները շարքում երգում են նորաստեղծ կամ յարմարեցրած եղանակներով՝ ազգային զանազան երգեր: (Հետագայում նկատեցի, որ շրջանաբաշտեան մէջ են գտնուում երբեմնի ասորական երգերը՝ Վի գէն, հայեր, ի սուր եւ ի հրացան (վերափոխուած), ՎՆՍԻՆ շկար, մուք գիշեր էր (Պանի երգը), Ինչպէս եւ նորահիւս սրու կտորներ):

Քանի որ մեր առջև, իբրև նորեկներ, ամէն ինչ հողերանօրէն տախախտ անձայք ու երբեք են երկրայանում, ճամբարը իսկական ու բազմաճարգ զորքանակի ապաւորութիւն էր թողնում: Մարդիկ հազած էին բաւ կարողային պատկանելութեան: Դաշտային (մարտական) գու մարտակ ճրտածները ալ թեւի վրայ կրում էին մի մեւաւ որ (գրեթէ սրտածեւ) կտոր, եւագայնի շերտերով եւ Վերմենիէն (Հայաստան) մակագրութեամբ: Աստուածին պէտք է աւելացնել, որ Հայկական Լեզէոն այն հասաստութիւնն էր, որի մէջ Հայեր էին համախմբուել խորհրդային աշխարհի հայաբնակ բոլոր գօտիներից, քանի որ այն հիմնուել էր զուտ ազգային սկզբունքով: Կողք կողքի կարելի էր տեսնել Հայկական հանրապետութիւնից, զբոյ յարակից հայաբնակ երկրամասերից եւ Հեռու որ կղզիացած բնակավայրերից եկած մարդկանց, Երեւանից մինչև Գոնի Ռոստով եւ Օդեսա: Աւստի՝ կային եւ բաւական թուով հայերէն չիմացող՝ սուսախօս եւ վրացախօս հայեր: Դա հայոց պատմութեան մինչև հիմա հազուադէպ պատահութիւններից մէկն էր, եւ նոյն պօրածասում Հայը զինուոր էր յատկապէս իր հայ լինելու հանգամանքով: Մտովի կարելի էր զանազան համեմատութիւններ անել եւ եզրակացութիւնը կը լինի մէկը, այն, ինչ որ աւուտ է հիմա:

Սկիզբից եւեթ լծուեցինք շարային պարապմունքների: Ի հարկէ, մենք սկզբնական շէնք զինուորական կեանքում, որպէսզի ամէն ինչ այրու բնից սկսուէր: Բայց զերմանական համակարգի մէջ մտնելով՝ հարկաւոր էր իւրացնել վարժուելու նրանց եղանակը, առաջին հերթին զերմաններէն հրամանների ընկալման ու կատարման կարգը: Մեր ճամբարային կամ զաւային պարապմունքների ժամանակ ներկայ էին լինում թարգմանիչները, մանաւանդ երկու հայեր՝ Վիեննայից՝ յաղթանակում ու համեմատաբար տարեց Փափագիանը եւ աւելի երիտասարդ Հրանտ Զաղէխանը: Առաջինը հայերէն բաւական վարժ

գիտեր, իսկ երկրորդը՝ տակաւին կիսատ-պուտ, միայն յետոյ բաւարար շափով ստփորեց, դուժարտակում մնալով եւ հայախօս գանգուածների հետ չփոխելով: Այնպէս որ, Յու՛նուարի 30ի ճաշից յետոյ եւ յաղորդ կիրակի օրն ամբողջովին՝ ազատ ժամանակը օգտագործուե՛լ էր նոր ստփորած բառերը ամբապնդելու ու զգու՛թեամբ:

Ճամբարում գտնուած առաջին օրն իսկ վճարուեց իւրաքանչիւրին 15ական գլոտի, իրբեւ 10 օրու այ ծառայաւարձ: Եւ ահա Շարաթ օրը հաւաքարար որոշուեց, որ ամէն մարդ կամաւոր վճարի եօթու կէս դոտի՝ քառորդ լիարանոց օգու շէր եւ գլանակներ գնելու համար: Դա մի տեսակ նեղ շրջանակի օժանդակութիւն էր նոր կացութեան առթիւ: Աշխոյժ մթնոլորտ էր, լիզուներէ կապկերբ բաց: Ամէն մէկն իրեն գրեւ որում էր իր կարողութեան շափ, դրական կամ բացասական իմաստով ու մակարդակով:

Մեր 17 հողիանոց խմբին կցուած գերմանացի ենթասպան առաջին իսկ հանդիպման ժամանակ գո՛ւ մնաց եւ յայտարարեց, թէ մենք չիմտելիք ենուներք՝ ենք, երեւի՝ ուրիշների հետ համեմատելով, թէ եւ իրականում էլ մեզ մօտ գերակշռում էին այս կամ այն շափի մաստորականները (համայնարանականները): Ասում էին, թէ ուզում են եղածներից հրամկազմ պատրաստել: Մեզնից ոչ ոք, սակայն, ի վերջոյ, այդ ճանապարհով չընթացաւ: Այդու հանգիւրձ, գետ պարտապում էինք:

Պուշաւիի հիմնական հաւարակայանից բացի, նրա մերձակայքում կային գանազակ աշխատանքային դուժարտակներ, բաշխման կէտեր եւ վերապատրաստման դասընթացներ, որոնց միայն լսելով էինք տեղեակ:

Այդ ժամանակ մեզմ եղանակներ էինք Պուշաւիում: Եւ մեր պարապմունքները լինում էին կամ ընդհանուր դա՛ւչիւում, դաշտային ընդգրկում՝ մով, կամ էլ, մեծ մասամբ, ճամբարին կից ընդարձակ դաշտահրապարակում: Աւելի հետու տեղեր չէինք գնում սկզբում:

Մէջրբում էմ մի քանի էական հատուածներ 1943ի Փետրուարի 1ի օրագրային դրանցումից, իրբեւ մէկ օրուայ բնորոշ պատկեր.

«Ու՛շ գիշեր: Սեղանին վաւում է նաւթ լապտերը: Դուրսը տա՛հ է, անձրեւ է մագում: Այսօր աշխատանքային օրն անցաւ լրիւ բեռնաւորւած: ... Վերկացը եղաւ ժ. 5ից: Ժ. 6ից 7ը սպասեցինք ընդհանուր դահլիճում, պարապմունք չեղաւ: Ժ. 7:30ին ամբողջ վաշտով դուրս եկանք ճամբարից, քեֆուեցինք աջ, դարձեալ աջ, անցանք փշատերի (եղեւնի, սոճի) պարակի կողմով եւ բլրագլխի տափարակում (Քամի էր) շարային պատրաստութեամբ պարապեցինք (միւսներն ըստ իրենց ծրագրի): Ժ. 11ին վերադարձանք: Ստացանք ճաշը: ... Ժ. 13ին շարուեցինք: Գնացինք կից հրապարակը: Այնքան տա՛հ էր, որ ձիւնը հալում էր, ցեխ կուտակելով: Վերադարձանք 15ին: Քիչ յետոյ ակումբում ունեցանք գրոյց (թարգմանիչը երանգագների բացատրութիւն էր տալիս): ... Յայտնեցին, որ կիսօներկայացում ենք գնալու: Դժուարութեամբ հաւաքուեցինք (էիչ մնաց պատժելու առիթ ստեղծեն): Զինուոր ենք, պարտաւոր ենք:

Ժ. 18ին գնացինք: Ցուցադրում էր Սիճկի ժուռնալը (համար 585, Խալլին) — հայերէն բացատրութիւններով (դիկտոր): Արժէր գնալը»:

Այդ նոյն օրը ակումբի գրադարանում տեղեկացայ, որ այնտեղից գիրք վերցնողը պարտաւոր է իւրաքանչիւր օրուայ համար վճարել 10 դրոշ: Երեւոյթն անսովոր էր: Կա՛մ գրքերի կորուստների եւ ուշացումների առաջն առնելու եւ կամ էլ, երեւի, նոր պնտմաների ֆոնդ ստեղծելու համար էր դա, ինչ որ միանգամայն անհասկանալի էր թւում, քանի որ գերմանական համապատասխան ժամփնները հազիւ թէ գրած խնայէին՝ այդպիսի մի համեստ գրադարանի համար որչա՛ր թուով գրքեր ձեռք բերելու համար (հնարաւոր նուիրա-

արևութի են հրահանում): Այդ նպատակով տրուելիք դրամը չնչին բան կը լինէր բնդհանուր Ժախտերի համեմատութեամբ: Այնպէս որ, ութ ամիս ձրի գրադարաններին վարժուած ունի մէկի մտքու մ գծու ար էր բացատրու թիւն գտնել վճարովի բաշխման նորայայտ սովորութեան համար:

Պարագմու նքներն, իսկապէս, բառացիօրէն կշատու մ էին ժամանակը եւ անընդհատ բնդայանու մ էր դաշտային երթերի շատախղը: Փետրու ար 2ի առաւօտեան, օրինակ, ամբողջ վաշտով՝ 220 մարդ, երթի դուրս եկանք: Կրակեցիք վարժական փամփուշտներով: Բակ ճաշից յետոյ ճամբարամերձ ցեխածածկ հրապարակու մ էինք: Նոյն ժամանակ տեսանք, որ նորանոր խմբեր են ժամանում: Լեզուք համայնելու համար: Եւ առհասարակ՝ ճամբարի բնակչութիւնը իր անտակի հում նիւթ էր ծառայում գաշտային գումարտակներ կազմու օրելու ճանապարհին: Աւտի՛ յաճախ էին լինում բաժանումներ, միացումներ, անդափոխութիւններ, եւ այլն: Մեր խումբը գեղ նոր ու ամփոփ էր, անգաշարժ չկար: Բայց տեղաշարժի մտայնութիւնը գրացու մ էր ամենուրեք:

Հների հետ ունեցած խօսակցութիւններից պարզուեց մի ըստ էութեան անպատեխ բան, թէ որոշ կարգի չեղեղնականներ կողա ու անթոյլատրելի վերաբերմունք ունեն տեղացիների՝ չե՛հ բնակչութեան հանդէպ: Մանրամասնութիւնները չեմ յիշում, որովհետեւ դրանք այնքան տղեղ էին, որ յիշուելու արժանի չէին: Բայց յիշում եմ, թէ որքան ճշուող տպաւորութիւն թողեց այդ լուրը մեր վրայ:

Աւելին, ստուգ էին, թէ իշխանութիւնների կողմից յայտարարուել է, որ իւրաքանչիւր մէկ գերմանացու կեանք արժէ 100 չե՛հի կեանք, իսկ հայիկը՝ 60: Դա ինքնին «պերճախօս» յայտարարութիւն էր, բայց միթէարական ուղին չէր բովանդակում մարդկային առումով, քանի որ, կարգապահութիւն ու բնակչութեան հետգանդութիւն ապահովելու փոխարէն, իրականում քաղաքներում էր որոշ անկիրթ, ապրերի սանձարձակութիւնը, մի շարք մակարդակներով:

Փետրուարի մին, առաւօտեան, արդէն գրադու եցինք փորձական հրաձգութեամբ, քաղաքամերձ անտառի հրաձգարանում: Հրաձգութիւնը մարտական փամփուշտներով էր եւ հերթով: Առանձին խմբեր իրենց յատուկ գործերով էին գրադու, մինչեւ որ հերթն իրենց հասնէր: Բակ ճաշից յետոյ սենեակում Դեղատարեւի ձեռքի գնդացիքն ուսու մնասիրեցինք ու կողմնացոյցի կիրառութիւնը: Երեկոյեան էլ ակու մրում էր գ սովորելու ժամ էր երգում էին «Մայր Հայաստանի» եւ «Զէյթունը»: Այնուհետեւ սրնդանալները պարի եղանակներ նու աղեցին, պարողներն էլ պարեցին:

2

Փետրուար 6ի առաւօտեան երթն աւելի երկար էր, բնդհանուր հաշուով 20 կիլոմետր, անցնելով չորս բնակավայրային կէտերից, նախ՝ անտառներով, ապա՝ գիւղամիջին ճանապարհներով, որոնց վրայ երթելու եկում էին բազմաթիւ սայլեր ու կառքեր:

Նոյն օրն ստացանք գիտու որական գրքոյկներ:

Դրանից առաջ քաղաքի մօտով անցել էինք խմբով քայլելիս, բայց անձամբ անձանօթ էինք նրա յատակագծին: Ամօի 7ի կիրակի օրը կարող էինք օգտուել քաղաք այցելելու պատահութիւնից: Բայց քաղաքամէջ գնալու թոյլտուութիւն մեր խմբից ստացան միայն չորս հոգի: Մնացածները կի՛նօ գնացին ահաբեկութեամբ: Ըս էլ որոշեցի մէկի հետ գուրս գալ առանց թոյլտուութեան, քանի որ մտադիր էի անպայման լուսանկարուել: Քաղաքն բնդհանրապէս գորշ տպաւորութիւն էր թողնում. գոնէ այդպէս էր առաջին անգամ:

Մի փոքրիկ խմբով հասանք Վիսյայի կամուրջին: Գնան այդ պահին ստացապատուած էր, իսկ հետո ափին մի փոքրիկ նաւաշինարան էր երևում: Կամուրջին հասնելուց առաջ թերուեցինք աջ, շարունակեցինք ճանապարհը բնակավայրից դուրս, մտանք մի ուրիշ հայկական լեզղոնական ճամբար: Մի քիչ մնացինք ու վերադարձանք: Մասնք հիմնական փողոցի լուսանկարչատուն շորս հողով: Մերձակայքում, որքան յիշում եմ, նաևե մէկ ուրիշ նկարչատուն կար: Նախ՝ յորսով նկարուեցինք,— ես, Արծրունը, մի մեղրեցի եւ մի շամբրեցի,— պատուիրելով Բ րայիկայափ նկարներ: Ապա՝ մենակ նկարուեցի՝ դրա կէս շափով: Մէկ շաբաթ անց լուսանկարներն ստանալիս դուրս եկու թեմաբ անդրադարձայ, թէ որքան որակեալ աշխատանքի արդիւնք են դրանք՝ որակեալ թղթի վրայ:

Փետրուարի 8ին եւ 9ին առաւօտեան պարապմունքներն անցկացրինք քաղաքից բոլորովին դուրս, Վիսյայի միւս ափին:

9ի եզգայացուեց՝ դէպքը եղաւ այն, որ ճաշի հանգստի ժամը իր նպատակին չձառայեց, որովհետեւ ամբողջ վաշտը պատմուեց աւելի քան երկու ժամուայ ընթացքում: Էշարքում կանոնաւոր չընդհելու համար: Երաստիարակեանքն այդ եղանակը արդէն ծանօթ էր, իր անխուսափելի վրեպու մեղրով հանդերձ: Բայց՝ ա՛յդ էր իրականութիւնը:

Արդէն նախօրօք տեղեակ էի, որ ընթացիկ պարբերականները ճամբար հասնելու գործի վրայ պատշաճ ուշադրութիւն չի դարձուում: Եւ մամուլի պակասութիւնը զգալի էր առաջին տասնորեակի ընթացքում: Այնպէս որ, ուրախութիւնս մեծ էր, երբ ամսի տասին միանգամից ստացանք հայկական շաբաթաթերթ եւ ուսուիրէն «Զարնաս» (Արշալոյս) թերթի շորս համար ու «Նավի պուտ» (Նոր ուղի) հանդէսի առաջին համարը:

12ի առաւօտեան նորից մեզ ծանօթ նրաձգավայրում էինք: Կրակեցինք թէթեւ գնդաքից (առանց սկաւառակի, 5 հաս-հաս) եւ արճանակից (երեք փամփուշտից երեքն էլ նշանակէտին հասցրի ամբողջութեամբ): Այդ երկու լեզղոնական կիներթարտնում ցուցադրում էին բաղձաթիւ յաւելուածներ՝ դարձեալ հայերէն բացատրութիւններով:

Յաջորդ օրուայ վերկացը աւելի վաղ եղաւ՝ Ժ. 3ին: Մեկնեցինք երթի, ընդհանուր հաշուով կտրելով 25 կիլոմետր: Յեթ էր ու անձրեւ, բայց ժամանակն աննկատելի անցաւ:

Մեր խմբից մէկին՝ Սարգիս Սարգսեանին, առաջին անգամ, տեղափոխեցին մարտական գործառն, համապատասխան ձեւակերպումով (համադրեալ, երգում ընդունել, եւ այլն): Նրան գործուղեցին Բեռլին: Սարգիսն իրական դերասան էր, աշխատել էր նաև Կիրովականի թատրոնում: Բայց, ցաւօք, «Թոքերից թոյլ էր»: Ահա եւ որոշուել էր, որպէսզի դնայ Բեռլին, իր տեսակի վերապարտաստման կարգով վարժուի քահանայական գործին եւ Պուլաի վերադառնալուց յետոյ զբաղուի թէ՛ դերասանութեամբ եւ թէ՛ քահանայական պարտականութիւններով: Վերջին պարագան ոմանք բարեկամարար հեղձում էին, սակով, թէ որոշ մակարդակ ունեցող արդիական մարզը ինչպէ՞ս կարող է քահանայութեամբ զբաղուի: Բայց Սարգիսը կարեւորութիւն չէր տալիս այդ կարգի խոսակցութիւններին եւ բնական էր դառնում իր նոր բնականագիտութեամբ զբաղուելը: Սարգիսի Էշարքից հանուելը՝ նրա բոլոր ծանօթները, այնուամենայնիւ, գոհունակութեամբ դնահասեցին, քանի որ համակրում էին նրան եւ մտահոգւում նրա առողջական վիճակով ու ճակատագրով:

Որոշ մտորումներից յետոյ՝ Սարգիս հետ իմ կողմից մի յոգուած տղարկեցի՝ լեզղոնական թերթին յանձնելու: Թէեւ թերթի խմբադիրն էլ նայն ժամանակ ճամբարում էր, չուզեցի միանգամից բանօթութիւն հաստատել:

Տեղի քարոզչական դասակի անձնակազմը եւս, բայտ իս քաջայերական չէր շփու մեների համար եւ որքան կարող էի՝ հետու էի մնում այդ կողմից անձնապէս: Ահա թէ ինչու մէկ կողմից ներքուստ հասարուած էի բնթացիկ յողուածազրու թեան տենչով, իսկ միւս կողմից էլ փակ էի տեսնում տրամադրելի ճանապարհը՝ շուտփնիք գործուելու թեան դիմելու համար: Ուստի՝ քայլերս աւելի քան վարանուտ էին, զուտ հետախուզական բնոյթ կրող:

Փետրուարի 18ին մեզ մօտ եկան երկու հոգի, որոնք շատ ամիսներ առաջ մեզ հետ էին եղել, այնուհետեւ լեզուն ուղարկուել, այնտեղից էլ՝ գնում էին թարգմանիչների դասընթացներ: Այժմ, առիթից օգտուելով, պատմում էի իրենց գումարտակի առօրեայի մասին: Առաջին անգամ տեղեկացայ, թէ մեր հաւաքավայրում կազմակերպուող դաշտային գումարտակները ինչով են զբաղում ծառայութեան վայրերում:

Յաջորդ օրը վաշտից 40 հոգի դերձանական համազգեստ ստացան, ապա մասնակցեցին իրենց պատուին կազմակերպուած խնջոյքին: Ծաշից յետոյ ճամբարին յարակից մարզադաշտում, ընդհանուր կարգի ստուգում կատարուեց ճամբարի պէտ մայրի ներկայութեամբ, որը, իր իսկ ասելով, գոհ մնաց: Նոյն օրը նկատեցի, որ ճամբարի ներքին հրապարակի կենտրոնում տնկուած սիւնի վրայի բարձրաստի կարելի է լսել լեհերէն եւ ուկրաիներէն ուղիւհաղորդումներ: Եարսիներ տեսած դաղարից յետոյ՝ գա ինքնին թարգմանչուց անցնող ազգակ եղաւ այդ օրերի համար, աշխուժութիւն տարածելով շուրջը, ո՛չ միայն նուազով, այլեւ՝ հենց խտրով, որը կարելի էր քիչ թէ շատ հասկանալ ու հաշուի առնել՝ գոնէ մօտաւոր շաբով:

Դասընթացներ զնացողները ամսի 20ին մարտական գումարտակի գինուորների հետ միասին երգում ընդունեցին ու երեկոյեան մեկնեցին: Հրապարակում շարունակում էին փողփողալ գերմանական ու հայկական ազգային գրօշները: Դասընթացների զնացողների մէջ կային իրենց կամքին հակառակ զնացողներ, իսկ մնացողների մէջ էլ, ընդհակառակն, թրխացող արտով աննշացողներ: Մնացածներից մօտ 30 հոգի թողնուեցին նոյն տեղական դասընթացներում, իսկ 120 հոգու էլ բաժանեցին առկայ վաշտերի վրայ: Մեր միւս աղաների հետ ընկալ Յրդ վաշտը: Գիշերեցիւք առանց անկողնու, գրատի մէջ փաթաթուած: Նոր սենեակում 90 հոգի էինք, այս անգամ էլ երկարական լոյսի սակ:

Փետրուարի 25ի գրանցումից.

«... Այսօր՝ շաբաթանաց օր: Առաւօտեան դաշտ չգնացիմք — անընդհատ շարուամ, ցրում էինք: Ուր հոգու ուղարկեցիմք «փնդրատալի» (գնացողներից մէկի հետ վերնագրեստ փոխեցի): Նախկին սերայիմներից մէկը տեղափոխուել է մեզ մօտ՝ պահեստի աւագ: Բազմիք գնացիմք: Սրբուեցիմք (չգիտեմ՝ ինչի դէմ): Սափրուեցի (վաշտի վարսաւիրանցում — տասնօրեայ վնարից միշտ պահուած մէկուկէս գլուտի, ամէն դէպքում): ... Իրիկնադէմիմ ակումբում գրայց էինք լսում «Քրիստոնեական եկեղեցու դերը Հայաստանի պատմութեան մէջ» նիւթի շուրջը:

Յաջորդ օրն իմացանք, որ մէկ տասնեակից աւելի հայազգի հրամանատարներ բանտարկուած են: Իմացանք, որ փոխիչ է պեղացրային վաշտի հրամանատարը: Մէկն անյայտացել էր նաեւ մեր վաշտից: Բանտարկութիւնը երեւի կապ ունէր այդ եւ նման ուրիշ փոխուստների հետ: Բայց, ի հարկէ, բուն պատճառները անյայտ էին մնում լեզունական բազմութեանը:

Փետրուարի 27ին հաւաքավայրի բնակիչների մի մասը մասնակցեց հիւսնեղանցում վախճանուած եւ լեհական գերեզմանատանը թաղուող մի հայ լեզունականի յուղարկաւորութեանը, մինչդեռ միւս մասն գրադուած էր իր սովորական պարազմունքներով, ճամբարամերձ հրապարակում:

Մարտի 2ին առաւօտու անից յանկարծ բժշկական քննու թիւն յայտարարուեց ճամբարի համապատասխան բաժանմունքում: Պարզուեց, որ ճամբարից փախել է Մարկոսեան ազգանունով մի հրամանատար, գնալուց առաջ մի թուղթ գրելով եւ բացատրելով, որ ինքը հրեայ է: Ահա թէ ինչու բոլորին էլ առու գում էին, թլպատութեան նշանի հիման վրայ շտապ հրեաներ յայտնարբերելու: Նպատակով: Բայց, ի հարկէ, նոր հրեաներ յայտնարբերուեցին: Մարկոսեանը երեւի եզակի դէժք էր այդ իմաստով: Եւ նայնիսկ շատերը չէին ու գում հաւատայ գրան, պնդելով, թէ իսկական հայը նա՛ է եղել, քանի որ չի կամեցել, որ իր հայ անունի պատճառով միւս հայերը առ ժեռ, գրաւ համար էլ մէջուց է քաշել իր հրէութիւնը: Մինչդեռ հանրայայտ էր եւ է, որ իր ժամանակ «Մարկոսեան» անունով ճանչացուած անձը իսկապէս հրեայ է եղել ու իրբեւ այդպիսին էլ հռչակուեց պարտիզանական ասպարէզում: Երկար ժամանակ բազմաստեանի խօսակցութեան նիւթ էր նքատարածուի կեանքի ու գործունէութեան երեւոյթը լեզունի գանդուածային շրջանակներում:

Այդ օրերին գրողու անու թիւնը համատարած էր, նոյն պարունակութեամբ ու կշտայթով: Այնպէս որ, ու բիւնրի նման, ես եւս ինձնով գրադուելու, գրել-կարդալու նուազագոյն ժամանակ շու՛նէի: Մարտի 2ին նորից ինչ-որ սրկուած եղաւ, ծաղկահատման հետ միաժամանակ: Թաջորդ առաւօտեան գնացինք համաժաշտային պարապմունքի՝ «Յարձակում»: Բայց գրանով երկար լիարողացանք գրադուել, որովհետեւ ազատ տարածութիւններ քիչ էին մնացել դաշտերում. մեծ մասամբ ցանքերով էին ծածկուած եւ անյարմար՝ պարապմունքի համար:

Այդ ժամանակ ճակատի կողմերից պարբերաբար լեզունականներ էին վերադառնում, որոնց գրոյցներէց նորանոր իրողութիւններ էին պարզուած արեւելեան կողմի կացութեան վերաբերեալ: Ժամանակ առ ժամանակ երեւում էին նաեւ այնպիսիները, որոնք լեզունում չէին ծառայել, այլ ուղղակի անհաստական կարգով կապուել էին գերմանական որեւէ զորամասի հետ: Նրանք եւս կամաց-կամաց ամփոփուում էին «մայր բանակի» լեզունի մէջ: Պատմելիք շատ բան ունէին նրանք: Մերոնք եւս՝ փոխադարձաբար:

Յիշում եմ այդպիսի գանգեղութիւն երեսուսարգի: Երբ միասնաբար ծանրութեան էինք անում մեր գերիական գանդուածին վիճակուած հակասական կացութիւնը, խորհրդային ու գերմանական կողմերի օտարութեան աստիճանը, նա իր բոլոր մտքերը համառօտաբար մեակերպեց ժողովրդական հետեւեալ խօսքով. «Ի՛նչ ասեմ. վերիս ես բքում՝ Աստուած է, ներքիս ես բքում՝ մօրս՝ ինչ է»:

Մարտի 7ին ճամբարի ակունքում գտնուած ժամանակ նկատեցի, որ մի անկիւն իր տեսակի էկեղեցու է վերածուել: Աստուածամօր եւ Փրկչի պատկերների առջեւ մի քանի հուսատացեալներ կային: Ժամերդութիւն էր: Զնայած բազմութեան նօսրութեանը եւ պայմանների պարզունակութեանը, արտօնութիւնը բաւական տղաւ որիչ էր:

Նոյն ակունքում, քան գրոյ վճարելով եւ երկու օրով, վերջրէ նժգեւէր «Ամերիկահայութիւնը» ցեղը եւ իր տակաւնէն գրքոյի, բայց գաւ մի քանի ժամում. ու զգակի մի շնչով կարդացի, որն ականջիս իրբեւ նօսրութեան էր չնշում՝ իր սնով ու թափով:

Մարտի 8ին ակունքում կազմակերպուեց գերմաներէն լեզուի սուսուցման գաղտնիացի առաջին պարապմունքը: Դրանից մի քանի օր առաջ այդ մասին յայտարարութիւն էր եղել եւ ցուցակագրում: Ես էլ էի գրանցուել:

բայց ահա վաշտ առաջը, ինքնազուխ կերպով եւ առանց այլեւ այլու թեան, անու նա հանել էր տուել ցուցակից, աւելացնելով ուրիշ պատահական անու նաներ: Եւ ահա այդ հասարակ բանի համար էլ պիտի յամառօրէն պայքարէի: Ուստի՝ խճրի զեկամարի հետ վերստին խօսեցի եւ զերաւ ու նքս վերականգնեցի: Պարապմունքին ժամանակը դեռս բազմաթիւ չէինք, դրա համար էլ աշխատանքն արդիւնաւէտ էր: Պարապմունքներ լինում էին, իրրեւ կանոն, ճրկուշարթի, ճրեղարթի, շինչարթի եւ Ուրբաթ օրերը՝ երեկոյեան Ժ. 18-20ր:

Թեւ անփական կարիքների համար ազատ ժամանակը շատ սահմանափակ էր, այդուհանդերձ, մի կերպ ու ժերս շարելով՝ պատրաստել էի մի փոքրիկ յօդուածաշարք, լեզունական շարաթանթերին հասցնելու նպատակով, բայց մի փտահելի ու յարժար մարդ չէի տեսնում, որպէսզի ձեռագիրը նրան յանձնեմ: Ուստի՝ որոշեցի դիմել ու զղակի գլխաւոր թարգմանիչ Ալլեհա Մուրադեանին, որը Ալլեհի կրտսեր եղբայրն էր եւ լեզունում զգուցեալ ֆիլոսոֆիան (Թարգմանիչ) պաշտօն ուներ: Գիտէի, որ հայերէն վարժ չի իտում, բայց ուրիշ էլք չկար:

Մի երեկոյեան նրան արձայցրի՝ հանապարհին եւ շատ կարճ ժամանակի մէջ բացատրեցի իմ ինքնու թիւ նը ու ցանկու թիւ նա: Մեղրեցի, որ այդ փոքրիկ փաթեթը իր ձեռքով առաքել տայ ըստ պատկանելոյն: Մուրադեանը բարձր մարդու համար ուներ եւ իրականում էլ այդպէս էր: Դրանում աւելի համոզուեցի մեր շատ կարճ խօսակցութեան ընթացքում: Բայց բարեմտութիւնը արգելեց բաւական էր այդպիսի մի շփոթ միջավայրում որոշակի գիծ պաշտպանելու համար:

Մի քանի օր անց ակու մի աշխատողներից մէկի ձեռքից վերցրի Գառնիկ Գիւրազանի «Էջայ Բաղաճակաւ մտքի զարգացումը եւ Լ.Յ.Պայնակցութիւնը» գիրքը, որի օգնութեամբ մի նոր ակօս բացուեց զիտակցութեան մէջ՝ մեր ազգային նորագոյն պատմութեան մի որոշակի ժամանակաշրջանին եւ որոշակի բնադաւառի վերաբերեալ:

Մարտի կէսերին՝ մեզ հետ Առուշոյից Գուլաի եկածներից մէկը նամակ ստացաւ հին կայանում գտնուող մէկից եւ կարող մեզ համար: Դա ինձ զրգեց, որ ինքս էլ երկու նամակ գրեմ այնտեղ գտնուող ծանօթների: Գրեցի եւ ուղարկեցի: Բայց այդ պայմաններում ո՞վ կարող էր երաշխաւ որել, թէ ինչը մինչեւ ուր կարող է հասնել:

Մարտի 15ին խօսուեմ էր այն մասին, որ լրանում է Հայկական Լեզունի գոյութեան միամեակը: Բայց այդ ուղղութեամբ խօսակցութիւնը ներքին ոլորտում էր մնում, հանդիսաւ որ ողեկոյման մակարդակի չէր հասնում, որքան յայտնի էր ինձ:

Իմ հարեան լեզունականները զուտ աշխատաւորական, գիւղացիական խաւի պատկանող մարդիկ էին: Նրանցից ոմանք մանր արհեստի սեր ու վարժութիւն ունէին եւ պարապ չէին պահում ձեռքերը: Ինքնաշէն գործիքներով թիթեղեայ, մետաղեայ ամաններից կամ իրերից ուրիշ տեսակի իրեր էին պատրաստում, — մատանի, ծխախոտատու փ, եւ այլն: Այդ իրերը պատու իրում կամ էլ ապրանքային շրջանառութեան մէջ էին դրում պատրաստուելուց յետոյ: Դա եւս մեր առօրեայի մաս էր կազմում, գոյն առլիս նրան:

Արժէ նշել եւս մի յարակից պարագայ: Լեզունականների գրպանում, ի հարկէ, շոշափելի գրամ չկար, եթէ չհաշուենք համեստ մտաւայտարձը: Նրանց ծնունդը եւս առաջնակարգ չէր: Յամենայնպէս, ի վիճակի չէր գոհացնելու բազմատեսակ մարդկանց բազմատեսակ պահանջները: Դրա համար էլ, ինչպէս ամէնուրեք նման զէպքերում, գիւնտ որները ջանում էին տեղական լեզուից որոշ միջոցներ գնել, այնպէս՝ իրենց գրպանում մնացող գրամն ի՞նչ պիտի անէին: Ասեւ արի մասշինի շուկայ չկար: Դրա համար էլ ասեւ տուրն ար-

ուժ էր ցանկապատի ճեղքերից: Քայց կային մարդիկ, որոնք ամեն կերպ խանդարում էին այդ արդար փոխանակութիւնը, ոչ թէ զերմանացիները՝ ի պաշտօնէ, այլ՝ որոշ տեսակի, ինչպէս ասում է՝ «ժակ ակտի» նայեր, անըմբռնելի եռանդով: Նոյնիսկ, Մարտի 18ին իմ ծոցատեարում գրանցում էն այսպիսի տողեր. «Յայտարարում է, որ Յամբարի ցանկապատերի երկայնքով ակնապատում է, որպէսզի լեզունականները եմարատրութիւն չունենան լիւրի հետ շփուելու եւ առեւտուր անելու: Տարօրինակ բան: Իսկ ասելի վայելուչ առեւտրավայր չէր ստեղծուում, որն այնքան կենսական զեր ունէր կատարելիք:

Մարտի 20ին սկսած նախապատրաստական զատուարում էր տեղի ունենում նոր գաղտնային գումարտակի համար: Այդ հաշուով է, որ դասակի վերակառուցման բերումով հաստատուեցի իբրեւ կապուտ, որից եւ գոհ էի:

Եւ այդ կապակցութեամբ է, որ նոր թափ ստացաւ քայլերիձեռքի կարգը, մա՛նաւանդ հետաւոր: Մարտի 25ին, օրինակ, Վիլյայի կամուրջն անցնելուց յետոյ անտառում պարապմունք ունեցանք: Յաջորդ օրը մօտ 25 կիլոմետր ճանապարհ կտրեցինք, հրամարտութիւնից յետոյ գաղտնային խոհանոցից կերակուր ընդունելով: Այդ ժամանակ երիտասարդ հրամանատարին, որն արձակուրդի մէջ էր, ժամանակաւ որպէս փոխարինում էր մի արդէն տարեց, փորձառու մարզ, որին ընդունուած էր ուղղակի Հայրիկ կոչել:

Հայրիկն, ի հարկէ, կենսագրութիւն, այն էլ թերթում շարագրուած կենսագրութիւն ունէր, Աւետիսեան ազգանունով: Քայց, ըստ երեւոյթի, գոհ էր, որ զանգուածի կողմից Հայրիկ է կոչուում: Ձեռ յիշում, որ ոեւէ մէկը նրան, որն սակաւ սովորութեամբ, Պապաշա կոչէր: Պապաշա կոչում էին մի տարեց զերմանացի թարգմանչի, որը չէր ընդունում իր այդ արտասովոր տիպոսը եւ կշտամբելով սաստում էր, տանով. «Ես ե՞րբ եմ ձեր մօր հետ պատկել, որ Պապաշա դարձայ»:

Հայրիկն իր լեզուով ու վարժուելով մի երեւոյթ էր՝ լեզունականներին խոսակցութեան յատուկ նիւթ: Վաշտ էր վարում կամ վարժեցնում ոչ թէ ընկալելու ու բնթացիկ կարգով, այլ իր ուզած ձեւով ու յանդուժեցումով: Եւ նրա լուրջ խօսքերն էլ իբրեւ հրամանութիւն էին ընդունում: Օրինակ, Մարտի 25ի օրը, Սիւնոս անունով մի շատ երիտասարդ լեզունական, շգիտես յոյնաձուրթիւնից թէ անփութութիւնից, հրացանն ընդունուած կարգով բռնելու փոխարէն՝ գատուց բռնել եւ հետեւից քարը էր տալիս: Հայրիկը նկատեց, բարկութեամբ իր մօտ կանչեց նրան ու սկսեց նայնոյախառն նախառնել. «Այդ հրացանը մեզ հետ Հայաստան պիտի տանենք: Ինչպէ՞ս ես համարձակուում էարշ տալ ետեւից»:

Յաջորդ օրը, անտառամիջով քայլելու, զարարաղջի պատանի Եսէկը զէտից-զէտից վրացեւէն բառեր էր օգնեալում, իբրեւ գուարձութիւն, ձեւացրելով, թէ վրացեւէն է խօսում: Մեր կողմից միով անցնում էր Հայրիկը, որը չկարողանալով լուր մնալ՝ բարձրաձայն գոչեց. «Երկու հազար տարի է՝ վրացիները մեր գլխին ազդ են թափում (ինչն ասելի պատկերաւոր բառ զործածեց), դու գեւ նրանց լեզու՞մ ես խօսումս: Եւ այդպիսի էին նրա գրիթէ բուր միջամտութիւնները, անմիջական, ոչ կաղապարեալ եւ ինքնատիպ:

Մարտի 28ի գրանցումից. «... կիրակի: Ծոճաշ: Մթերքը մոր քաժամեցիմք (ըստ սովորականի՝ կշռեալով կշռած եւ շոփած գցած): ... Իրիկնաղւմիմ կիմօ-դահիմնում լսեցիմք 2րդ գումարտակից վերադարձած մի երիտասարդի ելույթը անցած ուղու մասին»:

Այդ օրերին ինձ համար մտաւ որ իրադարձութիւն նախապաշա «Հայրիկ» ամսագրի 1924ի 3րդ համարի բնթերցումը, որը պատահա՞մբ էր ձեռքս ընկել: Դա իր կցկտուր ու հատուածային բնոյթով իսկ՝ ինքնուրոյն

երևոյթի օրինակ էր Հանդիսանում, գրանից առաջ ինձ ծանօթ քաղաքական հրապարակախոսութեան գիտաց:

Այդ օրերին Բեռլինից վերադարձաւ նա, սփ որ քահանայութեան էր պատրաստուում: Եղայ իր մօտ, անդեկտ: Թիւններ ստացայ բեռլինեան Հայութեան Հանրային գործերից:

Մարտի 29ից սկսած, մէկ շաբաթուայ ժամանակով, 15 հոգի կապաւ որններս վաշտում առանձին էինք պարապմունք ունենում, Համապատասխան ծրագրով: Նախ՝ ամբողջ օրը գորանցում էինք յինում, գրագուելով քարտեզով ու կողմնացոյցով: Այնուհետև՝ գալապիսի գործնական պարապմունքներով էր լրացուում սովորածը: Մեզ էր կցուած գերմանացի մի ենթասայ, իր հետևողական ու մասնադիտական մօտեցումով:

Մարտի 30ին, երեկոյան, գրեթէ պատահաբար, առիթ եղաւ ակումբում անհնչու Բեռլինից եկած խմբագրին: Երջապատուած մի քանի հոգով, նա պատմում էր իր գործերի ու իր Հանդիսական մարդկանց, իրենց փոխաբարհերութիւնների մասին: Նրա պատմածներից դժուար էր ենթադրել, որ Բեռլինում էին ու նոր սերնդի մարդկանց միջև մաքի ու գործի համեմատութիւն չկայ: Իւրաքանչիւր կողմ իր դիմն ու նի: Խմբագիրը պատմում էր, թէ տարեցները ինչպիսի դիտողութիւններ են անում թերթում: ասլուած այս կամ այն նիւթի կառուցուածք, ասելով, թէ իրենք ու դու՛մ են օգնել թերթին, եւ թէ երիտասարդներն անփորձ են, քաղաքականութիւնից որոշ բաներ չեն հասկանում:

Չորսը վերջացնելուց յետոյ, դուրս դնալուն պէս, ոտքի վրայ կարճ ժամանակով առանձին խօսեցի խմբագրի հետ, ի գիտութիւն յայտնելով, որ մտադիր եմ որոշ կարգի յօդուածներ ուղարկել թերթին եւ շատ կ'ուզենայի, որ ուշագոր լինեն, որպէսզի ջանքերս բոլորովին զուր չանցնեն: Ի հարկէ, նա ասածներս Հանդիսական, յուսաառ խօսքեր ասաց եւ բաժանուեցիք: Բայց դնալով կամաց-կամաց ասելի համոզուեցի, որ ուղղակի աւելորդ է իմ հաստը, թերթում շատ բան պարզապէս խախտու է: Ինչպէ՞ս վարուելի: Չգրել չէի կարող, իրաւ մեծ էր ներքին պահանջ: Իսկ հաստալն էլ ինքնաբերաբար անհնարին էր գտնում՝ յուսախարութիւնների էանախորջում:

Ակումբի գրադարանից եւ չէի կարող ինքս ինձ բոլորովին գրկել: Ուստի՝ գտայ «Հայրենիք» ամսագրի մի այլ համար, «Հերոսը — յունական յեղափոխական կեանքից» (1903, Ժնև) գրքոյից կամ ուրիշ կտորներ, բնթացիկ սպասման համար:

Ապրիլի 3ին 812րդ դաշտային դուժարտակի Առաջին վաշտը եւս մեկնեց: Միս վաշտերը աւելի առաջ էին յաջորդաբար մեկնել Ծրանսիս:

Միտմամանակ վերջնական կերպարանք էր մեռք բերում նաև մեր՝ 813րդ դաշտային դուժարտակը, իր բողկացուցիչ մասերով ու հրամանատարութեամբ:

Ապրիլի 4ին վերջնականապէս վերադասաւ որուեցինք: Մեզներից նրանք, ուրիշ պիտի մնային վարժական վաշտում, անդափոխու եցին ուրիշ բարաքներ, ցանկապատի մօտ: Իսկ միւսները՝ դաշտային նոր դուժարտակի թեկնածուները, յանձնեցին բոլոր իրերը (վերմակ, ամանեղէն, տնային կօշիկ, սրբիչ, հրացան): Նրանք թիւը պակասել էր, ամբողջ վաշտում մօտ 200 հոգի էին մնացել: Թաղորդ օրը «փոխանցման» փուլը շարունակուեց: Պարզապէս չուշ քաշելու ժամանակ չկար, այնքան շատ էին սենեակները գատարկելու, մաքրելու, անդափոխութիւնների, եւ այլնի ընթացիկ գործերը: Ետտեղն ստացան

ուրիշ՝ այս անգամ հարաւայաւական արտադրութեան հրացաններու Եւ պարագծու նրները Վիսյայի միւս ափին կամ ճամբարամերձ հրապարակու մ շատու նակու եջին նոր վերադասու արու մների հիման վրայ:

Այնու հետեւ ինձ յանձնարարուեց կազմել մեր դասակի հիմնական ցուցակը: Նկատեցի, որ պահեսար նոր պիտոյքներ է ստանում: Քառասու նորկայ դասընթացքների գնացածները վերադարձան: Կերակուրներն սկսեցինք ստանալ ուրիշ խոհանոցից: Իսկ ես էլ, իմ հերթին՝ սկսեցի մաս առ մաս կուտակուած լրագրային նիթերը վերանայելու եւ թեթեւացնելու գործը, բոտընկայեալ սովորու թեան:

Յաջողարար ստացանք հակազազ՝ հակափրփրային զգեստով: Ապա՝ քան, խանջաւածեւ զանակ: Ապրիլի 9ին Լեզէոնը համալրելու ժեծաթիւ թեկնածուներ հասան հասարակայր, յատուկ աշխու մու թիւն յարուցելով ամէն առթիւով հայրենակիցներ փնտոող լեզէոնականների շարքու մ:

Ապրիլի 11ի Կիրակի օրը, առաւօտեան, կինո-դահլիճու մ լսեցինք ակու մրին կից նու ազախմբի համերգը: Ամէնից վերջու մ դու մարտակի հրամանատար հաու պոմանը իր շնորհակալութիւնը յայտնեց համերգի համար եւ միտմանական յայտարարեց, որ ամսի վերջին մեր գու մարտակը պէտք է հետանայ այժմեան ճամբարից ու տեղափոխուի Լեհաստանի մի այլ վայր:

Ապրիլի 13ին տակտիկական պարագծունքի գնացինք ամբողջ գու մարտակով, 19 կիլոմետր երթի գնալով: Հրամանատարները գոհացուցիչ գնահատական տուին օրու այ գործերին:

Ապրիլի 14ը եւ 15ը ու շաբաթ օրեր էին Լեզէոնի համար: Առաջին օրը պարագծունք շուենցանք, քայց գրու փոխարէն անընդհատ գրագուած էինք: Լեզէոն էր ժամանել յորս հողուց կազմուած մի խու մը Բեռլինից, — գորավար Դրո կանայան, պրոֆեսոր Արտաշէս Արեղեան, գնդապետ Տիգրան Բաղդասարեան եւ երիտասարդ Յարու թիւեանը:

Յիշում եմ այսպիսի մի պատկեր: Ճամբարի ընդարձակ հրապարակու մ անկանոն քազմութիւն էր հասարաւել: Քազմութեանը խառնուել եւ շրջապատողների հետ ոտքի վրայ մտքեր էին փոխանակուում Արեղեանն ու Բաղդասարեանը: Կանգ առայ վերջինիս մօտ, որը տեղացող հարցերին պատասխանելով՝ ցոյց էր տալիս հանրապետական ժամանակաշրջանի իր գինու որական գրքոյկը, եւ այլն: Դիմացից անցնողներից մէկը՝ մի քաբմրահասակ լեզէոնական՝ իր բնականութեան վրայ ու գեց ներկայացնել այն բանակը, որին պատկանել է Բաղդասարեանը. «Հա՛, Դաշնակցական բանակի՞»: «Ինչու՞ զաշնակցական, — ճշտեց գնդապետը, — Հայաստանի Հանրապետութեան բանակի՞»:

Սկու որները տառիւն օրը, ճաշից առաջ, ճամբարամերձ հրապարակու մ առանձին գրոյց ու նեցան հրամանատարական կազմի հետ: Իսկ ճաշից յետոյ էլ՝ նոյն հրապարակի ծայրու մ գտնուող կինո-դահլիճու մ առէլի ընդարձակ էլոյթի ու նեցան լեզէոնական զանգու անի համար: Այն էլ երկու հերթով, որովհետեւ քոլորի համար միտմանակ տեղ չկար: Հասարոյթը եղաւ նախ գալտային, ապա վարժական գու մարտակների հաշուով: Առաջին գծի վրայ էր գտնուում, ի հարկէ, Դրոյի էլոյթը:

Ես որեւէ տեղ չեմ լսել կամ կարդացել, թէ Դրոն աչքի ընկնող ճառախօս է եղել երբեւէ: Եւ իրականում էլ չի եղել հասանարար: Քայց մեր յամբ աշխարհիսն էր, որն անվարան կարելի է կոչել սկու ու եւ բովանդակալից ճառ: Խօսքի շարք յաւ էր բնարուած, ոչ երկար, ոչ էլ կարճ: Դրոն բեմից խօսում էր հանպիստ, սահուն, առանց ձայնի ու կշռոյթի նու աղաղոյն խափանման: Խօսքը ներքուստ լիցքաւ որուած էր եւ մշակուած համոզմու նքի արդիւնք:

Դրոյի խօսքի սկիզբը բուական զգացական էր: «Յաւալի՛, շա՛տ ցու ալի է, — յատուկ շեշտով առու մ էր նա, — որ այս երիտասարդութիւնը տեանում եմ

օտար հողի վրայ: Որքան կ'ուզենայի, որ ձեզ հետ հանդիպու՞մք տեղի ունենար Սրբեանում, հայոց հողի վրայ:

Նման հարցադրումն արդէն ինքնին մի որոշակի կլակու էր, որով պայմանաւորուած էին եւ միս գրոյթները:

Ապա Դրոն սասց, թէ խորհրդային պայմաններու մ ձեռացած երիտասարդները Արեւմուտքը հանաչելու պատհանութիւն չեն ունեցել: Իսկ այսօրուայ տեսածով չի կարելի չափել Արեւմտեան աշխարհը: Ե՛րու՛ք գտնուում է՛ք տիրողի եւ տիրուողի երկրում,— քանիցս կրկնեց նա,— այն էլ պատերազմի՛ ժամանակ: Ապա նա փաստօրէն ներկայացրեց ու գոգեց այն կարգերը, որոնք գոյութիւն ունին ժողովրդավարական երկրներում, քաղաքական ու ընկերային ասպարէզներու մ: Այդ կէտը շատ արտասու՛մք թուաց ինձ, թերեւս նաեւ շատ ուրշնեմի, երբ Դրոյի նման մի աչքի ընկնող անձնաւորութիւն՝ զերմանագիտների արամազրած թեմից ու նրանց սկանջի տակ ժողովրդավարական աշխարհի գոգն էր անում, նրա անունը տալով կամ շտալով, բայց այնքան հասկանալի մակարդակով ու շեշտուած նախասիրութեամբ:

Դրոյի էլոյթի մէջ ուշագրաւ էին նաեւ այն տեղերը, երբ նա կոչ էր անում հետու մնալ փոխազարմ մատնութիւններին սովորութիւնից: Այդ կապակցութեամբ, շարքային չեղէնականները, առկայ պայմաններում, շատ բան չէին կարող իմանալ: Բայց Դրոն հասնաբար աւելի էր տեղեակ իրերի գիճակին, հաւաքած տուեալների հիման վրայ, ուստի՝ այնքան շեշտակի էր արտայայտուում: Ե՛ր հարկ է,— ասում էր նա,— խառնակիչներին ու ոճրագործներին փոզարկելու կոչ չի կարող արուել, բայց շղկտք է թոյլատրելի համարել նաեւ շարժման ու փոփոխարմ մատնադրութիւնները:

Երկրորդ օրը, ճաշից յետոյ նայն գահչիճում կազմակերպուեց պրոֆեսոր Արեղեանի զեկուցումը՝ հայ մշակոյթի եւ յարակից հարցերի վերաբերեալ: Թէ՛ ընդհանրապէս եւ թէ՛ վերջին քստնամեակի արտասահմանեան իրականութեան կապակցութեամբ: Այդ զեկուցումն, ի հարկէ, բոլորի համար նայն շափով մատչելի չէր, քանի որ ներկայ հասարակութիւնը խորհրդային կողմերից էր եկել, շատ զէպքերում՝ ազգային մշակոյթի տեսակէտից խոպան վայրերից ու խուերից:

Այդ օրը եւս, զեկուցումն սկսուելուց առաջ, դասախօսք սուիթ ունեցաւ մերձակայ հրապարակում խառնուելու հաւաքուած հասարակութեանը, ուղքի վրայ մաքր փոխանակելու հետաքրքրաւք տարբերի հետ:

Ապրիլի 16ին շղաշտայիններս՝ յանձնեցինք հին համազգեստը, դրա փոխարէն ստանալով երկու զոյգ հագուստ՝ իսկական զինուորականը եւ տնային-աշխատանքայինը: Նոյն ժամանակ փորձարկեցինք հակազազերի՝ գազասննակում: Եւ առհասարակ նկատուում էր նախապատրաստուելու գլխապաշտարակութիւն ամէն ինչի մէջ:

Յաջորդ առաւօտեան ճամբարամերձ հրապարակում, շարային պարապմունքներից յետոյ, զինուորական երդման արարողական ընթացքը կատարեցինք փորձական կարգով: Իսկ երդման արարողութիւնը տեղի ունեցաւ Ապրիլի 19ի Սրկուշարթի օրը: Հրապարակի կենտրոնում բարձրացող սիւնի վրայ ծածանում էին զերմանական եւ հայկական դրոշները: Ելոյթ ունեցաւ նաեւ մի գնդապետ, ըստ երեւոյթին Արեւելեան Լեզնոնի հրամանատարը: Ապա զորահանգէս ընդունուեց հրամանատարութեան կողմից՝ գումարտակի առջեւից տարուում էր նախ ստացուած գրուք:

Վերջից յետոյ, ըստ ընդունուած կարգի, գումարտակայինները քաղաքում ազատօրէն զրօնելու իրաւունք ստացան, համապատասխան արամազրութեամբ: Յաջորդ օրը մէկական՝ քառորդ լիտրանոց օդու շէր բաժանեցին (զրամով՝ երեք զլտոսի): Այնպէս որ՝ ամէնուրեք ազմուկ էր:

Բայց միւս օրն, ի Հարկէ, գարձեալ ուղի վրայ էին մարդիկ: Առաւօտեան լրին գոհնտաւ որմամբ գնացինք զու մարտակային պարապմունքներին: Մօտ 6 կիլոմետր անցանք անտառի միջով ու կանգ առանք մի ընդարձակ բացատում, այնտեղ էլ ճաշելով զաշտային խոհանոցից:

Այդ օրերին, գրեթէ ամէն երկրոյ, զուարճական երեկոյթ էր լինում ակումբում: Երբեմն ներկայ էի լինում: Փորձում էի կարգալ նաեւ ձեռքս ընկած որեւէ փոքրածաւալ հրատարակութիւն: Օրինակ՝ է. Ակնունու «Դեպի երկիր»ը կամ «ուսերէն ընթացիկ հրատարակութեան» զբոյժները: Եարունակում էինք պարբերաբար ներկայանալ կինո-ներկայացումներին:

Ապրիլի 23ին, Ջառկի նախօրեակին, ազատ էինք: Կէսօրից յետոյ վաշտի անձնակազմի կէսին թոյլատրուեց շաղաք զնայլ: Իսկ զեւ Ուրբաթն էր: Յաջորդ օրերն էլ առնական դրոյժ էին կրում: Եւ առհասարակ օրում էլ կարելի էր զուրս հիշել, քանի որ վաշտի կէսին մէկ անգամ, իսկ միւս կէսին էլ յաջորդ անգամ էր թոյլատրուած հեռանալ ճամբարից: Առանձնաշնորհեալ վիճակ:

Այդ ձևով է, որ 24ի Եարաթ օրը հոյս առնածներ զբօսայգում, որտեղ մարդիկ զանազան մանր զործերով էին զբաղուած. ոմանք ծաղիկներ էին քաղում, ուրիշները մանր կենդանիներէ համար խոտ հաւաքում, եւ այլն: Պատահում էին եւ սուսական երբեմնի բանակում ծառայած տարեց լեհեր, որոնց հետ կարելի էր զրոյցի բռնուիլ, զբանով իսկ լայնացնել սեփական ճմառնորիչը: Այդ կարգի թափառումներով անցկացրի եւ Ապրիլի 26ի Երկուշաբթի օրը, կէսօրից յետոյ: Լուսանկարչատանից վերցրի պատուէրած լուսանկարները: Կարեցի զբոսանտառները: Մտախալ զիս զուժ երկար զրոյց ու նեցայ մի լեհ զարեղազործի հետ, որը զարմանում էր, թէ ինչպէս ենք միմեանց ազատօրէն հասկանում:

Այդ օրերին լռեցի, որ ճամբարի ակումբին կից բացուի էլ «Հայ Լեզու-նականի Տուն», բայց ՀՀասցրի տեղեկանայ, թէ ինչու մե՛կ կայանում է նրա զերը առհասարակ:

Ապրիլի 28ի գրանցումից.

«... Առաւօտեան վաղ վերկացից (ծ. 4) անմիջապէս յետոյ ուղեւորեցինք Վիսլայի կամրջի մօտ: Մի դասակ (Առաջինը) գետնանցեց սակրաւորների կողմից պատրաստուած զինուորական (պարուսինէ) մուսկետների միջոցով: Ապա մեծ մասշտաբի յարձակում սկսեցինք, որն ընդմիջումներով տուեց մինչեւ ժ. 13ը: Միմշայժմ եզած պարապմունքներից ամենադժուարը: Ոտներս բաց են: Սկզբում արդէն բարձրացած արտերի եւ ցանած բանջարանոցների միջով էինք կտրտելով անցնում (սրտցաւաթիւն չկար ոչ ոքի կողմից). յետոյ՝ միայն գլխի ընկան եւ արգիլեցին: Մեր դասակը մի ժամով պատիժ-պարապմունք ունեցաւ (շարային եւ այլ սովորական): Հենց նոր ստորագրեցինք երդում ընդունելու համաձայն կազմած պարտաւորութիւնը՝ 813րդ մարտական գումարտակում հաշուելու համար»:

Ապրիլի 30ի գրանցումից.

«... Երեկուանից սկսած՝ գումարտակի (813) կապաւորներս օրական շափած մամ պարապմունք ենք ունենում: Դատարկ եւ անչափ հաճախային բաներ: Զգիտեմ՝ երբ պիտի ընկնեմ էջէ-շատէ պատշաճ շրջան: ... Այսօր առաւօտեան՝ Վիսլայից այն կողմ, անտառում: Համատարած ցնծութիւն, զարուն: Տափ է: Վառարանը վաղուց ի վեր վերցրել ենք (ձուածեղն ինքնաշէն եռատանու վրայ ենք անում): Մի քանի օր առաջ մի բազմազգ բազմութիւն հասաւ նամբար: Հայերը մնացին: Ասում են, նրանց մէջ կան բարձր գերիներ: ... Այսօր ծամբար հասաւ 2րդ գումարտակին ամբողջութեամբ: Երկու ամիս եղել են կերտանում, ապա վերագար-

U
111

ձեւ այստեղ՝ ամենայն հաւանականութեամբ կազդուրուելու եւ համայր-
ւելու: Արեւավառ դէմքեր, վստահ քայլումք, խրոխտ ձայներք:

*Մայիսի 1ի հաճախայ (ժ. 13-19) քաղաքային գրասենյակի ժամանակ ան-
ցայ աշխատողներէ ճամբարի մօտով, գերեզմանատան մօտով, որտեղ եւ թաղ-
ման արարողութիւններ էր, հասայ Չրդ գումարտակի դանուած տեղը, հան-
դիպելով որոշ թուով համադիւզացիներէ, գրուցելով ըստ կարգի եւ օրուայ
պահանջի: Ճամբար վերադառնալուց յետոյ կարդացի նշան Պէշիկթաշխանի
«Երգիծական» գիրքը, շփուելով, գրական մի նոր երակի:*

Մայիսի 5ի գրանցումք.

«... Նախանցեալ օրը միմչեւ ճաշ ազատ էինք: Ճաշից յետոյ ունե-
ցանք համազումարտակային տակտիկական պարապմունք, անտառում,
որից վերադարձանք գիշերը (12իմ). (ի դէպ, ազդանշանից յետոյ կրակելու
համար միւս վաշտերը պատժուեցին): Երէկ, նոյնպէս միմչեւ իրիկնադէմ
մանր-մունր քաներով էին գրազուած, որից յետոյ ամբողջ գումարտակով
զննցինք երբի (ընդհանուր առմամբ 15 կիլոմետր): Ծագկուն գիւղաս-
տան: Այսօր մեզմից մի փոքր խումբ մեկնեց այն քաղաք, ուր գնալու ենք
մենք, նախապատրաստական աշխատանքներն անելու: Աստիճանաբար
մեր հասանելիքը լրիւ ստացանք: Գուցէ (ինչպէս ասում են) վազը զննեմք:
Իրերը դասուորիկ ենք եւ սպասում... Ստացանք անձնանիշները (իմը
4624):»

*Գումարտակի տեղափոխութիւնն սկսուեց յաջորդ օրը, երբ մեկնեցին
միայն երկու վաշտեր: Դին մի այլ էջուն կազմուեց, որի մէջ տեղաւորուեցին
մեր վաշտը, շտաբային վաշտը եւ տարբեր վաշտերից հասարած մէկական
զասակներէց կազմուած մըր վաշտը: Վազուններէց շորտը (2ը երկրորդ եւ 2ը
երրորդ կարգի) մարդատար էին, մնացածը ապրանքատար: Պուլաւից շա-
մբուցեցինք իրիկնադէմին, անցանք Լիւրիկնով եւ առաւօտեան հասանք նշա-
նակուած վայրը:*

ՄԻՋԱՆԿԵԱՒ, ԲԱՅԱՏՄԱԿԱՆ ԽՕՄԻ

Պուլաւից շաբա միտ խացակայելուց յետոյ, Սեպտեմբերի
12ին, մեր գումարտակը վերստին գտնոււմ էր Պուլաւում, Բա-
ղամի մերձակայ անտառային ճամբարում, որտեղ մնացինք
միջիւ տմախ վերջը:

Այդ քանօրեայ ժամանակաշրջանին է վերաբերում այն
փոքրածալ հատուածը, իրրիւ յաւելուած:

*Պուլաւում մենք հիմնական ճամբար շմտանք, այլ տեղաւորուեցինք
նրանից մօտ 3 կիլոմետր հեռու արտարնակափայրային՝ Անտառային ճամբար-
ում (Վալդայադեր):*

*Դա անջուր, առօրեայ յարմարութիւններից դուրի մի վայր էր: Տեղ
հասնելու օրն իսկ, ժամը 14-21, քաղաքային արձակուրդ ստացանք: Եղայ
հիմնական հաւաքափայրում: Այցելեցին այնտեղ դանուոյ համադիւզացիներ-
ըն, նաեւ մտերիմ անձերի, մանաւանդ երբձնի պաշտօնակից ու բարեկամ
Թաղէօսին: Գիշերը տաղնապով անցկացրինք, հետուոր միջադէպերի պատ-
ճառով: Գումարտակի բոլոր վաշտերը, ի վերջոյ, միատեղուեցին:*

*Արամի փախուստից յետոյ՝ նրա ծառայողական տեղը բաց մնաց: Եւ
Ղեկավարութեան մօտ միտք յղացուեց ինքնաբերաբար, որ նրան փոխարի-
նեմ: Իրրիւ վաշտի «Տիեխնուողաֆի բերի»՝ հաշուետարի՝ գերմանացի են-
թասպայի օգնական: Այդ գործը մասամբ կապուած էր պահեստի հետ եւ ես
իմ հերթին շատ ջանքեր թափեցի այնտեղ եւս ինչ որ չափի հաշուատու մ եւ
կարգաւորութիւն հաստատուելու գծով:*

Պուլաին այս անգամ ինձ համար հրապուրիչ էր յակապետ մէկ առու-
մով: Պատրաստել էի որոշ թուով շափածոյ կտորներ (յօղու աններից անկախ),
ծանօթացել քարոզչական գտակի քարտուղարի՝ մի երեսասարգի հետ, և
խնդրել, որ գրածս ուղարկի ուր որ պէտք է: Նա էլ անմիջապէս քարեացակա-
մօրէն մեքենայրեց իր ձեռքն ընկածը և մէկական պատճէն յանձնեց ինձ:
Անպատեհին այն էր, որ մեքենայրու անը ինձ վրայ, իբրև հեղինակի, բոլորո-
վին ուրիշ տպաւորութիւն էր թողնում, քան ձեռագիրը: Իսկ անհամեմատ
տպաւորիչ էր: Հասկացայ, որ ինչպէս գրականութեան պատմաբանների հա-
մար ձեռագիրն է նշանակալի, տպագրից առաջ, այնպէս էլ հեղինակի համար՝
տպագրիչ կամ գոնէ մեքենայի՛րն է ամէնից կարեւորը, այլ ոչ թէ ձեռագիրը,
որն առանց այն էլ համար է ու ոչինչ չի նշանակում հոգեբանական մակարդա-
կով: Ընդդէմ է իմ յանձնած նիւթերը այնուհետև գրեթէ անարժանայն մնա-
ցին, բայց ևս գոնէ ունեցայ հեղինակային այդ զարմանալի զգացման փորձա-
ուութիւնը:

Մեր համարի զարպատ կողքով անցնող ճանապարհի մօտ շուկա-
յանման վաճառադաշտ էր ստեղծուել, որտեղ մօտակայ բնակավայրերից լի-
հերք գնադան ծառապուղներ (սանձ, խնձոր, սալոր) և բանջարապուտեղ-
ներ (պամիդոր) էին բերում ու ծախում: Աւելի բարձր գններով, քան քաղաքի
շուկայում: Իրա առաւելութիւնը միայն մօտիկ լինելն էր:

Սեպտեմբերի 16ի երեկոյեան Լեզոնի կինոդահլիճում ներկայացուեց
«Սամուէլը», չդիտեմ ու մ ճշակու մով: Ընդհանուր առմամբ յաջող և մակար-
դակային բեմադրութիւն էր՝ առկայ հնարաւորութիւնների սահմաններում:
Երևում էր, որ խաղացողները բեմին իսկապէս տեղեակ մտրդիկ են: Մէկ շա-
բաթ անց՝ Սեպտեմբերի 23ին, նոյն դահլիճում ներկայացուեց «Սասունցի
Դաւիթը», նմանապէս ներկայանալի մակարդակով, որը ևս գնահատուեց
Հանդիսականների կողմից, ինքնաբերաւ ու անկեղծ բացականշութիւներով:

Սեպտեմբերի 19ի կիրակի օրը՝ եղածներից ու թ համարի դացի կենտ-
րոնացածք ու յաջողեցրինք մասամբ լուսանկարուել համարի մօտակայ-
քում: Իսկ էլ սահուն գործ չէր, մէկն ուզում էր, միւր չէր ուզում, համապա-
տասխան պատճառարանութեամբ: Եւ առանց բացատրութեան էլ Հասկանալի
էր, թէ ինչու: Ո՞վ կարող էր երաշխաւորել, թէ ո՞ր լուսանկար ինչպիսի՛ ճա-
նապարհներից պիտի անցնի... Մի կողմից բնական էր կամենալը, միւս կողմից
էլ՝ զգուշանալը:

Յաջորդ օրուանից վերակուեցին շարային բնթացիկ պարապում նքն-
րը: Այս անգամ ևս չէի մասնակցում, որովհետև օգնում էի եմբաստային պա-
հետում, սահմանում կարողով:

Այդ օրերին, երեկոյեան դէմ, համարը միանգամից աշխուժանում էր:
Լեզոնականները թեթեւացնում էին սրտերը: Զուռնան նուագում, թմբուկը
զարկում, պարում էին ամենայն հունգով: Արու հաստերների թիւն անում էր
օրեցօր:

Սեպտեմբերի 23ին լեհական գրածները հաւաքեցին՝ մի այլ գրածով
փոխանակելու խոստումով (տեղափոխութեան կապակցութեամբ):

Սեպտ 25ին համարումարտակային հաւաքում՝ գուժարտակի հրամա-
նատար հասու պտման ՎոյՖը, հանրագումարի բերելով անցած ուզու գէպքե-
րը, նչեց մօտակայ անկիթները: Այնուհետև պարզուեց, որ մի շարք բնթացիկ
անկարգութիւնների պատճառով քաղաքային արձակուրդներն անհամեմատ
կրճատուել են ևս Հսկողութիւնն անբնականայնիչ շափով բազմապատկուել է:
Համարում ստանալուց յետոյ վաշտում աւարտուեց վերադասուրումը:

Սեպտ 27ին գարձակ շրջապարուեց քաղաք գնալ: Պարզուեց, որ որոշ
աարբեր գիշերը փախել են, մի քանիսն էլ կալտերի տակ են: Իրականում աւե-

8

լին էր պատահել: Որովհետև հրամանատարները կազմակերպուել և վճռել էին իրենց հետ տանել ամբողջ վաշտերը: Լուրը հասել էր հրամանատարու թևան և այդ քայլը խափանուել: Արդ, երբ առանձին ահաբեկներ էին փախչում, դա մարդկանց ազատ կամքի արտայայտութիւն էր համարուում չարքային դանդուանի մաս: Մէկն այսպէս, միւսն՝ այնպէս: Երբ ոեւէ բարձրաստիճան հրամանատար էր փախչում, դա ևս ինքնին բացատրելի էր համարուում: Քանզի կային մարդիկ, որոնք խորհրդային երկրում աչքի ընկնող դիրք էին ունեցել (ընդհանրաբարուցար, ևւայն), ուստի՝ նրանց մասին էր անընդհան համարուում, թէ և լաւ կը լինէր, որ նրանք առհասարակ բնաւ չեզոք չմտնէին: Ամէնից ահա՛ն ու սոսկային այն էր, երբ նման հրամանատարները զէնքի ու ժող. ամբողջ գործառններ էին շեղում իրենց ճանապարհից: Իսկ այդպիսի զէնքեր իսկապէս եղել են: Այսինքն՝ փախել են ո՛չ միայն սեփական կամքով փախչելու տրամադրութիւն ունեցողները, այլև՝ ճիշտ հակառակը՝ մտածողները, հարկադրանքի տակ: Այդ կանխորոշում է, որ մեր գումարտակն աչքի էր ընկնում որոշակի առանձնայատկութիւններով:

Այդպիսի խոր պատճառներով է, որ Անտառային ճամբարում գտնուելու վերջին օրերը պարզ չէին: Քաղաք ու հիմնական ճամբար գնալը մերթ թոյլատրուում, մերթ չէր թոյլատրուում: Պարապմունքները լինում ևւ չէին լինում: Հոկտեմբերի մէկին ճամբարամերձ կրակազծում փորձում էինք նոր ստացած հրացանները: Ետը որը գումարտակի հասաքում կոչով ունեցաւ Բնոյինից եկած մի քարոզիչ: Իսկ երեկոյեան համատարած օդերում էր, աշխուժութիւն, որի նմանը միայն մէկ անգամ էի նկատել՝ Լեզոն մտնելուց ի վեր: Դա իր տեսակի հրամեշտ էր Արեւելեան Եւրոպային ևւ նախադուր Արեւմտեանի համար: Ո՛չ միայն մեր, այլև բազմաթիւ ուրիշ շեղումական գումարտակների հակառակորդ նոր սկրուներով էր վճռուում, իրերի հրամայական թելադրանքով:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԵՍԼԱՊԱՇՏ ՑԱՆԿՈՒԹԵԱՄԲ

Ճամբուս վրբայ հին աշուն մր կ'արտասուէր,
 երբ քեզ տեսայ տենչանքի մր փոնմփին,
 ուր այլեքուդ՝
 կար նրբերանգ մր կարծես
 վազնչագեղ յուշերէս.
 Եւ կար ժպիտ մը քախծոտ,
 ուրուագծուած երազանքին իմ նախկին
 կախարդանքովն հեռայուշ...

Ես գգացի,
 քէ այն էակն ես գուցէ,
 որուն սիրոյն մէջ սնուցի
 քաղճանքները սազմնաւոր
 բերկրանքի մր բնապաշտ.
 կամ էացումն ես գուցէ
 այն սխրանքին կորուսեալ,
 որ ցրտաբեկ կարօտներու նամբեզրին՝
 կր հոյովէ քախծութիւն մր անիմաց
 հին աշունի մր հեւքով,
 եւ կր մզէ գիս կրկին՝
 նոր խոհերու արարչաստեղծ երկունքին...

Յնորայայտ դիմաստուե՞րն ես գուն արդեօք
 այն հրնուանքին ծաղկատի,
 որ օրերուս խորշակաշունչ ցաւէն ետք՝
 աննիւթացա՛ւ, սրբացա՛ւ
 խոհավայրին մէջ մտքիս՝
 իբրեւ տեսիլ շիրմային...

Տարփայարոյց նոյն յոյզերով յօրինուած՝
 արդեօք իմ ե՞րգն ես մոյառ,
 որ կր փնտռէ խաժամուծին մէջ կեանքին՝
 հոգմակորոյս նախերգանքն իր գոյութեան,
 նակատագրիս ճանապարհին ուղեկցող,
 հին մորմոքի մր նման...

Գուցէ ե՛ս եմ,
 որ ոգեպաշտ ցանկութեամբ՝

կ'այլակերպեմ անցելագեղ երագի՝
 էութիւնը քու ծանօթ,
 եւ կ'որոնեմ նայուածփիղ մէջ լուսաշուի՝
 դափնեխնդուն նոյն զեղումով
 եւ նոյն տենդո՛վ միանձնացած՝
 նարօտ մը սէր անփակտելի...

Ըլլա՛ս, ի՛նչ փոյթ, թէ պատրանք,
 բայց ես կը զգամ,
 որ դուն հեւքն ես բարախուն՝
 հին ցաւերու ցնորական քաղցրութեան.
 Ըլլա՛ս ի՛նչ փոյթ, թէ օտար
 եւ անանուն ձգտումներով շնչաւոր՝
 Ըլլաս էակ տարաշխարհիկ,
 բայց կը ցանկամ, որ առիւնքնս պահ մը զիս՝
 վայելչական քու յայտնութեամբ,
 դարձած հմայքն մարմնաւոր՝
 հին տենչանքիս շիրմահամբոյր առասպելին...

Թող աչքերուդ խորհուրդին մէջ լուսածիր
 գտնեմ կերպարն ամբողջական՝
 յախճապակեայ բեկորներուն անցեալիս.
 մեղակիցի մորմօճով
 բող նշանակէտը գտնեմ
 շեղագրուած տենչերու.
 եւ բմբռնեմ գոյապատմաբ ծածկագիր՝
 տառապանքի վիպայնութեան...

Զուգորդուած տեսնեմ քու մէջ՝
 իբրեւ եզրերն անբաժան
 նոյն էակից բնութեան՝
 յազքանակ եւ պարտութիւն,
 նշմարտութիւն, տարակոյս,
 հաւատք եւ վիատութիւն...

Թող վերժանուին ձայնիդ մէջ
 գրոյցները ծածկախօսի՝
 նակատագրի եւ մահուան:

Թող ներգգամ շնչառութիւնը քեզմով,
 կենսահոլով յիշողութեամբ տագնապող՝
 խղճմտանքի սազարթաշունչ այն երգին,
 որ կ'արտասուէ համբուս վրբայ
 հին աշունի մը հեւքով...

Գ. ԱՐԷԼԵԱՆ

«ՓԱԽՈՒՍ»

Ա. ԳԼՈՒԽ

1904ի աշնանամուտն էր: Անտոնին բակը բերնէ բերան լեցուն էր իր կայուածներուն բարիքնե-
րով: Հոն էին նաեւ ընտանիքին անդամները, փեսաները եւ Աննիկին փեսա-
ցուն եւ կեսուրմայր ըլլալիքը:

Տօնական մթնոլորտ մըն էր: Հանելի էր այդքան առատ բերքի եւ առա-
տու թեան մէջ թաղուիլ, հակառակ աշնան ճնշումին, որ մթնոլորտը կը լեցնէր:

Անտոն ծխախոտին շորցած շարոցները կը քննէր եւ կը դատարկէր: Ընտիր ծխախոտ էր, գեղին լայն տերեւներով եւ բուրու մնաւէտ: Լաւագոյն
շարոցները մէկ կողմ կը դնէր: Լման ձմեռ մը կար իր առջև: Ինք, իր կաւը
Այսա եւ Գարապաճազենց փեսաները, խնամիները եւ բարեկամներ պէտք ու-
նէին ծուխի: Չմեռնային երկարատեւ անդործութեան օրերուն, ծխախոտը
շատ կը սպասէր:

— Ստամպուլի աղաները ինձմէ լաւը չեն,— կը մուտաբ յիտնամեայ
Անտոն ամէն անգամ, որ ընտիր շարոց մը մէկ կողմ դնէր: Անոնք թող Սամ-
սոնի ծխախոտ ծխեն:

Կը վերցնէր Գալատուբանի ազնուագոյն ծխախոտին գեղին շարոցը,
դէմքը կը մխրճէր մէջը եւ կը ներշնչէր անոր բոյրը: Լիւթոք ներշնչու մէն ետք,
զարձակ կը կրկնէր.

— Ստամպուլի աղաները թող բնկոյղի տերեւ, պանանի տերեւ ծխեն.
Ճեղք չէ՞ այս ապրանքը Ստամպուլ զրկել:

Ճիշդ է, որ պեռական սեծիին կոյտը կը բարձրանար հետզհետէ, բայց
իր կոյտն այ կը մեծնար թէ՛ քանակով եւ թէ՛ մանաւանդ՝ որակով: Չէր մոռ-
նար հաշիւը ստորոյն նու իրցուններուն: Կար գիւղին քահանան, կար պատա-
կին ճմիւտիքը, կար Հասան Չաւուշը. կար ու կար: Ատոնց բոլորին «արդար»
բաժինը հանել պէտք էր. ասոր համար էր, որ իր կոյտը կը բարձրանար:

Երկար ու միապագազ ձմեռը ո՛ր որ էր պիտի հասնէր. որո՞ւ հողը, երբ
կար այս սքանչելի ծխախոտը:

Քիչ անդին, Աննիկի փեսացուն խաղող կը ճմէր տախտակէ խոշոր
հնձանի մը մէջ: Ետիվարին ծայրերը ծունկէն վեր բարձրացուցած՝ ան կը ջա-
նար իր ու մը ցուցադրել: Իր լայն ներբաններուն տակ, «զայլամտար» եւ
«չնդէկ» խաղողի հատիկները կը ճզմուէին եւ գուրս կու տային ամբողջ ամառ
մը իրենց բջիջներուն մէջ կապճաւորուած շարքեր, տուտ հիւթի մէջ լուծ-
ւած:

Հակայ տաշտը կ'ենեւեփէր թիչ անդին, յատուկ օճախին վրայ: Անտոնի Քաշեր խնամին, ծակ-ծակ մեծ շերեփը եւ ջրադրու մը ձեռքին, կը փանար «խօսք» Հասկցնել ուս պին, որ հասուննայու վրայ կը կարծէք եւ կը փորձէր գուրս խու ժեյ տաշտէն: Ոոյ արչաւ մըն էր: Քաշեր խնամին հետզհետե կ'արա-
 դացնէր իր ձեռքերուն շարժու մները, մինչ մի ս կողմէ հետզհետե թանձրացող ուսպը կը սպտոնար խոյս տալ կրակէն: Տարածուող բոյբը կ'աւետեր ուս պի փրփուրին ճճամանու մըր: Ատոր համար ալ, նոյն եւ դրացի թաղին մանուկ-
 ները գափնիքի ճիւղով եւ տերեւով յատուկ գգայիկներ պատրաստելու վրայ էին:

Անտոնին կինը, Քաթուն, կարծէք գողու նի, խաղողի հի թէն մասեր կը վերցնէր գտիչ կաթնային մէջէն եւ կը շեցնէր սպիտակ տոպրակի մը մէջ, որ կախուած էր մօտի թթկնիին մէկ ոստէն: Քացախ կը պատրաստէր Քաթուն: Ահագին թթուալի պէտք պիտի ունենար այդ ձճեւ. մէկ-երկու ամիսէն Աննիկ հարսնու թեան պիտի երթար վերի թաղը, Եղեկէին: Որքան թթուալ պիտի սպտէր:

Հարսանիքին նախատեսութեամբ, Անտոն կարաս մը խաղողի, կարաս մըն ալ թու դի օղի մէկ կողմ դրած էր անցեալ տարու ընէ:

Կարապետ տղան, մէկ հատիկ տղան, զբաղած էր գինիի ապակեայ Հակայ կարասները հականեխելով: Ծծմբափոշին այրելով կը մացնէր կարասէն ներս, այնոր կապոյտ բոցով արտադրուած ծծմբային կազով մանրէնէն ձեր-
 բազատուելու համար: Տարսնի գոլէճի ու սանոց էր Կարապետ: Հոն սորված էր հականեխու մի այս ձեւը եւ, առաջին անգամ ըլլալով՝ կը կիրարկէր գայն Քեասպի այս խուլ անկիւնին մէջ:

Ամբողջ տարի մը ապակեայ այս կարասներուն մէջ պիտի եփէր գինին եւ համովնար: Իսկ այս տարու ան խմուելիքը անցեալ տարի պատրաստուած էր:

Անտոնին ամուսնացած մէկ աղջիկը, Ռոզան, նոյն առաւօտ որոաց-
 ւած գիրուկ թոշու նները կը փետտէր: Անոնց միտք, գափնիքի պտուղի բոյբով օծու ն՝ պիտի ծառայէր տղոց խրախճանքին: Տղաքը բարի ճանապարհ պիտի մաղթէին Կարապետին, որ երկու օրէն պիտի մեկնէր դէպի Ազրբէյը Հոյսին՝ Տարսնի գոլէճը: Արդէն միասնաբար որոացած էին թոշու նները, անագին ազճու կով լեցնելով Հակայ ձորը: Ռոզա կ'անհիծէր իր բախուր անոր համար, որ թոշուն փետտել չէր սիրէր, եւ անաւասիկ իրեն վիճակուած էր այդ գործը: Եթէ չըլլար Կարապետ եզրօր սէրը, մէկ թոշուն իսկ չէր փետտէր: Իսկ հիմա կ'աշ-
 խատէր: Մանր եւ փափուկ փետուրներն ալ յատուկ տոպրակի մը մէջ կը լեց-
 նէր, Աննիկի հարսնու թեան բարձին համար:

Կարապետի շատ մօտայնու մեկնու մն էր, որ ու բախու թեան մթնոլոր-
 տը կը խոռովէր սրտի թեթեւ ճճլու մով:

Մէկ հատիկ տղուն Տարսն մեկնու մը ծանր կը կշտէր Անտոնին սրտին վրայ, բայց եւ այնպէս, թէ՛ իր եւ թէ՛ տղուն ու սու միատենչու թիւ նր կը յաղթա-
 հարէր զգացական արգելքները: Կարապետին մէջ ուսման սէրը կրակ էր. պէտք էր զոճացում տալ այդ տենչին:

Անտոնի երկրորդ մասնազու թիւ նը կու պար իր Աննայէն, որ հինգ ազ-
 ջիկներուն մէջ իր մէկ հատիկն էր: Կրտսերն էր Աննան եւ իրմէ առաջ տակա-
 շին երկու քոյրեր ուներ, քայց ինք, պզտիկ Չատիկը առաջ բերելով՝ քոյրերուն կարգը խլած էր: Անտոն խորունկ սիրով մը կապուած էր Աննիկին: Այդ նշան-
 տուքը էր սրտովը չէր. ոչ ալ Աննիկի սրտովն էր: Աննիկ, պարապաներու բե-
 րու մով՝ նշանուած էր վերի թաղէն Եղեկէին հետ: Հայր ու աղջիկ այս մասին իրարու հետ խոսած չէին, բայց իրարու սրտերը շատ լաւ կը կարգային:

Բարձրահասակ, կարմիր այտերով, մեղրապոյն խոշոր աչքերով՝ ան

առաջին իսկ ակնարկով կը գրաս էր գիմացիներն սիրտը: Անբացատրելի բան մը ունէր սա աղջիկը: Համբար գիտի որն սահմանէն անդին տարածուած էր: Ճամբին անցնող երթտասարդներուն նմուշազն էր դոնկ աչք մը տեսնել զայն, նոյնիսկ նշանուելն ետք: Նշանածը նախանձէիներու շարքին անցուած էր առաջին մէկ օրէն: Տղան պարզապէս երջանիկ էր: Մա՛նաւանդ երջանիկ էր Եղեկէլին մայրը, իր մէկ հատիկ տղուն այսպիսի շնաշխարհիկ հարմարուած զգումը բլլալուն համար: Անտոն չէր ուզած Աննիկը տալ: չէր ուզած կարգը խանդարել, բայց Եղեկէլին ծնողները պնդած էին եւ դրած նշանը:

Այս խնդրին մէջ մաս ունեցած էր նաեւ Աննիկին մայրը, որ Եղեկէլին բարեկեցիկ ծնողներ ունենայր, անոր մէկ հատիկ բլլալը մեծ առաւելութիւններ նկատած էր: Ձեռով մը, գաս ազրած էր եւ գործը յաջողցուցած, հակառակ Աննիկի լուր բնդ գիմուքեան:

Երկու տարի անցած էր նշանուածքին վրայէն եւ հարսանիքին թուականը ճշդուած էր: Երկու ամիսէն, երբ զաշտային աշխատանքները վերջացած բլլային, տեղի պիտի ունենար հարսանիքը: Բայց ի՞նչ հարսանիք: Պաշտօն խնամքին երեք խոյ եւ չորս ուլ պատրաստած էր: Վեց ամիսէ ի վեր աչքի լոյսի պէս կը խնամէր եւ կը պարարտացնէր զանոնք: Օղին Որոնդէս գետին պէս պիտի հոսէր: Նոյնիսկ գնումը թմրեցնողներու հետ պայմանաւորուած էր: Ձոյզ թմրուիկ պահանջած էր: Տղուն շայտարք ոչ թէ Աննիկէն, այլ Իսկէնտերունէն փերելէ տուած էր. դու ա մետաքս: Հարմարութիւն հազուադէպ ալ արդէն իսկ խօսակցութեան առակայ դարձած էր: Վերի եւ վարի բոլոր թաղերուն աղջիկներուն խօսակցութեան միակ նիւթը Աննիկի հարսանիկան հազուադէպ էր այդ ամիսներուն:

Իսկ Անտոն հիմա չէր ուզեր հնձանին կողմը նայիլ: Եղեկէլ ուժ կու տար իր ներքաններուն եւ սրունքներուն: Ազուոր տղայ էր. շա՛տ ազուոր, բայց Անտոնին սրտովը չէր այս տղան: Թէ՛ կը մեղքնար գիտէր եւ թէ հակակրանք կը զգար անոր հանդէպ: Ինք եւս չէր կրնար բացատրել այս հակակրանքին պատճառը, բայց եւ այնպէս օրէ օր կ'աւելնար անիկա: Եթէ կարենա՞ր ետ բնել տալ նշանը, բայց զժուար, նոյնիսկ անկարելի բան էր անիկա: Ամբողջ երկու տարի փեսացու եւ ինամի խաղցնելէ Լուք, ի՞նչ պիտի ըսէին մարդիկ:

Անտոնի կիներ ու բախ էր այս կարգադրութեամբ: Անճաշակութեամբ կարելի չէր մեղադրել գիտէր: Բնա՛ւ. Եղեկէլ լաւ տղայ էր: Պաթուս ինքզինք հպարտ կը զգար Պաշտօնի պէս խնամի ունենալուն համար: Հապառակներէ՛րը: Մարդիկը պէտք էր ցածնէն աւելի ոսկեղէն բերած էին: Արէլինց Հաննոյին հետ միջնեւ իսկէնտերուն զացած էին ոսկեղէն բերելու համար: Օղերը, մատանիները, ապարանջանները, ճակտի մանակար՝ օքանչիլի էին: Հոյսերուն մէջ կը փայլէին եւ Աննիկի կարմիր թուշերուն յաւելեալ հմայք կու տային: Խնամքները, մեծ ու փոքր առիթներու, ոչ թէ ափսէներով կը բերէին թերթուշի, (փաղաւայի) տեսակները, այլ՝ նոյնիսկ պղինձով: Պաթուս կը զանդատէր, կը խնդրէր, որ այդքան լոտլու թիւն չընէին, բայց խնամիները յաջորդին աւելի շատը կը բերէին: Թէ՛ տեսական եւ թէ՛ նախնական մտքուր գործ կը բերէին ու կը բերէին: Պաթուս օրական եօթը անգամ կ'աղօթէր, Երկնաւորին փառք տալու համար: Որո՞՞ ձեռք կ'անցնէր այսպիսի փեսացու:

Իսկ Աննիկի ընկերու հինկը օրն ի օր ն երանի կը կարգային իրեն: Ամէն շերանքի՛ն հետ, կարծէք թէ շերտ բլլարք կ'ըսէին անոնք:

Սակայն Աննիկ, հակառակ այս բոլորին, գո՛ւ չէր. իր բախտը զմիտ բան մը կը նկատէր: Ձեր կրնար ինք իրեն բացատրել իր կեցուածքին պատճառը, բայց այդ էր մերկ իրականութիւնը: Եւ ո՛րքան անցնէին օրերը, այնքան աւելի կը խորանար հակակրանքը իր մէջ: Դժուարագոյնը այն էր, որ այս հակակրանքը չէր կրնար բացայայտել: Բարեբախտաբար, ըստ ընկալեալ սովոր

րու թեան, նշանածները արտօնուած չէին առանձնանայու եւ կամ խօսակցել-
լու: Հակառակ իր բմբուռն մտերուն, գո՛չ էր այդ սովորու թեանն. կր խնայու էր
իրեն նշանածին պէս մարդու մը հետ յարաբերիլ...

Շատ կ'ու գէր հօրը բացուիլ: Հայրը արտակարգ սէր կը ցուցարերէր
իրեն հանդէպ: Մասնայատու կ'ընէր մը կար երկու քին միջև: Ամէն անկամ, որ
չու կայ կամ Անտիոք երթար, առաջին անգամ Աննիկին նուէրը կը պատրաս-
տէր: Աննիկ յատու կ'առնէր ազատանքով մը կը դիմու որքը հայրը: Հակառակ
այս իրողութեան, ազնիւր պէտք եղած քաջութիւնը չկուտու հօրը բացու էլու:
Իսկ հայրն ալ չէր բացուէր ազնիւան, վախճալով, որ հասանարար իր գրգայու մ-
ները կը խարթին գինք:

Աննիկ, որքան որ իր կէցուածքը անբացատրելի կը գտնէր, միւս նոյն
ատեն կային կարգ մը պատճառներ, որոնք կ'արդարացնէին իր կէցուածքը,
անչու շտ իր գրտակիցին եւ կամ թերեւս ենթագրտակիցին մէջ:

Աննիկ խորապէս կ'ատէր իրենց պիղը: Երկար ու խոր ձորի մը մէջ ին-
կամ՝ այս գիւղը աշխարհէն կտրուած, անտանելի տեղ մըն էր: Մինչ իր համա-
գի: զացիները, նոյնիսկ բնտանեկան պարագաները, խոր սէր ունէին գի: դին
հանդէպ: Նոյնիսկ իր կարապետ եղբայրը, Տարսոնի պէս պոլճական քաղաքին
մէջ կը տուտայէր իր գի: դին կարտով: Կը յիշէր լեռներուն անբացատրելի
մանիշակագոյնն ու կ'պոյտը: Մայրամուտի ոսկին, որ կ'օձէր լեռ ու ծով,
նոյնիսկ ու սման իր տեւը կը գանդ աղէցնէր կրքմէ: Կարաւներուն, ցախա-
բիկներուն, լուսերուն եւ տեսակ-տեսակ թռչու ններուն, որոնք այնքան առատ
էին Գայատուբանի ձորին մէջ, հետոս որ Տարսոնի մէջ, իր ականջները կը լեց-
նէին իրենց կարգ ճկով եւ գայլայլներով: Կը յիշէր վայրի բնութեան մէջ իրենց
կատարած որտորութիւնները եւ կը տատայէր:

Իսկ Աննիկ, չքնաղ ազնիւր Անտոնի, գրեթէ մինակը կ'ատէր այդ ձորը,
որուն սմանախույ մէկ անկի: Երբեք ան չէր իրենց: Իրենց թաղը ունէր իր
մեծնային քառասու նըք, որ շատ աւելի անտանելի էր, քան Մեծ Պահլէ քա-
ռասու նըք: Մա, Տեառնդատալին նախորդող քառասուն օրերն էին, երբ
արեւը ոչ իսկ ճառագայթ մը կը նետէր Անտոնի տան կողմը: Հետուէն կ'երևէր
լոյսը, բայց անոր ոսկեգօծ ճառագայթները կը գրգայուէին իրենց: Ահա ինչ
ծմակ կ'ըլլար այդ չըջանը: Գե՛մքերը կը գայկանային. մարդոց տրամադրու-
թիւնները կը խանգարուէին: Իսկ Աննիկ ու գրակի կը սարսափէր այդ պաղ
քառասու նըքն. ատոր համար, փոքր տարիքին, աշխուժով կը մասնակցէր
Տեառնդատալի խաղերուն. հակառակ ձորը բազմաթիւ պատուիրաններուն,
նոյնիսկ տոց հետ կրակին վրայէն ցատկելու մրցումին կը մասնակցէր:

Հորիցոնագուրիկ ձորը կը ճնչէր, ծանր կը ճնչէր Աննիկի սրտին վրայ:
Արեւը հագիւ ծագած, կը գիժէր գլկի ծով: Կ'ու գէր անոր լոյսովը յազենայ.
կ'ատէր ձէթի ճրագը, որ կարծէք արեւ ու լոյսին ծագուն էր:

Իսկ լեռները, կարծէք ամէն վայրկեան վրան պիտի իյնային եւ թազէին
գինք հոկայ ժայռերուն տակ: Երբեմն կը կարծէր, որ շնչահեղձ պիտի ըլլար:

Իր միակ միտքարու թիւնը ծովն էր: Ի՞նչ ծով, ծովու ետանկիւն պատատ
մը, որ իրենց քակէն կ'երևէ էր: Լսած էր, որ իր տեսածը հոկայ ծովուն մէկ շատ
չնչին պատատիկն է. եւ թէ՛ մեծ ծովուն կը յաջորդէր այլ ծով մը, շատ աւելի
լայնատարած եւ կատարի: Նոյնիսկ գիտէր, որ այդ ուղիներուն միւս ափին
վրայ կը գտնուէր հոկայ երկիր մը, անսահման ու մեծ: Իր համապիղացիներն
ոճանք հոն գացած էին. ոճանք վերադարձած էին: Ա՛խ, եթէ ինք եւս տղայ ըլ-
լար. կ'երթար հոն, գրամ կը հասար, այնքան շատ, որ վերադարձին, վերերը
տեղ մը, ո՛չ միայն տուն մը, այլեւ նոյնիսկ թաղ մը կը կատուցէր, իրեններուն
համար: Այսպիսի խենթ երազներ կ'ու նենար երբեմն: Որքան քաղցր պիտի ըլ-
լար հասնիլ ծովուն, բնդարձակ ծովուն:

Իսկ իր նշանածը այլ երազ ու ներ. առկա ճիշդ պիտի ըլլար ըսել՝ իրակա-
նացուցած էր իր կրազը: Վերի թաղին մէջ մեծ տուն մը շինած էր իրեն իր հայ-
րը: Ամբողջ թթաստան մը ատաղձի փրածել տուած էր. տոկուն տախտակա-
մած, տոկուն էր զեղեցիկ զուտներ եւ պատու հաններ շինել տուած էր հայրը:
Այդ տան մէկ բան կը պակսէր՝ Աննան. ան այդպէս ամիս հոն պիտի մտնէր-
այդ ձեւով կրազ պիտի շմար իրեն այլևս. ամէն բան, որ զեղեցիկ էր, իրը
եղած պիտի ըլլար:

Աննիկ այլ բան կ'երևակայէր: Նախ այդ տունն էր ծովու այդ պատա-
ռիկն ալ չէր երևի եր. հոս, իր հօրը տունն էր գոնէ այդ մէկը, փոյթ չէ թէ իրեն
երազ, կը տեսնուէր: Փեսացուին նորաչէն տունը եւ յաւելեալ ոսկիները պար-
զապէս առեւտրով պիտի ճնշէին իր վրայ: Պիտի խեղդէին իր երազները:

Ո՛րքան մտանար նայեմք ամիսը, այնքան առեւտրով կը կծկուէր սիր-
տը: Եւ հիմա, երբ իր շուրջ կեանքը կ'նոսրէր, ինք, առանց սրտի, նստած էր
իր գործին...

Նեղիկ ճամբու նկարին, թիւ մը բարձրը, նուրի նակազ զէջ մը լեցուցած
էին: Տեսաւ-տեսակ նուրերուն կոյսը խարոյկի ապաւորութիւն կը թողուէր:
Աննան նստած էր զէջին զիմայ եւ կը գատէր տարբեր տեսակի նուրերը:
Քաղցր նուրերը, կանաչ կեղևով, մէկ կողմ կը դնէր. ասոնք շատ տոկուն ըլ-
լալով, մինչեւ գարուն կը պահուէին: Թթու նուրերը ատանձին կոյս մը կը
Պագմէին. ասոնք վազն իսկ պիտի վերածուէին կիտրոնը փոխարինող համով
հիւթի մը: Թթու ալ նուրերը երբորդ կոյս մը կը կազմէին. ասոնք եւս, իրենց
խոշոր ու կրակի գոյն հատիկներով, ու տեղու համար կը պահուէին: Աննան
ու տուելիք նուրերը, քաղցրներն ու թթու ալները, շարոց-շարոց կը կապէր:
Շարոցները ունէին նաև զեղապիտական արժէք: Աննա, շատ ընկալեալ սովոր-
ութեան, իրեն հետ պիտի տանէր, իրեն արժագան, շարոցներէն մաս մը: Այս
սովորութիւնը սակայն, անդուհանրով կը լեցնէր իր սիրտը: Կը փափաքէր, որ
բոլոր նուրերը երթային, իսկ ինքը մնար եւ ծովու պատկերէն շնորհակարտ...
Թէև կուզէր միանգամայն զիջուի իր հոգեկան ձեռնարկին ծախսութեան քառա-
սունքի այդ քառարանէն ու երթայ ընդարձակ հորիզոնով տեղ մը, բայց ծո-
վուն պատկերը չկորսնցնելու համար, յանձն կ'առնէր մեայ հօրը տունը...

••

Վարէն՝ ջորիներու բոժոժները արթնցուցին Աննան իր երազին: Ծովու
թաղէն միջապատուց կը փոխադրէին՝ հնձան տանելու համար: Անոնք, ջորի-
ները վեր, վեր կ'երթային. կ'երթային տեղ մը, ուր հորիզոնը լայն էր. լեռները
օրն ի բուն վրայ իջնալու սպառնալիքը չէին կարողար. ընդհակառակն, թիւ մը
հետոն կանգնած՝ երազներդ կ'օրորէին: Աննիկ, կարճ ժամանակամիջոցով,
երկու անգամ գացած էր վեր եւ սիրած էր գայն: Որքա՞ն պիտի ուզէր, որ ջո-
րիպանը զինք եւս վեր տանէր եւ արեղակին թիւ մը առեւտրով մտնէր:

Երիտասարդ, թիկնեղ ջորիպանը գլխիկը կը հետուէր իր գոյգ ջորիներ-
րուն: Ան չուներ Եղեկէին բարեմասնութիւնները: Աննան չէր ճանչնար գայն-
լուստ էր իր մասին: Գիտէր, որ համեմատաբար բարեկեցիկ ընտանիքի զաւակ
է: Նաև գիտէր, որ իր նշանածին մէկ բարեկամը փոխուցուցած էր ջորիպանին
նշանածը: Ատոր համար, ջորիպանը տեսուր երգեր մուտայով կ'երթէր կէտ
նեղիկ ճամբէն:

Ձեռք պիտի ի՞նչ բանէ մզուած, այդպէս, գրեթէ բնազդաբար, Աննիկ
նուր մը նստեց ջորիպանին ուղղութեամբ: Նուրը ինկաւ եւ փշուռեցաւ:
Անակնկալի եկած՝ ջորիպանը գլուխը վեր առաւ. երկրորդ նուր մը կ'իջնար
առջևը. աս այլ ճեղքուեցաւ եւ կարծիք ջուրը սկսաւ հոսիլ:

— Վա՛յ անճարակ, բռնե՛, բռնե՛:
 Աննիկ երբորդ նուս մը եւս նեակց: Նուսը օրեկանին մասներուն
 ծայրը պակալով ինկաւ գետին:

— Չո՞՛ր կ'ուզես բոխր: սպասե՛ վայրկեան մը:
 Աննա փութաց օրհոր, մեռալով զոչըրդու բաշտեց եւ, ջրաղդու մը լից-
 նելով՝ տարաւ օրեկան Քերորին:

Այս վերջինը, անակնկալի եկած եւ շփոթի մասնուած, սպասած էր Ան-
 նային:

— Եստ չփերու շանն էս եղեր,— բաս: Աննա,— նշանածդ փախցնելու
 իրաւունք ունին եղեր. երբ նուս մը շնա կրնար բռնել, նշանած ինչպե՛ս պիտի
 պահու: Խճե՛ եւ վեր կկուր: Հիմա փրփուր պիտի հանեն մերինները: Եկո՛ւր
 կեր. նուս չկրցար բռնել, պոնի փրփո՛ւր կեր:

Աշխատանքի իր հազուատին մէջ՝ Աննա, վայրենի գեղեցկութիւն մը
 ունէր: Անոր աչքերուն հմայքէն ձերբազատուիլը դժուար բան էր: Քերոր,
 աակաւին իր շփոթէն չէր սթափած. հետեւեցաւ այս աստօրինակ հրաւերին:

— Զորիներդ կապէ՛, ա՛յ աղայ. անոնք այ կրնան փախիլ:
 Զորեկանը կապեց օրեկանը եւ հետեւեցաւ հրաւերին...

— Փրփո՛ւր, փրփո՛ւր, հասե՛ք, սուկի՛ փրփուր:
 Կարոն էր, Աննիկին կզրայր: Ռուպր եփած էր եւ փրփուրը կր հանէին:

— Եկո՛ւր, ինծի յափ թաղցր է՛. եկուր կեր,— խայթեց Աննան: Իսկ ջո-
 թեկանը, հլու—հնազանդ կը հեակէր այս աստօրինակ աղջկան:

Վերը, կրակի վրայի հսկայ տաշտէն պարպուած ուսպր մեծ ջրաղդու—
 մով կը խառնէր Կարոն: Կը լեցնէր ջրաղդու մը եւ կամաց—կամաց ձեռքը վեր
 բարձրացնելով, տաք ուսպր ետ տաշտին մէջ կը թափէր: Զրաղդու մը իր բարձր
 հասակէն աւելի վեր կը բարձրացնէր եւ կը պոռար. «Փրփո՛ւր...»: Ռուպրն
 ջրփոթումէն կը կազմուէր զեղին փրփուրը:

Քիչ անդին, փոքրիկները թաղին, զափնիի տերեւներով շինած իրենց
 դաշտիկները ձեռքերին բռնած՝ անհամբեր կը սպասէին: Հապի ջրաղդու մը
 վար դրած, Կարոն թոյլ տուաւ, որ փոքրիկները մտանան: Անհամբերութենէն
 ջրային զարձած փոքրիկները յարձակեցան փրփուրաղէզ տաշտին վրայ եւ
 սկսան ճաշակել փրփուրը: Երկրորդ անգամ մը եւս փրփուրաց տաշտը Կարոն
 եւ փոքրիկներուն կերցուց:

Մինչ այդ, տանտէրը, Անտոն, անկեղծ ջերմութեամբ մը ողջու նեց Լեր-
 առտարդ ջորեկանը: Անոր հորը լաւ ծանօթ էր. ծանօթ էր նաեւ անոր ապրած
 ողբերգութեան: Աղուսը շարոց մը ծխախոտ վերցուց եւ մեկնեց Լերառտար-
 դին:

— Գիտե՛մ, որ դուք այ լաւ ծխախոտ ունիք, բայց այս մէկը, Գայատու—
 բանի ծխախոտը, ինչպէս գիտես, բացառիկ է: Տար ծխէ եւ միշտ յիշէ գիս,
 տղաս. հայրդ շատ լաւ մարդ է. իմ կողմէս մասնաւոր բարեւ կը տանին իրեն:
 Միտան շատ լաւ օրեր անցուցած ենք:

— Ենորհակալ եմ, Անտոն է՛մքի. թող Աստուած ու՛՛՛՛ չձգէ: Սքանչելի
 ծխախոտ է՛. շա՛տ փառաւոր բան է:

— Անուշ սրտով ծխես, տղա՛ս: Մեր պետութիւնը Ստամպուլ կը տանի
 Գայատուբանի մեր ծխախոտը, այնտեղի փաշտներուն եւ հանրամենքուն հա-
 մար: Անոնք թող ուրիշ բան ծխեն. լաւ աղոյն շարոցները քեզի պէս լաւ մար-
 դոց կը վերցնեն նախ, ապա՝ իմ ընտանիքիս: Անուշ լլլայ, տղա՛ս: Անցիք,
 փրփո՛ւր կեր. համոզ բան է:

— Ենորհակալ եմ, Անտոն է՛մքի, թող Աստուած զիւր պէրէքէթըս ան-
 պակաս ընէ տունէդ: Եստ շնորհակալ եմ:

Աննան իր նուսի գէղին անցած էր: Հիմա իր սայտերը աւելիով շատա-

յ ու նա՞մ էին. երկու կրակներ՝ Աննան և նուսի կոյտը գե՛տ դիժաց նստած էին:

Քերոր, ջիշ ժը տնտնաց. կարձեք չէր ուզեր մօտենալ փրփու բին: Այս սիրայիբ բնդու նկու: թիւնը տակնու վրայ բրած էր գինք: Անտոն ոտքի էլլաւ և, ձևոքը Քերորի ուսին զրած՝ մօտեցուց տաշտին: Հի՛մա, Աննիկին փեսացու նստած էր ջրաղցու ժը և փրփու բը կը դիզէր տաշտին մէջ: Աս ալ Հասակա որ էր. ուս պը ջրփիժելով վար կը հոսէր և փրփու բը կը բարձրանար տաշտին մէջ: Ու թանկին ն խոռոչիկներով փրփու բի Հասիկները իրարու վրայ դիպու էլով կը բարձրանային: Քերոր բարևեց ներկաները: Անտոն պատուիրեց լաւ հող տանել Քերորին, որովհետև հօրենական բարեկամներ էին:

Ու բիշներու հետ մօտեցաւ տաշտին և ղափնիի տերև: ով ժը սկսաւ քաղել փրփու բը և ուտել: Փրփու բին խոռոչիկները կը յիշեցնէին Աննիկի լայն ու խորու նկ աչքերը: Ետտ Համով էր, քաղցր էր, քա՛ղցր: Իսկ Աննա ինքզինք այդ փրփու բին չափ քաղցր նկատած էր...: Դժուար բան էր այդ փրփու բը ուտել. քաղցրութիւնը սիրտ կ'առնէր...: Հազիւ քանի ժը տերև փրփու բ կերած՝ քաշտնեցաւ: Տակնու վրայ էղած էր: Ի՛նչ բակ ուղած էր Աննիկ: Նշանուած աղջիկ ժը, ի՛նչ չամարձակու թեամբ իր քաղցրութիւնը յայտարարած էր: Անտոնի մարմնութիւնն ալ շփոթեցուցած էր գինք: Ինք յաճախ այդ ճամբէն կ'անցնէր: Իր և Անտոնի փոխանակած բարևները արագ և սովորական բաներ էին: Իսկ հի՛մա բացատրիկ ջերմութեամբ բարեւած էր գինք Անտոն: Արդեօք կը մեղքը նա՞ր իրեն Անտոն:

Աննիկի կեսուր բլլայիբը նկատած էր աղջկան շարժումները: Չեր տեսած նուս նետելը, բայց հետևած էր անոր, երբ ջուր տարած էր ջուրեպանին և ապա առաջնորդած էր զայն վեր: Անհանգիստ էղած էր, բայց հանգստացած էր, երբ Աննիկ սուսիկ-փուսիկ վերադարձած էր իր գործին, առանձին ձգելով Քերորը: Ինչ որ կ'անհանգստացնէր գինք, այն էր, որ ջուրեպանին նշանածը փախցնողը իր տղուն բնկերն էր. իսկ իր տղան մաս ունեցած էր այդ գործին մէջ: Ու բիշները չէին գիտեր, բայց ինք յա՛տ լաւ գիտէր:

Եզնկէլ, յանցապարտի պիտակցութեամբ, Քերորին մօտենալը տեսնելով, ջրաղցու ժը ձգած և հեռացած էր. ջուր խմելու պատրուակով: Այս բոլորը արագ կատարուած էին:

Քերոր կ'ուզէր վայրկեան առաջ հեռանալ, հակառակ իրեն վերապահուած ջերմ բնդունելութեան: Չեւով ժը, կրցաւ վերադարձի ճամբան բռնել: Աննիկ նստած էր նուսի գէզին առջև, քաղցրը թթուէն զատելու համար...: Քերորի միակ էլքը այդ կոյտի առջև էն կ'անցնէր:

Աննիկ, խոշոր կարմիր նուս ժը մեկնելով տղուն՝ շատ արագ բսած էր.

— Քիչ առաջ չկրցար բռնել նետածներս: Առ այս մէկը. լա՛ւ բռնէ. աէ՛ր եղիբ անոր: Եթէ փրփու բը հաւնեցար, վաղը գիշեր էկուր, կը սպասեմ: Մեկը չե՛ս. քու նշանածդ փախցուցին, գուն ալ զի՛ս փախցուր...

Քերոր հազիւ թէ կրցած էր իրեն երկարած նուսը պահել ձևոքին մէջ: Չէր հաստատար լսածին: Վազելով իջաւ վար: Ետապուստած էր. ձևոքերը կը դողային. գժուարութիւն ունեցաւ ջորիները արձակելու:

— Ես վաղը գիշեր կը սպասեմ...

Եւ Աննիկ շարունակած էր քաղցրը թթուէն զատել:

Աննիկին կեսուր նկատած էր նուսին յանձնու ժը: Անպատկառու թիւն էր սա: Նշանուած աղջիկ, որ իր նշանածին հետ խօսելու իսկ իրաւ ունք չուներ, ուրիշին տղուն նս՛ւտ կու տար. կարմի՛ր, խոշո՛ր նուս: Եւ ի՛նչ տարբերութիւն նուսին և խնձորին միջև...: Գործը ձգելով մօտեցաւ Աննիկին: Աննիկ, իրրև յարգանքի նշան, բողբ իջեցուց աչքերու ն վրայ: կը շարունակէր իր աշխատանքը: Քիչ ժը տնտնայլ ետք, վերադարձաւ կեսուր բլլայիբը: Արդեօք նկատած է՞ր ճամբու ն վրայի փշուտ նուսերը:

Յաջորդ օրը ոչ մէկ արտասովոր բան պատահեցաւ, մա՛նաւանդ ցերեկը: Քսանեւորդ եւ վերջին տաշտ ուսւար կէսօրին վար առնուեցաւ: Փրփուր ու տողները շատ էին. չէ՞ որ վերջին տուշան էր սաւ. ամբողջ տարի մը սպասել չարկ էր:

Գինիի կարասները, թիւով երեք Հատ, բերնձ բերան լիցուած էին եւ պահ գրուած մատանին մէջ: Ամբողջ ամիս մը պիտի ճեփէր ինքնիրեն: Գալ տարի միայն պիտի խմուէր անիկա: Կարասների Տարսոն ճամբու ելնն տարի մը հառ, այդ գինիով պիտի ուրախանային եւ տխրէին: Երկ գիշեր, մինչեւ ուշ առնեն, աղաքը իրենց որսացած եւ Աննիկի քրոջ՝ Ուոլային փետտած գիրուկ թոշուներով խմած էին անցեալ տարուան գինին: Հիմա մէկ տարի պիտի սպասէին նոյն արարողութիւնը կրկնելու չամար: Անկէ ինն ամիս հառ, Կարասների պիտի վերադառնար բարձր վիայական մը շալկած: Որքան մեծ երազ էր սա...

Աննիկ, Կարսորդ օրը, մինչեւ ուշ երեկոյ, կրցած էր նուսի չակայ զէզը կիսել երկու քի: Ուսու ելիքները, շարոց-շարոց կապուած, կախուած էին տան պատէն եւ մեծ թթենիին վրայ, արեւջրու ելու չամար: Երկու օր հառ մաս մը իր նոր տունը պիտի զրկուէր, իսկ մնացեալը չօրենական տան գարգը պիտի դառնար:

Առասա, քիչ մը կանուխ, տնեցիները, Աննիկի կեսուր ըլլալիքը եւ զրացի մէկ-երկու կիներ թթու նուսերը թօթուեցին: Կիսուած նուսերը կ'առնէին, նոնենի կարճուկ եւ Հասուրիկ գաւազանիկներով, բուժ ձայն մը չանկուով, կը թօթուէին գանձը: Բնութեան զեղեցիկ ճարտարապետութեամբ կառուցուած Հասուրիները կը լիցուէին տաշտերուն մէջ: Տաշտերը, խորքին մէջ, կը լեցուէին կրակով եւ ոչ թէ նուսի Հասուրիներով՝ տմբ, տմբ, տմբ...

Աննայի կեսուրը թոյլ շատու, որ իր Հարսնցուն նուս թօթուէր: Նուսին չեաքը Հազու ստներուն վրայէն բնաւ չէր ելլեր, իսկ մարդկային մարմնին վրայէն, մա՛նաւանդ ափէն, ելլելու չամար շատ ժամանակ կ'ուզէր: Աննա Հարս պիտի ըլլար, Հարկ էր, որ Եզեկէին Հարսնցուին ձեռքերը սպիտակ ըլլային, Բամակուսէն բերուած Հինային չամար...

Այդ գիշեր, Կարասների եւ բնիկները երկրորդ խրախնանք մը կազմակերպած էին: Ձէ՞ որ Կարսոն Հարսանիքին ներկայ պիտի չըլլար:



Անտոն թէ՛ ուրախ էր եւ թէ տխուր: Ուրախ էր, որովհետեւ իր ազան պիտի դառնար ուսուսմական: Այդ երազին չամար ինք պատրաստ էր ամէն զոհողութեան: Պէտք ըլլար, արտ մը կը ծախէր, միայն թէ ազան մատով ցոյց տրուէր: Տխուր էր բաժանու մին չամար: Մա՛նաւանդ՝ որ իր ամենասիրելին, Աննան Հարս պիտի ըլլար, Կարսոյին բացակայութեան...

Յուր սանի մը մէջ փառասորապէս Համեմուած եւ եփած վայրի նապատակը իր ձեռքով դրաւ սփոռցին մէջտեղը: Բաժակ բարձրացուց աղու ն եւ բնիկներուն կենացը, եւ իր արցունքախառն բաժակը պարպեց միակ եւ երկար ու մարմ մը եւ Հեռացաւ: Հարկ էր, որ աղաքը առանձին մնային...

Պահ մը լուրիկ հառ, աղաքը սկսան երգել: Առաջին անգամն էր, որ այդ երգը կ'երգուէր գիւղին մէջ...

Իրրիւ արժիւ սաւառնում ես...

Անդրանիկին անուրը զեռ շատ այ ծանօթ չէր պիզացիներուն: Դեռ Հայ Յեղափոխութեան արձագանքները նոր կը Հասնէին այս խուլ անկիւնը: Դեռ Սասունը իր թօթը ըսած չէր...: Դեռ Էրզրու մին ուր ըլլալն իսկ շատե-

բուն յայտնի չէր: Բայց էրպրոմ ըն Ննչած ձայնին արձագանդները կը կրկնուէին այդ գիշերը:

Քոյի սենեակին մէջ Աննա, մայրը եւ քոյրերը արթուն էին: Կր չեւտէին տղայ իրախնայքին: Եւ շամիչ կը մարտնչէին...

•••

Ջորեական Քերոյ տուն ն հասած էր քայլամուտը: Ջորինները իրենք աստիճանորդած էին պինջ: Բեռները վար ասաւ Նոֆերին ձկնի Ննձանին առջև: Ջորինները տարաւ-կապեց արտաին մէջ: Առանց տուն մտնելու, զնաց ընկերոջ՝ Նշանին: Չար բախտն, ան ալ տունը չէր: Կ'ուզէր պարպուիլ Քերոյ: Արտա պիտի պայթէր, այնքան լեցուն էր: Նշանածին առեւ անպու մը մեծապէս ընկճած էր գիշեր, իսկ Աննային չբաւ էրր տակնու վրայ բրած էր սիրտը:

Չզիտցաւ, թէ ինչպէ՞ս իրիկուն եղաւ եւ ընկերը տուն եկաւ: Պլուխ գլխի տունն էր Քերոյ պարպեց իր սիրտը: Ուրիշին առջև չէր համարձակեր այդ պիտի բան ընել: Բնականաբար դարձացած էր Աննիկի վարձու նքն: Անշուշտ բնաւ իսկ չէր մտածեր Աննիկի չբաւ էրին երթալ: Ի՞նչ տարօրինակ չբաւ էր էր այդ:

— Վայ է՛չ,— դայրացաւ ընկերը,— եթէ ինձի ասանկ բան բսած ըլլար, ես հարսնցուս կը ձգէի եւ իրեն, այդ սվայրենին աղջկան կ'երթայի: Վաղը գիշեր այս գործը զլուխ կը հանենք: Պուն չոյ շընես:

— Այդ աղջիկէն կը վախնամ, անոր չես ապրիլը գ մտար է:

— Բնաւ ալ չվախնաս: Այդ վայրենիները շաքարի պէս կ'ըլլան:

— Ինչ բսաւ, որ փրփուրն ալ իրեն պէս քաղցր է:

— Մարդ եղիբ, մարդ. ես ամէն բան կը կարգադրեմ,— բսաւ՝ ըրենին ջուրերը հագի զսպելով:

Ետզորդ օր, Քերոյ ուշ արթնցաւ: Ամրող գիշերը չէր կրցած քնանալ: Առտու ան գէժ կուպերը ծանրանալով քուն մտած էր: Այդ օր Պետրուսի պիտի երթար: Չզնայ՝ կէսօրէ ետք մօրը պատու իրեց լաւ սեղան մը պատրաստել, իրիկունը, քիչ մը ուշ, ընկերներով պիտի թէ՛ ընկին:

Մայրը, Օսան, տղուն այս պահանջին վրայ թէ՛ դարձացաւ եւ թէ ուրախացաւ: Չարձացաւ, որովհետեւ տղան կոկորդին շատ չոյ տանող չէր. առաջին անգամն էր, որ տղան այդ պիտի պահանջ կը ներկայացնէր: Ուրախացաւ, որովհետեւ Քերոյի հարսնցուին առեւ անպու ելէն ի վեր գրեթէ բնաւ չէր ուտեր: Անմիջապէս պահանջեց ամուսինն, որ հաւնոյ իջնէ եւ Ս. Եակոբին համար վերապահուած աքլորը մորթէ:

— Ի՞նչ կ'ըսես, այ կին. կարելի՞ քան է Ս. Եակոբին աքլորը հիմա մորթիլ:

— Ս. Եակոբը տղայէս լաւ ը չէ: Ինչո՞ւ կ'եանքին մէջ առաջին անգամ ըլլալով թէ՛ պիտի բնէ ընկերներով. թող ուտեն եւ խմեն: Գնա՛, գնա՛ երկու շիշ սղի բեր Ձինարձղի Պոզուսն...

Երբ տղուն անկողինը կը շտկէր, գարձանքով նկատած էր խաչոր նուրը, որ բարձին քով գրուած էր: Իր տղուն սովորու թիւնը չէր այդ: Բայց բան չէր հարցու ցած: Տղան երբ ներս մտած էր, սանկ տեսակ մը վախով, նուր վերցուցած էր եւ տարած-պահած...

Մինչ Օսան կը ջանար տղուն պատու էրր յաւազոյն կատարել, գիշերն տղաբը արդէն իսկ Սյուրն յերան կատարելն վար կ'իջնէին, եւ կը մօտենային Անտոնին տան: Ներսէն իրախնայքին ձայնը կը հասնէր իրենց ականջներուն:

— Աս տղաբը բաւական զարգացեր են,— բսաւ Նշան,— էրգրուն մի Ննչի նենկըր հոս ալ հասեր են: Պուս ո՛ւ:

— Կարեւորը Աննիկին Նշիւններն են,— մէջ մտաւ գայատու բանցի Մանասէն, որ Նշանին ամենամտերիմներէն մէկն էր եւ միացած էր դաւազորութեան:

— Անոր Նշիւններուն ըսելիք չկայ, միայն թէ սա մեր տղան այդ Նշիւններէն կը վախնայ:

— Տիմարութիւն պետք չէ, Քերո՛ր. լուսնի պատառ է շուշանորդիներանի՛ք քեզի. հազար երանի,— նկատել տուաւ Մանասէն:

— Ո՞ր է սա ազդիկը,— քիչ մը անհանգիստ գիտել տուաւ Նշան,— պետք էր հոս ըլլար հիմա. այդպէս պայմանաւորուած էի Նտոր:

Քերոր միայն զվայձ մը կրցաւ արտաբերել: Նշան շնորհով դաւազորութիւն մը սարքած էր, առանց իրեն բան ըսելու:

— Անրնական է այս. պետք էր որ հոս ըլլար ազդիկը: Ներս մտնեմ, տեսնեմ, թէ ի՞նչ կ'անցնի—կը դառնայ,— ըսաւ Նշան:

— Ձրոյլար,— վախճանով ընդմիջեց զինք Քերոր:

— Դուն բնաւ չվախնաս. հող, այդ դափնիին տակ մնացէք. կէս ժամէն կու գամ:

— Այս տղան խենթ է, Մանասէ,— ըսաւ Քերոր:

— Այս տղան առի՛ծ է. բա՛ւ է դողողաս. սիրող ամո՛ւր բռնէ դուն: Նշան ներս մտնելով պատրուակած էր, թէ ծովու թաղէն կու գար, ուր գացած էր ծիսախոտ գնելու, եւ թէ՛ ծարաւցած ըլլալով ներս մտած էր: Տղոցմէ հազար ներողութիւն խնդրած էր իր անտեղի այցելութեան համար: Տղաքը, ընդհակառակն, ուրախացած էին իրմով: Իր ծարաւին համար մէկ—երկու գաւաթ խմցուցած էին իրեն: Կէս ժամ ետք, հաղիւ կրցեր էր տղոցմէ ազատիլ: Դուրս դալով՝ միացած էր ընկերներուն: Հնարազէտ Նշան, այս անգամ իրար անցած էր: Ըստ երեւոյթին, Աննան խարած էր զիրենք. չկար ու չկար. Երեւի քնացած էր: Հայհոյելով դարձան տուն:

Իսկ Աննան, պատրուակով մը կրցած էր դուրս ելլել առ նէն: Նշանակուած ծառին տակ բաւական սպասած էր տղոց, որոնք ուշացած էին: Ժամացոյց չուներ. նաեւ համբերութիւն չուներ. կարծելով, որ ճշդուած ժամանակը անցած էր, առանձինն ճամբայ ելած էր: Այիզբը դժուարութիւն չէր գտած. ճամբան անձանոթ չէր իրեն. նաեւ լուսնի լոյսը օգնած էր: Քիչ ետք սակայն մտած էր ջրաղացքին ձորը: Խորունկ եւ ծառախիտ ձորին մէջ արեւն ու լուսինը տեղ չուներին շատ: Քանի մը տարի առաջ, Աննան իրբեւ փոքր ազդիկ, հօրը հետ գացած էր էրիւնեց ջրաղացը, որ նշանաւ որ էր: Հոն բազարը այլ կերպով էր: Բայց զիչնով ջրաղացին ձորը կտրելու—անցնելը հերոսութիւն էր: Իյնալ—եյլելով՝ հասաւ ջրաղացին: Հակառակ աշնանային պաղութեան, Աննան քրտինքներու մէջ կը լողար:

Ջրաղացը գոց էր: Աննան, ջուրը տկար ըլլալով, ջրաղացը կը գոցու էր մէկ—երկու ամիսով: Եունչ մը առնելու համար, կանգ առաւ ջրաղացին փապուղիին առջեւ, ուր կը գտնուէր չարչար: Գիշերային թռչուն մը դուրս թռաւ փապուղիէն: Աննա շտտկաց, բայց քրտինքը կը պաղեր եւ ինք կը սկսէր մտի: Նաեւ բու մը գուրս թռաւ: Իուն ինքք ստսկու մի մէջ էր կարծէք. ձգեց ու հու մը եւ ապաստանեցաւ խոշոր բնկուղենիին վրայ:

— Դուն պակաս էիր,— հարցուց Աննա եւ քալեց:

Ճամբան նեղիկ եւ օձապտոյտ էր. նաեւ՝ շատ վտանգաւոր: Անգամ մը քիչ մնաց, որ վար գլորուէր: Հազիւ ձորէն դուրս ելած, նկատեց, որ լուսինը չկար: Սեւ ու թանձր ամպ մը ծածկած էր երկինքը: Պաղ հով մը տուաւ ազդանշանը եւ, քանի մը վայրկեան շանցած՝ սկսաւ անձրեւել: Աննանային առաջին անձրեւն էր: Հողին անուշ բոյրը բարձրացաւ եւ լեցուց Աննային ուռնիքը: Հողէն բարձրացող այդ բոյրը, որ աշնան յատուկ էր եւ կը բարձրա-

Կար առաջին անձրիսին հետ, շատ արտրժելի էր: Տեղատարափր շուշացաւ ատկայն: Աննային քրտնած ժարմինը լուացուեցաւ անձրիսով: Ակսաւ արտփայ: Քայլերը արագացուց: Յաջորդ բյուրին գագաթը երբ հասաւ, նշմարեց քանի մը տկար եւ ազօտ լոյսեր: Այդ լու էր մօտեցած էր գիւղին: Քերորին տունը գտնելու դժուարութիւն պիտի չուենար. Նշան նկարագրած էր գայն. գիւղին ամենարարձրն էր: Բայց ի՞նչ պիտի ըսէր: Կէտղիչերին, այլ գիւղէ եկած աղջիկ ճը, այն ալ միս-մինակը, ի՞նչ արդարացում պիտի գտնէր: Ի՞նչ պիտի ըսէին:

Գիւղին մուտքին պահ մը կանկ առաւ: Անձրիս մեղմացած էր. քիչ մը ուշադրութեամբ գննելէ ետք զիմացը, կրցաւ դատարոշել Քերորէնց տունը: Բայց զղջաց. ինք իր ոտքով կու գար հարսնութեան: Ինչո՞ւ ինքզինք այսքան աժան կը ծախէր, երբ անգին իր նշանածը հոգի կու տար իրեն: Ուշ էր սակայն: Տունը դարձն ալ դժուար էր:

«Ըլլայի՞քը պիտի ըլլայ, Աննա. քալէ՛, ըսաւ ինք իրեն: Գնաց եւ բախեց գուռը:

Հաննոն բացաւ գուռը: Օտան պատարը անկողին մտած էր յուսահատ: Տղան եւ ընկերները չէին եկած: Աւբախացած էր, որ զուկին արամազրու-թիւնը պիտի փոխուէր եւ խրախոսանքի պիտի նստէր, բայց ո՛չ ինք՝ Քերոր, ոչ ալ ընկերները երևցած էին: Մտած էր անկողին, բայց քունը չէր տաներ. միայն թէ, տար Աստուած, որ փորձանքի հանդիպում չըլլային ճահիլները: Հաննոն երբ գուռ բացաւ, ուղղակի չմեցաւ. կէտղիչերին իրենց գրան առջեւ կանգնած էր աղջիկ մը, միս-մինակը, որ ուռքին ժաաներէն մինչեւ գլխուն ծաղիքը թրջուած էր:

- Քերորը ո՞ր է, — հարց տուաւ աղջիկը բաւական համարձակ:
- Քերորը, Քերորը, չե՞մ գիտեր, — ըսաւ Հաննոն շփոթմամբ:
- Ո՞վ է, — ձայնեց ներսէն Օտան:
- Չե՞մ գիտեր, երեսասարգ աղջիկ մըն է. վերէն վար ալ թրջուած է:
- Ներս առ գինը, մարդ Աստուծոյ:

Դրան մօտեցած էր Օտան: Ներս առաջնորդեց Աննան: Իր հագուստը տուաւ եւ պատուիրեց, որ վարագոյրին ետեւ անցնի ու փոխուի: Մարդ ու կնիկ աչքով-ու նքով փորձեցին բան հասկնալ այս բոլորէն, բայց ո՛չ զլուխ, ոչ ալ պոչ տեսան այս կացութեան մէջ:

Աննան գուռս կոտ. հարցուտները լայն էին վրան: Մագերն ալ շարքուց եւ նստաւ գետինը փոռած անկողնին ծայրը: Առիթ չտուաւ Հաննոյին կամ Օտանին հարցում ընելու: Ինք հարցուց, թէ ո՞ր է Քերորը:

- Ի՞նչ պիտի բնեւ Քերորը, աղջիկս, — հարց տուաւ աղաւհար Օտանը:
- Ինչպէ՛ս թէ ինչ պիտի բնե՞մ. ժամադրուած էինք, որ փախցնէր զիս. սպասեցի, սպասեցի չեկաւ. ես ալ էլայն ու եկայ:
- Բայց դու ն որո՞ւ աղջիկն ես:
- Սա Աննան է՞մ, գալատու բանցի Անտոնին աղջիկը:
- Հայրդ ընտիր ծխախոտ զրկած էր ինձի երէկ:
- Սա ալ իր բնտիր աղջիկն է՞մ. ես ալ Քերորին համար եկայ:
- Մեղա՛յ, Տէր. բան չե՞մ հասկնար ես, — ձեռքերը զկպի երկինք պար-

զելով գոչեց Օտան:
 Այդ միջոցին լսուեցաւ Նշանին հայհոյանքը: Կր հայհոյէր թէ՛ Անտոնին, թէ՛ Աննային, թէ՛ Գալատու բանին: Պարուած էին, խարուած:
 — Գունը օդի մը խմենք եւ երթանք պատկիլու. ձերինները արթուն են կարծես:

Հաննոն գուռ բացաւ եւ ձէթի նրազով տան մուտքը լուսաւ որելով տղաքը ներս հրաւիրեց: Որքա՞ն մեծ եղաւ տղոց զարմանքը, երբ Աննան տեսան հոն, իրենցմէ առաջ ժամանած:

— Վա՛յ քու պապուն, — սկսաւ նշան: —
 — Ձի՛րաւ եր պապունս եւ ինծի շնորհած սպովասանքք, — ընկ՛միջեց
 Աննա, — դու բար քաջ—քաջ կը սպովիր՞ս մեզ: Ո՞ր մնացիք: Ահ կ՛ժամ գուրոր
 սպասեցի ձեզի. ա՛ն է ձեր էրեկմարդու թիւնը:

Օտան շիժամ էր ազնկան համարձակութենէն: Բան չէր հասկնար զիս
 անցուցարձէն:

— Հոս նայեցէք, շան յակոտներ, բսէք, թէ ի՞նչ կ'անցնի—կը դառնայ:
 կէս գիշերին ի՞նչ դործ ունի այս ազնիկը հոս: Ջաղացքին ձորէն հոս եկած էր,
 վերէն վար՝ թրջուած:

— Ենորհաւոր բլլայ, Օտան աղբրկին, սա աղուոր օրիորդը, որուն
 հմայքն ու համբար ամբողջ շրջանին մէջ տարածուած են, ա՛նա ասիկ իր ոտ—
 քովը, այն ալ կէս գիշերին, եկած է քեզի հարսնութիւն ընելու: Ո՞ր է օղին:

— Վա՛յ շո՛ւ նշանորդիներ, վա՛յ: Գոնէ նախապէս յուր ատուած բլլայիք:
 Քերտրես նշանածը փախցուցին, աւելի անուշիկը իր ոտքովը եկաւ. յո՛ւ—յո՛ւ—
 լո՛ւ:

Օտանը սկսաւ թելերը ճօճել ու պարել...

— Եկէք, եկէք գաւակներս. նախ՝ փոխու եցէք, ապա՝ նստեցէք, կերէք ու
 խմեցէք: Մինչև առաւօտ պիտի խմէք, այլապէս ձեզի աղամարդ ըտողին...

— Հոգ չընես, աղբրկին, եթէ կ'ուզես մինչև միւս օր առաւօտ կը
 խմենք: Ենորհաւոր բլլայ, տարտոր բոլոր պէջքարներու ն:

Տղաքը նստան կերտիսու մի: Օտան եւ Հաննոն կը սպասարկէին: Աննա
 եւ իր տալ բլլայիքը, Գարուն, մասնակից եղան սեղանին: Աննա եւ Գարուն
 երկար շինացին սեղան: քաշուեցան, որովհետեւ հարսնցուն պէտք ունէր հան—
 գիտի:

Առաւօտեան դէմ Քերտը եւ բնիկները գացին Նշանեկց: Օտան յարմար
 չգտաւ, որ տղան պատկէր հարսնցուն ին գտնուած տան մէջ:

ՀԱՐՍԱՆԻՔԸ

Բ. ԳՆՈՒՆ

Այդ գիշեր Աննա շատ կարճ քուն մը կը քցու քնանայ: Արթնցաւ եւ մին—
 չև լոյս շարշարուեցաւ: Մտատանջութեան մասնուած էր: Հիմա, դեռ բարի
 արևու չծագած իր արարքին վրայէն, զգնու մի մէջ էր: Ի՞նչ պէտք ունէր փախ—
 չնլու: Մա՛նաւ անց ի՞նչ պիտի ըսէր հայրը: Զինք այնքան սրտանց սիրող հայրը
 ի՞նչ կ'ընէր արդեօք: Եթէ իր փեսացուն էն եւ պիղէն զժպո՛ւ էր, պէտք կա՞ր
 այսպիսի անխոհեմ քայլի մը: Ի՞նչ պիտի բլլար կամ բնէր:

Գիշերային յորդառատ անձրևէն էն ետք, աշնանային արևու ծաղկեցաւ
 պայծառ երկինքին վրայ: Աննայի տրամադրութիւնը քիչ մը փոխուեցաւ,
 բայց խիզճը հանգիստ չէր: Մեղք չէ՞ր իր հայրը:

Օտան ոտքի էր արդէն: Կոփերը կթած եւ կաթն ալ եռացուցած էր: Նա—
 խաճաչի սեղանը պաարաստեկէ կտք, նոր հարսնցուն հրաւիրեց նախաճաշի:
 Հաննոն նոյնպէս ոտքի էր: Մարդ ու կնիկ ուրախ, շա՛տ ուրախ էին, բայց
 անոնք եւս քիչ մը մթաղնած տրամադրութեան մէջ էին: Աննա առաջին աղ—
 ջիկը չէր, որ կը փախցուէր, բայց եւ այնպէս հարցեր կընային ստեղծուիլ:
 Ատոնց առաջըր պէտք էր առնել:



Անտոնենց տան մէջ, միայն տուտ օտուտ և զգացուեցաւ Աննայի բացա-
կայութիւնը: Գիշերով մարդ չէր անդրադարձած անոր արարքին: Առաւօտուն
մայրը եղած էր առաջին զգացողը: Երբ Աննային անկողինը կը հասարէր, տե-
սած էր բարձ մը, որ պատկոյի զիրքով դրուած էր իր աղջկան տեղ. նաև ան-
կողինը տաք չէր: Փորձառու կինը հասկցաւ ամէն բան: Արդէն աղջիկը յաճախ
զանգատուած էր իր նշանածին մասին, նոյնիսկ մէկ-երկու անգամ բռած էր, թէ
կադէ կամ կոյրի մը նետ փախչիլ-կրթալը կը նախընտրէր, քան այդ մարդուն
հետ կենակցելը: Ան մտարեւոյց նաև իր աղջկան սիրալիրութիւնը Քերոբի
հանդէպ:

Քիչ մը վախով յայտնեց կասկածը ամուսինին: Անտոն կարճեցաւ,
դեղնեցաւ և լուց: Ի՞նչ Աննան. ո՛չ, կարելի չէր: Եթէ իր Աննան էր, չէր կրնար
ոտնակոխած ըլլալ իր հօրենական սէրը և այդ պիտի քայլի մը զի՞մէլ...: Ետևով
ընտանիքին անդամները իրարեկեկ եղան իրողութեան: Կասկածները կեդրոնա-
ցան Քերոբին վրայ:

— Նշանին գայուտը այնքան այ բարի չէր ուրեմն,— եղբակացուց
կարոն:

- Քորքիւնեցի նշանն էր, չէ՞:
- Այո, ևս իր դասը կու տամ, սրիկա՛ն:
- Մի՛ աճապարեք, տղա՛ս, յանցանքը քրոջդ է. Եթէ քոյրդ չփախչիր,
մարդ չէր կրնար փախցնել պինդ:
- Ես գիտեմ բնկէքս...
- Դու ն ուսումիդ պիտի երթաս, տղա՛ս. քոյրդ ո՛չ առաջինն է, ոչ այ
վերջինը: Ես խորատու վիրաւորուած եմ Աննային քայլէն, բայց պէտք է պա-
ղարիւն ըլլալ:
- Ես գացի,— բնաւ կարոն ու գուրա ելաւ:
- Այ մարդ, տղադ տաքարիւն է, ի՞նչ նստեր ևս, բա՛ն մը ըրէ:
- Մի՛ վախնար, այ կին: Կարոն մտաջի տղայ է: Բայց Աննա ինչո՞ւ
տասնկ ըրաւ. ո՞ր մեղքիս համար ըրաւ այս մէկը: Եթէ չէր սիրեր նշանածը, թող
ձգէր գայն օրինաւոր ճամբով:
- Աղջիկդ ո՛չ նշանածը կը սիրեր, ոչ այ այս գիւղը: Դժգոհ էր այս ձո-
րէն: Այս մթնոլորտը կը խեղդէր զինք:
- Աննա տարրեր էր, կի՛ն, տարրե՛ր, բայց ի՞նչ պէտք ունէր այսպիսի
քայլի մը:
- Չեմ գիտեր, Անտոն, բայց ի՞նչ պիտի բռնէր մեր խնամքներու ն: Ո՞ր
պիտի գնէնք դու խնդր: Ո՞ր պիտի երթանք:
- Պիտի մնանք մեր տան մէջ: Նախ ստուգենք աղջկան ուր ըլլալը:
- Ասանկ աղջիկ պէտք չէ ինձի. թող բնա՛ւ յըլլար ի՞նչ անպատու ու-
թիւն բերաւ մեզի. ի՞նչ պիտի բռնէր փեսացուին: Ետքարի պէս ազայ է մեր
փեսացուն: Կարասներով անուշեղէն բերաւ. ահագին սակեղէն բերաւ. մոռ-
ցա՛ր:
- Բնաւ չեմ մոռնար, բայց տասնկ գործերու մէջ անուշեղէնն ու սակե-
ղէնը հիմնական չեն. կարեւորը սիրան է:
- Դու՛ն այ...: Ի՞նչ բռնեմ մեր Թա՛նջի խնամքին, շաքարի պէս կին է:
Վա՛յ անպիտան Աննա, շա՛ն կաթ ծծած: Մտաբոլ կտրած աղջիկ: Ի՞նչ համար-
ձակութեամբ փախաւ: Առջի օր այդ ջորեպանին ջուր հասցուց, փրփուրի
հրաւիրեց: Ծամբան կտրած նուս կար. վատահեմ, որ մեր Աննային գործն է
այդ: Վա՛յ շան աղջիկ, վա՛յ աննամուս: Աչքե՛րդ կուրծան, պաակ շանցնի՛

զիսուդ վրայէն: Օր ու արեւ շտեմնես: Զինարի պոյոյով փեռացու ն ձգէ, եւ փա-
խիբ...

— Լո՛ւ, կնիկ, մեղք չէ՞ մեր ազնիկը: Բա՛ն է անիծեալ:

— Մանուկացի պէս սուր պէտերով մարդը ձգել կ'ըլլա՞ն: Ի՞նչ պեղեցե՛կ
երեսասարդ էր մեր փեռացուն:

— Եթէ այդքան կը հաւնիս դինք, դնա՛ Նետր կարդու է: Իմ Աննա...

— Բա՛ն է կատղեցնեալ զիս: Ի՞նչ բերնով Աննա կ'ըսես. արդէն գու ն
էիր անոր Էրես տուողը: Եան կաթ ծծածին անունը մի տար:

— Քու կաթէ՛ղ գատ ուրիշ կաթ տեսած չէր ան. քիչ մը լու, որ բնեկիբնիս
գիտնանք, կի՛ն:

— Ի՞նչ պիտի բնեկիր, այ պաշապուր: Բանք բանէն անցաւ:

Այդ միջոցին լուսեցաւ ձիւն մը ամբակներու ն ձայնը: Միտաքն էր, Պետ-
րոս աղային անդրանիկը: Հաննոն խնդրած էր իրմէ, Աննային ծնողներուն
խմայնել, որ Աննան իրենց տունն էր, եւ թէ՛ շատ մեծ պատիւ պիտի գգային
Անտոնին խնամք ըլլալով: Միտաք աղան, որ բանակցելու կարողութիւններով
օժտուած մարդ էր, շատ ուժ տուաւ իր լեզուին: Փոփեց Քերտըր, գոփեց Հան-
նոն, գիւղը: Յաւ յայտնեց պատահածին համար. խնդրեց, որ ամուսնութեան
արտօնութիւն տային:

Աննայի մայրը, բաւական լուս մտալ էտք, վերջապէս պտտեց:

— Ինչո՞ւ եկած էք արտօնութիւն ուղեւու. մենք ազնիկ չունինք. այդ
չան կաթ ծծածին մայրութիւն ըրած չե՛մ. պահկ թող շանցնի՛ր՝ զլիսն. արեւ
շտեմնէ. թո՛ղ չխնդայ:

Ո՛չ Անտոն եւ ոչ այ Միտաք կրցան փրփրած կնիկին խօսք հասկցնել:
Միտաք մեկնելու պահուն հարց տուաւ.

— Ի՞նչ է մեր վերջին խօսքը:

— Մենք խօսք չունինք. թող ուզածք բնէ, — պտտաց մայրը:

Անտոն ճամբեց Միտաքը. երբ այս վերջինը ձի բարձրացաւ, Անտոն
պատուիրեց, որ Աննային բարեւ խօսէր իր կողմէ:

Հօր սերը այնքա՞ն խոր էր, որ գոյութիւն ունեցող կարգն ու սարքը չէին
կրնար խնդել զայն: Ետեւ իրատես մարդ էր Անտոն. պիտէր, որ ազնիկը իր
սրտին ճամբով քայլած էր: Օգուտ չունէր սպանալիքը: Կը մնար, կացութեան
համեմատ, լուծու մ'ը գտնել: Դժուար գործ էր: Բայց ինք արդէն իսկ հաշտու-
ած էր եղածին հետ: Կը մնար կարոն ճամբել Տարսան՝ ուսումի: Ամէն բան իր
բնական հունին մէջ պիտի մտնէր:

* *

Անտոնի բարեւը արեւու շող մըն էր, որ ջրմացուց Աննայի տխուր
սիրտը: Ուրեմն՝ հայրը վշտացած չէր, գոնէ ներքու կարող էր: Մայրն այլ մայր
էր. առաւելագոյնս միջուկ առաջին մանկան ծնիւր կրնար քէն բնել:

Իմանալով Աննայի ողբակները, գիւղին կիները, սկսան թէ՛ գոփել եւ
թէ այլանել զայն: Քիչ մը տարեցները ուղղակի կը ստակային: Այդ ձորին մա-
սին փնչէ՛ր չէին պատժուէր: Օրինակ, կ'ըսէին, թէ գիւղը մը, Տօնիկ պապուկը
այդ ձորէն անցած ասեւն տեսած է, որ սատանաները հարսանիք կ'ընեն: Պա՛ր,
Թմբո՛ւկ, ուրախութիւն: Մարդը, հագիւ Յիսուս Քրիստոս ըսած՝ բոլորը անե-
րեւութեամբ են: Ուրիշ օր մը, Ստեփան պապուկը տեսած է, որ սատանաները
քար կը լեցնեն գետակին մէջ. սա այ Յիսուս Քրիստոս ըսելու չի մնար, եւ սա-
տանաները դարձեալ կ'աներեւութանան: Կիները նոյնիսկ կ'ըսէին, որ այդ

բարերուն մէկ մասը հոն մնացած են երկար ատեն: Սոսկու մով կը պատմէին այս գեղերը:

Ու բիշներ գանազան պատժութիւններ կը պատմէին ջրաղացին մասին: Իրը թէ ջրաղացպան Սաժու կը գիշեր մը կ'արթննայ եւ կը տեսնէ, որ սատանաները իր սմբարին այն բէն առած են եւ բաղարջ կ'աճած. առ այլ Յիսուս Քրիստոսը կը յիշէ եւ կը ախրանայ բաղարջին...

Երիտասարդ կիներն ու աղջիկները ու զոհակի կը հիանային Աննայի արկածախնդրու թեան վրայ: Կը գովէին այս արարքը, որոշ նախանձով մը անշուշտ: Այլ մարդիկը երանի կը կարգային Քերոբին, միեւնոյն ատեն կ'ըսէին, թէ ասանկ թաղ կ'ենկան տիրութիւն բնեյր գիւրին բան չէ:



Միտաբին վերադարձն էտք սկսան հարսանեկան պատրաստութիւնները: Տղաքը մորթեցին երկու ոչխար: Ոճանք որսի գացին եւ վերադարձան հարեւրաւ որ ցարսարիկներով եւ արտոյաններով: Բացառիկ հարսանիք մը պիտի ըլլար: Բարձրահասակ Սողոմոնը, որ ճանչցուած էր իրբեւ վարպետ արեղաձար, դարձաւ փեսացուին շափ կարելու մարդ: Ինք առաջնորդեց հարսանեկորներուն թափօրը, որ աղբիւր գնաց Հերիտային ցորենը լուայու: Հոն, աղբիւրին մօտ, տղաքը պարեցին ու պարեցին: Կիներն այժման շուրջպարի: Երիտասարդ աղջիկներ, հերիտայի ցորենը եօթը պղինձէ նոր կայանկուած եօթը ափսէներու մէջ լեցուցած՝ եօթը անդամ լուացին, երգելով եւ ոտտոտելով:

Ցորենը լուայլ էտք, բունեցին վերադարձի ճամբան: Պտուս մը պտուտի բնեց ափ մը ցորեն աղբիւրի ակին մէջ նետել: Ինչ եւ ոչըր գիտեր ստոր իճատար, բայց իր մեծերէն լսած էր այդ մասին: Վերադարձի ճամբուն վրայ երգեցին ու պարեցին: Ցորենի ափսէները իրենց գլուխներուն՝ աղջիկները կը կայտուէին ու կը պարէին: Երիտասարդ աղտօրը՝ նոյնպէս:

Ցորեն լուացողներու թափօրը տուն հասաւ: Երկու ոչխարները արդէն իսկ կարատուած էին: Սառա նկնէն ու Հարժ պապու կը լուայուած ցորենը երեք կաթսաներու մէջ լեցուցին եւ կրակը վառեցին: Կամաց-կամաց հերիտայի պիտի կ'էր, մինչեւ յաջորդ առաւօտ: Իսկ ոչխարներուն յարողները, սիրտերը եւ կարգ մը փափուկ մասերը մանրուեցան խորովածի համար: Այլ կիներ լծուած էին անեղազին աշխատանքի:

Հաննոն եւ Օսան կարգադրած էին հրաւեր զրկելու իրենց ազգականներուն եւ բարեկամներուն: Քանի մը պատանիներ շրջակայ գիւղերուն մէջ ցրուեցան՝ բերանացի հրաւերներ ու զոհելու համար: Հասարակաց երեսօթը այն էր, որ ուր որ հրաւեր արուէր, մարդիկ կը գործանային: Բոլորն այդ գիտէին, որ Քերոբի նշանածը փախցուած էր. ինչ պատժութիւն էր սա: Երբ պատգամարեւ պատանիները յոգնութենէ եւ խանդավառութենէ շնչակտուր՝ կցկտուր բառերով կը յայտնէին եղելու թիւնը, մարդիկ թէ՛ կ'ուրախանային եւ թէ՛ կ'ապշէին: Ըլլայիք բան էր. Անտոնին աղջիկը, նշանաւ որ Աննիկը, այն այ ջրաղացի ձորէն փախելով...: Պատանիները երկար-բարակ բացատրութիւն տայու ո՛չ ախորժակ, ոչ այ ժամանակ ունէին. ահագին հրաւերներ ունէին տանելիք: Ո՛ր տունէն որ ելլէին, անորչութեան եւ իրարանցու մի մթնոլորտ մը կը ձգէին իրենց հտին...

Երեկոյան, հսկայ խարոյկ մը վառուեցաւ Հաննոյին տան առջեւ. այդ էր սովորութիւնը. թէ՛ աշխանային երկրոյեան պողը չէզոքացնելու եւ թէ՛ լուսա-

որոթեան համար անհրաժեշտ էր անիկա: Դրացի զիւղերէն երբ խարոյկ տեսնուէր մարդիկ կը համոզուէին եւ կը փութային: Եւստով բակը եւ սուկը լեցուցան: Տան մէջ, սպիտակ սաւաններ փռուած էին գետնին վրայ. ասոնց վրայ լեցուած էին գանազան ու տելիքներ: Հսկայ շիշերով թուզի եւ խազողի օդի, գրուած էր սեղաններուն: Քիչ մը նեղութիւն կրած էին, որովհետեւ նոր օդին զեւ չէր քաշուած, հինն ալ հատնելու վրայ էր: Կանդապատութեան մէջ, շատեր, ինքնակամօրէն, սուկերէն բերած էին իրենց վերջին պահեստներ:

Նախ՝ անց արուեցաւ տարեցներուն: Հսկայ պիտերով ձերու նիւեր գրասեցին սեղանին ճակատը: Ապա՝ աւելի նուազ տարեցները բազմեցան: Երեսասարգները շատ ալ չէին կրնար նստիլ: Կը ծնկէին պահ մը, կաթիլ մը օդի կը խմէին, պատու մը բան կ'ուսէին եւ ոտքի կ'ելլէին: Դուրս կ'ելլէին պարտաւառ եւ կամ ինչ-որ գործ մը կատարելու: Անոնցմէ շատեր շարունակ կրուժուտ կը գործէին. պարպուած պնակները դուրս կը հանէին եւ լեցուցանէին ներս կը տանէին: Ախորժակները՝ հետզհետ կը սրէին: Ուրախ անակնկալը, համեղ օդին, շատ շուտով պարպել կուտ աային պնակները: Հանձնոյն պահեստը եթէ կը հայէր, ողջ մնային գրացիները: Մարդկային ջաղացները կ'աղային ի պատու Աննիկէն եւ Քերորին:

Կերուխուժը բնականորաբ աւելի կը աաքնար երգերով եւ Սողոմոնի սրինգին նուազներով: Անկիւնէ մը, երբեմն ձերու նի մը կը սկսէր երգել. ուրիշ մէկ-երկու ձերու նիներ կը հասնէին օդնութեան: Բարակ ձայնով երգուած սիրային երգ մը մարելու վրայ եղող կրակի մը ապաւորութիւն կը թողուր: Քիչ ետք սակայն, երիտասարդներ կը սկսէին հնչեցնել առոյգ երգ մը՝ Ազրիւր Անբորի երգը, «Չայն մը հնչեց՝ իմ համբոյրն արծիւն արծիւն արծիւն կը թողար ասնիքը հարսանքատան: Կը խանդապատուէին թղորը:

Այդպիսի երգի մը ատեն, յանկարծ լսուեցաւ թմբուկի մը նախապատրաստական հրաւեր-եղանակին ձայնը: Ա՛յլ մտաւ նաեւ դուռնան: Այս ի՞նչ բարեղէկ պնակնկալ էր: Երեսասարգները զիրար հրմշտկելով դուրս թափեցան: Սուկտացի Կարոն էր, Հանձնոյն նախկին գրացին: Քանի մը տարիներէ ի վեր փոխադրուած էր Ժովուսի թաղը: Լուր տանելուն պէս ճամբայ ելած էր: Խուսափած էր Անտոնենց տան առջեւէն անցնելու, անհամութեան տեղ շտապու ժաւհոգութեամբ: Եւ ահա առիկ, կանգնած խարոյկին մօտ, սկսած էր նուազել: Եղբայրն ալ դուռնա կը փչէր: Անմիջապէս կազմուեցաւ երկար ու կարճ շղթան: Երեսասարգներուն կարմիր կաշիէ կրկնակօշիկները կը թնդացնէին զեւտիւնը: Դարձան ու դարձան, մինչեւ որ Կարոն զաղրեցուց նուազը: Դեռ բարի իրիկուն չէր բաժն:

Փաստ: Հաննոն, շնորհաւորեց զայն: Ենորհաւորեց Քերորը:

— Քերոր եղբայր, ասանկ աղջիկ մարդու ձեռք չ'անցնիր: Թէ՛ կաքաւ է եւ թէ չարքալ: Հազար անգամ շնորհաւոր ըլլայ. մէկ բարձի վրայ ծերանաբ: Թագաւորի վայել աղջիկ է Աննան. լաւ կը ճանչնամ զինք: Երեւ' կ'ըզի:

Այս զոգքը կրնար շատ երկարիլ, եթէ երբեք տղոցմէ մին օդի շիշը բերանը խոթած չ'ըլլար, իսկ ուրիշ մըն ալ եփած «Ծիկէրձի» շամփուրը շամտարէր անոր ատամներուն միջեւ:

— Պիտի պարենք, վերջը կը խոսիս:

Երկրորդ պարնգանակը սկսաւ: Աւելի աաք, քան առաջինը: Տղաքը դարձեալ սկսան զեւտել թնդացնել: Ներսը ձերու նիւերը կը յամենային զեւ: Հաննի էր հուժ Էտօֆթէն կլլել, անտառաւ լինտերով ծամելու ետք: Քիչ ետք ասոնք ալ գուրս ելան: Կը զիտէին երիտասարդները. կ'ափսոսային անոր հա-

մար, որ անցած էր իրենց երիտասարդութիւնը, նաև տնոր համար, որ չէին
Հասնել Երիտասարդներու ն պարը: Իրենք ժամանակին ինչպէ՞ս կը պարէին...:
Առ էլի երկար կարելի չէր համբերել...: Սամու էլ և Տօնիկ ծերու նինները մօտե-
ցան շուրջպարին: Վերջինը ձեռքին ցուպը քաշեց և անցաւ պարապու խին
տեղը:

— Լաւ ու շաղթութիւն բրէք, որ տեսնէք, թէ ինչպէ՞ս կը պարեն: Չարկ
կարօ, պարկ «Հալիւպի»...

Ու թառ նամեայ ծերու նին, որ յաճախ քայլելու դժուարութիւն կ'ու նե-
նար, շտանուած խանդով մը, Սամու էլին ձեռքէն բռնած՝ կ'առաջնորդէր
չուրջպարը: Ատր ի տես, երիտասարդները առ էլի մեծ կրակով կը պարէին: Տօ-
նիկին պատուէր իրար անցնելու սկսաւ Երկրորդ շրջանակէն ևտք, բայց Տօնիկ
մոռացած էր թէ՛ ծերութիւնը, թէ՛ ցաւ ող ոտքերը: Ինքնամոռացութեան մէջ,
պատանիի մը խանդով կը պարէր, մինչև որ քրտինքը սկսաւ քիթին ծայրէն
վար հոսել...: Դեռ պիտի շարունակէր պարել, ևթէ երբէք Օսանը չընդմիջէր:
Ազնիկը հինելու պիտի երթային:

Նշանին տունը շատ մօտիկ էր, բայց տղաքը Երկարեցին ճամբան, գիւ-
ղին շուրջը դարձան, որպէսզի վայելքը երկարէր:

Աննայի տայր, Գարուն, և գիւղին միւս աղջիկները, հինայի ախուով
միտակող, մտան Նշանին տունը: Սկսան երգել ու պարել: Գուրը արտօնուած
չէր մանկամարդ աղջիկներուն պարել: Ներքը առանձինն էին: Հոն կրնային
պարել: Երկար տեսց արարողութիւնը: Այսպէ՛ս սկսան հինու մի արարողու-
թեան: Երկու ձեռքերուն հինայու էլէն և կապու էլէն ևտք, Աննա հրաւիր-
ւեցաւ պարի: Կարծու մէկ օր առաջուան Աննան չէր, տմբոյն էր և անտրա-
մայրը: Բայց պէտք էր յարգէր սովորութիւնը:

Երբ իր պարթև հասակովը մէջտեղ ելաւ, աղջիկներէն շատեր նախան-
ձով սկսան գիտել գէմքը: Շատեր առաջին անգամն էր, որ կը տեսնէին գինք:
Ի՞նչ աղջիկ էր սա: Երգի և ծափի մէջ հագի քանի մը անգամ դարձած՝ յան-
կարծ Տաթնտոց մը լուսեցաւ: Տղաքը, որ գուրը թմբու կով կը պարէին, ուշ
անդրադարձան եղածին: Աղջիկներուն կանչու առուքը սթափեցուց գիրկնք:
Նշանենց տախտակամար չէր տոկացած գեղեցիկ ծանրութեան: Տաթն էր և
վար ինկած: Մայր տուաւ իրարանցու մը: Երիտասարդները ներս փոթացին:

Տախտակամարը մէջտեղէն կիսու կով կազմած էր որոճայր փոս մը և
փոսն ալ յեցուած էր գեղեցկութեամբ: Աղջիկները մէկ առ մէկ գուր բեր-
ւեցան: Աննան մնացած էր բոլորին տակը: Բարերախտարար, վիրաւ որ գրեթէ
չկար. ստացուած վերքերն ալ ծանր չէին: Օսան գեղեցիկը կտրած էր. երբ
տեսաւ անփնաս դուրս բերուած Հարսնցուն, նոր միայն շուրջ առաւ: Եթէ բան
մը պատահած ըլլար իր հարսնցուին, որքա՞ն գժբախտ կզած պիտի ըլլար դա-
ւակը...: Գրկեց աղջիկը. ուսին շալը հանեց և ծածկեց գայն: Երբ Գերոր,
սրտարեկ մօտեցաւ Աննային՝ վիճակը ստուգելու, մայրը հրեց գինք:

— Բան չկայ, տղաս. մի՛ մոտենար. ամօ՛թ է:

Աննա կ'արտասուէր: Անոնական աղջիկը վատ բան կը նախզգար այս
գէպքէն:

Հարսնցուն փոխադրուեցաւ ուրիշ տուն մը: Նշան մօտեցաւ տնոր և
միթթարելու համար բսաւ:

— Աննա հարսնցու, կարելի որր այն է, որ քեզի բան չեղաւ. տախտակա-
մար բան մը չէ. թող ոտքիդ փուխին մատաղ ըլլայ անիկա: Բնա՛ւ հող չընես...

Օսան կրցածին շափ ձայնը բարձրացուց և ներկաները հրախեց հերթ-
սայի, յաջորդ կ'ուսորին: Ոմանք ցրուեցան, իսկ երիտասարդները մինչև
ստուս օտ շարունակեցին իրենց իրախճանքը:



Յաջորդ օրը, կ'սօրէ առաջ իսկ, Հարսնէ որնէրը սկսան հաւարուիլ: Թօսիլ, ինդայ, կատակներ: Ոճանք ժամանակ անցրնելու համար «Թայանի-ցին» Հաննայնց նուսերը: Պատու Օսանը սրտանց բարեմաղթութիւններ կ'ընէր: Աճէն անգամ, որ կը տեսնէր «Թայանի» ժր... Հազա՛ր անուշ ըլլայ, տղա՛ս, կեր, կ'ըսէր:

Կ'սօրին ներկաները բուրբուեցան սեղաններուն շուրջ: Հերիսան առատ էր: Նաև սղին և շուրիայով ապուրը... Այս կրորդութիւնը բաւ էր: Իսկ Պատիկ պատուէր կարծիր պղպեղ կը բաժնէր. ժոռու և կծծու պղպեղը ձեռքէ ձեռք կը խլուէր...

Հագիւ փորեքը լեցուած՝ սկսաւ թմրուկով շուրջապը...: Տղաքը փոխն ի փոխ կը պարէին և կ'ուտէին: Օսան կը կարգադրէր, որ Հերիսա և ապուր զրկուի այն տուներուն, որոնց մէջ հիւանդներ կային:

Կ'սօրէ ետք փեսացուն հաղուեցնելու ելան: Նշանուած տղաք յանձն առին այդ պարտականութիւնը: Ակսան երգել «Զարթիր որդեակա՛ր: Իւրաբանչիւր համարի փերջաւ որութեան, նշանուած երիտասարդներէն ժին, «Աստուծ շնորհքի, Աստուծ շնորհքի» կը գոչէր, հազցուելիք կտորը դարձնելով հազուողին գիտուն վերեւ...: Այս արարողութեան ընթացքին, ոճանց աչքերը կը լեցուէին ժա՛նա անդ ասրեցներուն հ...

Ապա, թմրուկ կը սկսաւ թափօրը առաջնորդել զկտի հարսնցունին «տու-ն»ը: Պարելով, երգելով և նուազով հասան տան առջև: Իւրաճեալ պար: Հարսնէ որնէրուն առաջին երգը եղաւ «Այս չէօր մը»...: Ծարաւ էին ժարգիկ: Պատանիներ սկսան ջուր հասցնել: Հերիսային վրայ, ջուրը թմրուկներու կը վերածէր փորեքը, ասոր համար անհրաժեշտ էր յաւելեալ պարը...

Երբ երկար սպասուձ ետք, Հարսը գուրս բերուեցաւ՝ տղամարդ թէ կին, շին կրնար զսպել իրենց հիացումը: Աղջիկ չէր, այլ՝ լուսնկայի պատառ: Ի՞նչ հասակ, ի՞նչ գէճք...: Երանի՛ Բերորին: Ի տես զեղեցկութեան, նոյնիսկ պատուները ժողցան անոր մեղքը:

Աննան սակայն լուս էր և շատ տխուր: Ի՞նչ պետք ունէր ուրիշին տու-նէն հարս ելլելու...:

Երբ Պողիկեան վարժապետը իր լուսանկարչական մեքենան ծօտեցուց Հարսին, և պատրաստուեցաւ նկարել, Հարսին «առժամեայ» եղբայրն ու քույրը հագիւ կրցան համոզելի գինք, որ ժպիտ մը շնորհ... քամերային...: Այդ ժպիտը, հակառակ բանագրութիկ ըլլայուն, քանի՛, քանի՛ սրտեր հայեցուց...

Եկեղեցիին մէջ երկրորդ անակնկալ մը կը սպասէր Աննային: Ինք կը կարծէր, որ սոփորականին պէս տեղի պիտի ունենար պատու: Երբ ներս մտաւ, ո՛չ ժամ տեսաւ և ոչ այ քահանայ: Անդանի մը ետին կանգնած էր ակնոցաւ որ ժարդ մը, քաղաքային զգեստով: Երիտասարդ պատուելի ճիգրանն էր: Աննա, զարձեալ զգլցայ իր արարքին համար: Բնաւ հաշիւ բրած չէր, որ բողոքականի հարսնութեան կ'ընթար...: Եթէ այդ մէկը գիտնար, ջաղացքին ձորին կ'ու ճամբէն ետ կը զատնար...: Բայց ո՛չ էր այլեւս...

Շատ տարօրինակ պատկ մը թուեցաւ իրեն բողոքականի արարողութիւնը: Վերջաւորութեան, երբ ծոկցաւ պատուելիին ձեռքը համբուրելու, պատուելին ձեռքը քաշեց և արդիւնց այդ մէկը: Ի՞նչ տարօրինակ բան, ժոռու-ծեց Աննա: Իրենց քահանան ինք իր ձեռքը կը կոխէր տեսնողին բերանը, որ համբուրել տայ, իսկ այս մէկը կ'արդիւն աջահամբուրը: Անդա՛յ...

Շնորհաւորութեան ետք, Հարսը տուն տարուեցաւ: Նախ երգուեցաւ «Թէ հայրենեաց պսակադիր»-ը, ապա «Կոխեց» թմրուկը...

Փետային տուներ շտկուած էր: Նոսփ-նոր խտիր մը փուռուած էր գետինը: Վարագոյր մը մեծ սենեակը կը բաժնէր երկուքի, որպէսզի հարսն ու փեսան ազատ զգային: Նոր բազմոցներ և բարձր գրուած էին սճախին շուրջ: Նոյն օրը պատրաստուած էին այս բոլորը, դիւզին ազնիւներուն կողմէ:

Տան մուտքին, հարսը շաքարով և մանր դրամներով լեցուն զաւաթ մը պարկաւ գետին. անոր հտեւէն կնքահայր Նշանն այ կուժ մը փշրեց: Մանուկները, անմիջապէս, կտկտացող հաւիկներու պէս, սկսան հաւաքել շաքարներն ու մանրութիւնը: Միտ կողմէ՝ մսափաճառ Արթինը նախուն ու լիկ մը մորթեց հարսին ռոքերուն առջև: Աննա մերժեց իր մատը թափել արեան մէջ: Կնքահայր Նշան խաշ մը դծեց դրան վրայ և հարսն ու փեսան ներս մտան: Դուրս մնացողները վերջին շուրջպարը պարեցին՝ թմբուկին և զուռնային նուազակցութեամբ:

Այդ գիշեր, ամենամօտիկ ազգականները, դրացիները և բարեկամները մնացին ընթրիքի: Բաւական երկար տեւեց խրատաճանքը: Իսկ երբ կէս դիւզերին փերորենց յոյսը մարեցաւ, կատակասէր Մենճունը իր փոքրիկ ասորճանակովը երեք անգամ կրակեց օդին մէջ...

(Շար. 1)

ԳԷՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ



Կ'արձկն գործարարայ իրազատու թեան ինչնիսկ մէկ գայրկեանին վրայ:

Ի՞նչ է ճշմարտութեան սպուտը, եթէ անիկա անմեղներուն զեւրք պիտի չզատուայ:

Մարդկութիւնը մարտիրոսներուն և շափ երախտապարտ է իր ներկայացուցչական արկարներուն:

Գուցէ սիրոյ մէջ պարզվի... Ատիկան միակ անպակու թիւնն է, որուն պէտք ունի ուշադրութիւն:

Ինչոք զժրտախոնքը ինքի չաւատար կը նկատուի, եւ կ'ընդունի զիրենք աշուպէս՝ ինչպէս որ են:

ԺԱՆ ԺԻՐԱՏՈՒ

Համայնարային էրիտ Մեծ պատերազմներուն միջև ինչպէս մասնակցաւորուածին մէջ, ժան ժիրտաւ կը նաեղ իրանայ Քրանտական թատերգութեան ամենն անբանական զէմքերն մէջը, որուն և սակցուածները բուն ինքնապատանքով զիմաս որուն կցան մեծանուն և բնագրիչներուն կայմէ՝ Լուի փուֆէն միջև: Ժան Վեյար ու առաջակցին նորազոյն ներկայացուցչները: Ըստ Քրանտայի քննադատներուն, զաւրիտութիւնը, յարկանման զբուն ուղիները, ինչպէս որ երկուսու թեան փայլատակու մեքը իրենք են, որ մնայուն և ճշմարտ մը օտարու կը պահեն ժիրտաւ ի գործերը, մանաւանդ անոր զյուր-գործողները, պրոնցմէ մէկը կը նամարուի նկատուայ Վերուն թարգմանարար ներկայացուցչ «Տրոպիկայի պատերազմը տեղի պիտի չունենայ» խորագրեայ իրազր:

Ժան ժիրտաւ ծնած է 1882ին, Պլլաքի մէջ: Նախնական կրթութիւնը ստացուածն էր Երևանի ստանտիլ կար, ու սու մը կը շարունակ յաջորդարար Եւրոպայի և Լաքանայի շիտներուն մէջ, իսկ 1909ին կը սկսի շահախնէ էրոյ Նորմալ Մի: փէրիւթ, ուր ի միջի այլոց կը նկատուի ծնած գերմանական դասընթացներուն:

Համայնարային Աստիկն Մեծ պատերազմի նախաբնէն կը պորտիւրուի և իրրիս յիմուպետ կը մասնակցի զինուորական քախտարոյ ճակատամարտներուն: Կը ստանայ երկու Վերք ու ստանն մը անկողնոյ կը ծառայէ, իսկ պատերազմի աւարտին, զբանանու թեան աւրեններ՝ կը վաւրն նաւ: զի անապիտական պաշտաններ:

Մասնակցակից նի: թերտ: Հենքով կատու զուտ իր թատերախաղերուն և քոմի ի վեր՝ ժիրտաւ: Իր գործերն մէկ կարեւոր մասին անապիտ ստանն է Ա. Լաքանային, ինչպէս նաև յաւնական ու գերմանական անապիտներն, յաջողելով միշտ նաւատարի մնայ թատերգութեան սգրերգական սեր պայպանու թեան բնագրով, նորը ճաշակով ու մտքի ճկուն նաւ թեան մերտնորդած որուն կատակաբ իր նամարին:

Ըստ անակական տրամադրութիւններով թատերական ասպարէզ մուտք գործած ժիրտաւ ի ոճը անախնամար կը սկսի սցենարական էրանդներ ստանայ, մանաւանդ 1933ին կար, երբ Դիմիտրական Վերմանիան սկսած մաշտու պատմաբար մը զատուայ ամբողջ և յաջողի նամար: Այս կապակցութեան թարգմանչական օրինակ մըն է «Տրոպիկայի պատերազմը», որ միամասնական կ'անձնաւ որը յայն ու մարդկային ազատութեան ի ինչպիսի յիմայազներուն ան բունութիւնը:

Ժան ժիրտաւ կը մեռնի 1944ին, անանց կարենայ տեսնելու Քրանտայի ապստապարտութիւնը գերման գրաւումէն:

ԺԱՆ ԺԻՐՈՏՈՒ

ՏՐՈՎԱԴԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

ԱՆՏՐՈՄԱՔ. ՔԱՍԱՆՏՐ. ՄԱՆԱՄԱՐԴ ՍՊԱՍՈՒԿԻ ՄԸ

ԱՆՏՐՈՄԱՔ.— Տրովադայի պատերազմը տեղի պիտի չունենայ, Քասանար:
ՔԱՍԱՆՏՐ.— Գրաւի՛ կու գամ, որ տեղի պիտի ունենայ, Անտրոմաք:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Յոյններու պատգամաւորը իրաւունք ունի բողոքելու: Անպայման պիտի ընդունինք զինք եւ առանց այլեւայլ իրեն պիտի յանձնենք անուշիկ Հելլենը:
ՔԱՍԱՆՏՐ.— Կողտարէն պիտի բնդուինք զինք: Հելլենը պիտի շանձնենք եւ Տրովադայի պատերազմը տեղի պիտի ունենայ:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Այո, եթէ Հէքթորը հոս չլլար...: Բայց ան պիտի գայ, Քասանար, ան պիտի գայ: Վերադարձի իր փողերուն ճայնը կը լսես արդէն...: Այս վայրկեանիս յաղթականօրէն կը մտնը քաղաք: Կը կտրծեմ, թէ այս հարցին մէջ ան ունի իր իտաքը: Երբ երեք ամիս առաջ մեկնեցաւ, երգում քրաւ, որ այս պատերազմը վերջինն է:
ՔԱՍԱՆՏՐ.— Վերջինն էր: Յաջորդը զեւ կը սպասէ իրեն:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Դուռն չե՞ս յոգնիր միայն ազատելն տեսնելն ու զուշակելն:
ՔԱՍԱՆՏՐ.— Ես այնչէր կը տեսնեմ, Անտրոմաք: Այնչէր կը զուշակեմ: Ես միայն երկու յիմարու թիւններ հաշուի կ'առնեմ.— մարդոց յիմարու թիւնները եւ անոնց ենթականերուն յիմարու թիւնները:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Ինչո՞ւ համար պատերազմ մը տեղի պիտի ունենայ: Փարիսն ու Հելլենը զիրար չեն սիրեր այլեւս:
ՔԱՍԱՆՏՐ.— Հարցը միայն երկու քին չէ վերաբերիլ:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Ինչի՞ կը վերաբերի:
ՔԱՍԱՆՏՐ.— Փարիսն ու Հելլենը այլեւս զիրար չեն սիրեր: Տեսա՞ն ես, որ ճակատագիրը երբեք չի կտրուած ըլլայ բացասական պարբերութիւններով:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Ես չեմ գիտեր, թէ ինչ է ճակատագիրը:
ՔԱՍԱՆՏՐ.— Ըսեմ քեզի: Անիկա պարզապէս մեր աղբած իրաքանչիւր որսան տրամաբանական բնթացքն է: Սարափակ է:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Ես վերացական գաղափարներ չեմ հասկնար:
ՔԱՍԱՆՏՐ.— Լա՛ւ: Խօսինք փոխաբերութիւններով: Պատկերացուր վազը մը: Գիտե՞ս ինչ է վազը: Անիկա կը փոխաբերէ մանկամարդ ազնիկները: Վազը մը, որ կը քնանայ:
ԱՆՏՐՈՄԱՔ.— Զգէ, որ քնանայ:

ՔԱՍԱՆՏՐ.— Էս է, ուրեմն կը հասկնաս: Բայց որոշ նախազատութիւններ կը խանդարեն անոր քու նր: Ատենէ մը ի վեր Տրոփագան լեցու ն է անոնցմով:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Լեցու ն ինչո՞վ:

ՔԱՍԱՆՏՐ.— Այն նախազատութիւններով, որոնք կը հաստատեն, թէ աշխարհը եւ աշխարհը կառավարելու պաշտօնը կը պատկանին ընդհանրապէս այրերուն, եւ տրոփագացի այրերուն ու տրոփագացի կիներուն՝ մասնաւորապէս:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ես քեզ չեմ հասկնար:

ՔԱՍԱՆՏՐ.— Այս ժամու ն Հեքթոր Տրոփագա՞ կը վերագառնայ:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Այո: Ճիշդ այս ժամու ն Հեքթոր կը վերագառնայ իր կնոջը:

ՔԱՍԱՆՏՐ.— Հեքթորի կինը գաւա՞կ պիտի ունենայ:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Այո, գաւակ պիտի ունենամ:

ՔԱՍԱՆՏՐ.— Այս բոլորը հաստատու մներ չե՞ն միթէ:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ձիս մի վախցնէր, Քասանտր: (Կ'երեւի մանկամարդ սպասուիի մը, ձեռքի՞ն՝ ներմակեղէններ):

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— Ի՞նչ ազու որ օր, տիրու հի:

ՔԱՍԱՆՏՐ.— Իրապէ՞ս այդպէս կը թուի քեզի:

ՍՊԱՍՈՒՀԻՆ.— (դուրս ելած միջոցի՞ն) — Տրոփագան այսօր կ'ապրի գարնանային իր զեղեցկազոյն օրը:

ՔԱՍԱՆՏՐ.— Մինչեւ անգամ լուացարարու հին նոյնը կը հաստատու:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Օ՛, արգարեւ, Քասանտր: Այսպիսի օր մը ինչպէ՞ս կրնաս խօսիլ պատերազմի մասին: Երկինքէն տեղացող երջանկու թիւ նը կ'ողողէ աշխարհը:

ՔԱՍԱՆՏՐ.— Ձիւ նէ սաւանի մը պէս:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ինչպէս նաեւ զեղեցկութիւնը: Նայէ արեւի շողերուն: Մովբէրուն յատակէն աւելի՞ անիկա Տրոփագայի արու արձաններէն սատասի կը հասաք: Կը յսե՞ս մկնորսներու տնակներէն ու ծառերու շարժումներէն եկող ու խեցիներու մրժու նջներուն նմանող ձայները: Եթէ երբեք խաղաղ ապրելու միջոցներ գտած մարդեր տեսնելու բախտ մը կայ, այն այ այսօր է...: Պաղաղութեան մէջ ապրելու օր, օր՝ խոնարհութեան մէջ ապրելու, նաեւ անմահ ըլլալու...:

ՔԱՍԱՆՏՐ.— Այո, ես վստահ եմ, որ անդամալոյծները, գորս քաշքշեցիներ զուռներուն առջեւ՝ իրենք զիրենք անմահ կը զգան:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Քոյ ըլլան նաեւ բարի: Նայէ այս պալատական ասպետին, որ կը խոնարհի ասպանդակին վրայ՝ կատու մը շոյելու համար...: Մենք թերեւ կը գտնուինք մարդուն եւ անասունին միջեւ գոյացած իրեքահասակացողութեան առաջին օրու ան մէջ:

ՔԱՍԱՆՏՐ.— Դու ն շատ կը խօսես: Ճակատապիբր, գոր վայր անու անեցիներ, կը խլրտի, Անտրոմաք:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Անիկա կը խլրտի ամուրի ազդիկներու հոգիներուն մէջ: Ես քեզի չեմ հաստատար:

ՔԱՍԱՆՏՐ.— Կը սխալես: Ա՛հ: Հեքթոր յաղթական կը վերագառնայ իր պաշտակի կնոջը...: Վազրը կը սկսի մոնչել եւ կը բանայ մէկ աչքը...: Ա՛հ: Կիսամեծ մարդիկ իրենք զիրենք անմահ կը կարծեն՝ իրենց պատիկ նստարաններուն վրայ: Վազրը կը յօրանջէ...: Ա՛հ: Այսօր առիթ մը կայ, որպէսզի խաղաղութիւնը սփռէ ինքզինք ողջ աշխարհի վրայ: Վազրը կը տիգլ իր շրթները: Եւ Անտրոմաք կը պատրաստուի գաւակ մը ունենալու: Եւ ասպետները կը խոնարհին իրենց ասպանդակներ-

բուն վրայ՝ շոյելու համար կատարած կատուներ: Վազրը կը սկսի
բայել՝:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Հանգարտէ:

ՔԱՍԱՆՏՐ.— Ե: անագժուկ կը բարձրանայ պայտաթի աստիճաններէն: Քիթով
կը չրէ դու որ...: Ահա աթիկ, ահա աթիկ ի՞նչը:

ՀԵՔԹՈՐԻ ԶԱՅՆԸ.— Անորոժա՞ք:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Սո՛ւ ա կը խօսիս: Հեքթո՞րն է:

ՔԱՍԱՆՏՐ.— Ուրիշին մասին չեզի հետ խօսող եղա՞՞: Ժիթէ:

ԵՐԿՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՏՐՈՄԱՔ, ՔԱՍԱՆՏՐ, ՀԵՔԹՈՐ

ԱՆՏՐՈՄԱՔ.— Հեքթո՞ր:

ՀԵՔԹՈՐ.— Անորոժա՞ք: (Կ'ողբազուրուի ն): Ողջոյն եւ չեզ, Գասանտր: Եթէ
կրնաս, ըսէ Փարիսին, որ ժօտս զայ: Կարելի կղածին շափ արագ:
(Քասանտր կը տատամսի): Ըսելի՞ք ունիս ինծի:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Մտիկ մի բներ գինք: Անպայման պիտի խօսի ազլտի մը կամ...

ՀԵՔԹՈՐ.— Խօսէ:

ՔԱՍԱՆՏՐ.— Կինզ յդի է:

ԵՐՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՏՐՈՄԱՔ, ՀԵՔԹՈՐ

(Հեքթոր բազուկներու ն մէջ կ'առնէ Անորոժաֆը, կը տանի բարէ
նստարանին, կը նստի մօտը: Կարճատեւ լռութիւն մը):

ՀԵՔԹՈՐ.— Մա՞նչ պիտի բլլայ, թէ աղջիկ:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ի՞նչ կ'ուզէիք, որ բլլայ:

ՀԵՔԹՈՐ.— Հազար մանչ...: Հազար աղջիկ...

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ինչո՞ւ: Որովհետեւ բազուկներուդ մէջ հազար կին առած
բլլայու պատրաստք մը կու զայ չեզի ատիկա: Այխարհ պիտի զայ
մանչ մը, միայն մէկ մանչ:

ՀԵՔԹՈՐ.— Իողոր հաւանականութիւնները կան, որ մանչ մը բլլայ ան...:
Պատերազմներէն ետք կինները աւելի մանչներու ծնունդ կու տան,
քան աղջիկներու:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Իսկ պատերազմներէն առաջ:

ՀԵՔԹՈՐ.— Մէկ կողմ գնենք պատերազմները եւ մէկ կողմ գնենք պատերազմ-
մը...: Այս պահուն վերջ դառած է անիկա: Պատերազմը չեզմէ խլեց
հայր մը, եղբայր մը, բայց պահեց չեզի ամուսին մը:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Ետս բարեխիտ է անիկա: Կը մտնայ գործած շարիքները եւ
օր մը կը վերագտնէ ինքզինք:

ՀԵՔԹՈՐ.— Հանգարտէ: Այլեւս անոր ատիթ պիտի շտան: Քիչ ետք, չեզմէ
բաժնուելիս յետոյ, պիտի երթամ հրապարակ ու հանդիսաւ որպէս
պիտի փակեմ անոր գուռները: Այդ գուռները երբեք պիտի չբացուին
այլեւս:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Փակէ: Բայց զարձեայ պիտի բացուին անոնք:

ՀԵՔԹՈՐ.— Կրնաս թերեւս նոյնիսկ օրը ըսել ինծի:

ԱՆՏՐՈՄԱՔ.— Կրնամ նոյնիսկ օրը ըսել չեզի, պատերազմին դուռները պիտի
բացուին այն օրը, երբ հասկերը ոսկեզոյն ու ատոք դառնան, երբ

այդինները բնույթ ունենան և բնակարանները լեցուին սիրող զոյգերով:

ՀԵՔԹՈՐ.— Եւ երբ խաղաղութիւնը իր զաղաթնակէտին հասնի:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Այո: Եւ երբ մեր զաւակը զօրանայ և խայտայ կեանքով: (Հեքթոր կը համբուրէ Անտրումաքը):

ՀԵՔԹՈՐ.— Քու զաւակը կրնայ թերեւս վատ մը ըլլայ: Այդ է իր ասանովու— թեան մէկ կարելիութիւնը:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Ան վատ մը պիտի չըլլայ: Բայց թերեւս ես կտրեմ անոր աջ ցուցամատը:

ՀԵՔԹՈՐ.— Եթէ իւրաքանչիւր մայր կտրէ իր զաւակին աջ ցուցամատը, աշխարհի բանակները պիտի պատերազմին առանց ցուցամատի...: Եւ եթէ մայրերը կտրեն իրենց զաւակներուն աջ ոտքերը՝ բանակները պիտի ըլլան միտտանիներու բանակներ...: Եւ եթէ անոնք իրենց զաւակներուն աջքերը հանեն՝ բանակները պիտի ըլլան կոյրերու բանակներ: Բայց բանակներ այ պիտի ըլլան և խառնաշփոթութեան մէջ իրենք իրենց վրայ շօշափելով պիտի փնտռեն ու գտնեն կողորդի կամ զլխու թերութիւններ:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Պիտի նախընտրէի մեռցնել զայն:

ՀԵՔԹՈՐ.— Ահա աստիկ պատերազմներուն տուած մայրերուն ճշմարիտ յուժուժը:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Մի խնդար: Կրնամ նոյնիսկ ծնունդէն առաջ մեռցնել զայն:

ՀԵՔԹՈՐ.— Չէ՞ ու զեր զոնէ վայրկեան մը տեսնել: Յետոյ կը մտածես... տեսնել չու զաւակդ:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Միայն թեզմէ գայիք զաւակը կը հետաքրքրէ դիւ, Հեքթոր: Պարզապէս որովհետեւ թեզմէ է ան, որովհետեւ միայն թեզմէ է, որ կը վախենամ: Չեւ կրնար երեւակայել, թէ ան որքա՞ն կը նմանի թեզի: Այն անէութեան մէջ, ուր ան կը գտնուի տակաւին, արդէն իսկ կը կրէ ինչ որ գուն գրած եւ մեր առօրեայ կեանքին մէջ: Քու գործովդ, չու լուծիւնդ: Եթէ պատերազմը կը սիրեն՝ նաեւ պատերազմը...: Կը սիրեն՝ս պատերազմը:

ՀԵՔԹՈՐ.— Ինչո՞ւ այս հարցու՞մը:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Խոստովանէ, որ երբեմն կը սիրեն պատերազմը:

ՀԵՔԹՈՐ.— Մարդիկ կը սիրեն այն՝ ինչ որ երջանկութիւն եւ յոյս կը բերէ իրենց սրտին ամենամտ անձերուն:

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Եւ դու ն գիտես, որ այդպէս պէտք է ըլլայ: Մարդիկ կը սիրեն պատերազմը:

ՀԵՔԹՈՐ.— Եթէ հրապուրուինք այդ փոքր պատուիրակութեամբ, որ աստուածները կը զրկեն պատերազմի վայրկեանին...

ԱՆՏՐՈՒՄԱՔ.— Ա՛հ, հոն, կը տեսնես: Յարձակման վայրկեանին ինքզինքդ աստուած մը կը կարծես:

ՀԵՔԹՈՐ.— Ծատ յաճախ այ՝ մարդէ մը նուազ...: Բայց երբեմն, առաւօտեան որոշ պահեր վեր կը կանգնինք զուարթ, ապշահար, վերանորոգուած: Մարմինը, զենքերը կարծես նոր ծանրութիւն մը կ'ունենան, ու բիշ մտիմութիւն մը կը մատնեն: Անխոցելի կը զգանք մենք մեզ: Խանդաղատանք մը կ'ողողէ մեզ, կը կրնան պատերազմներու խանդաղատանքին տարբերակները, գորովայի ենք, որովհետեւ անգութ ենք. ասիկա վատահարար պէտք է ըլլայ աստուածներու խանդաղատանքը: Դանդաղօրէն կը յառաջանանք զէպի թշնամին, գրեթէ մըտացիք, բայց միշտ խանդաղատանքով: Եւ կը զգուշանանք ճգմելու րզէզ մը: Եւ կը հետացնենք մտեղը՝ առանց ոչնչացնելու զայն: Իր

անցրին մէջ մարդ էրրեք կեանքը այնքան շի յարգէր, որքան պատե-
րագծի բնթացքին...

ԱՆՏՐՈՍԱՔ.— Եւ յետոյ թշնամի՞ն կու գայ...

ՀԵՔԹՈՐ.— Անտոյ թշնամին կու գայ, փրփրերախ, դաման: Կր մեղքնանք
անոր: անոր արցունքներու ն ու յորձու նքներու ն ետին կր տեսնենք
իր ամբողջ անկարողութիւնը եւ նու իրու մը մարդ կային խեղճ արտ-
բանին, որ ինքն է, խեղճ ամուսնոյն ու փեսային, խեղճ զարմիկին,
օգի եւ ձիթապտուղ սիրող խեղճին, որ ի՞նքն է զարմեայ: Կր սիրենք
գայն: Կր սիրենք երեսին ցանկերը, այրին սպիտակուցը: Կր սիրենք
գայն...: Բայց էրր կը պեղէ...: Այն տեսն կը սպաննենք:

ԱՆՏՐՈՍԱՔ.— Եւ մենք, իրրեւ աստուած, կը խոնարհինք անոր անշունչ
մարմինին վրայ: Բայց մենք աստուած չենք, չենք կրնար մեռածին
յարու թիւն տալ:

ՀԵՔԹՈՐ.— Չենք խոնարհինք: Ուրի թշնամիներ կը սպանն մեզի: Ուրիներ՝
փրփրերախ եւ ատելալատ նայու անքներով: Ուրիներ՝ որ բնտանիք
ու նին, ձիթապտուղներ, խաղաղութիւն:

ԱՆՏՐՈՍԱՔ.— Ուրեմն կը սպաննենք գանձը:

ՀԵՔԹՈՐ.— Այո: Կը սպաննենք. պատերազմ է ի վերջոյ...

ԱՆՏՐՈՍԱՔ.— Բոյո՞րը: Կը սպաննենք բոյո՞րը:

ՀԵՔԹՈՐ.— Այս անգամ բոյո՞րը սպաննեցինք, որոյ նպատակով մը: Որովհե-
տեւ անտեք կը պատկանէին անարդար իշխօրէն ուղղմանոյ ցեղի մը:
Այդ պատճառով է արդէն, որ պատերազմը կը յարասեւ է ու կը բաղ-
ժապատակուի Ասիոյ մէջ: Անոնցմէ միայն մէկ Հոգի մազապուրծ
սպատեցաւ մեր սպանողէն:

ԱՆՏՐՈՍԱՔ.— Հազար տարին բոյո՞ր մարդերը ռազմամոյ այդ մէկէն պիտի
սերին: Ուրեմն՝ ապարդիւն փրկութիւն մըն է ատիկա...: Իմ որդիս
պիտի սերէ պատերազմը, որովհետեւ գու՛ն ինքը կը սիրես պատե-
րագմը:

ՀԵՔԹՈՐ.— Կարծեմ ես աւելի կ'ատեմ պատերազմը, քան թէ կը սիրեմ գայն:

ԱՆՏՐՈՍԱՔ.— Ինչպէ՞ս կրնանք ատել քան մը, զոր անգամ մը պաշտած ենք:
Պատեմ, ատիկա կը հետաքրքրէ զիս:

ՀԵՔԹՈՐ.— Գիտեա, այնպէս՝ ինչպէս կ'ատենք բարեկամ մը, երբ Հաստա-
տենք, որ ան ստախօս է: Ատիկէ հաք, ի՞նչ այ բռն՝ սուս կը թուի մեզի,
որքան ալ ճշմարիտ ըլլայ իր ըսածը...: Թերեւս տարօրինակ թուի,
երբ յետմ, որ պատերազմը խոստացած էր ինծի բարութիւն, վիճանմ-
նութիւն, նոյկանք՝ ստորնութիւններու հանդէպ: Կը կարծիք անոր
նու իրարերկէ եռանդս, ապրելու ճաշակս եւ, նոյնիսկ, անձնական
երջանկութիւնս, քե՞զ...: Եւ միշտեւ այս վերջին ճակատամարտը՝
չկայ թշնամի մը, զոր սիրած չըլլամ...

ԱՆՏՐՈՍԱՔ.— Արդէն ըսիր, որ կը մեռցնենք ա՛ն՝ զոր կը սիրենք:

ՀԵՔԹՈՐ.— Եւ չես կրնար երեւակայել, թէ ինչպէս պատերազմներու
չարու նակական բնթացքը պատճառ կը դառնար, որ ես Հաստայի
անոր սպանի կողմին: Ձիերու զիչերային քառարչաւը, հետեւակա-
զօրքին սղմուկները, խրամատին մէջ երկնցած զինուորներու ն
վրայէն թեւածող անզգերուն կոխելները, բոյո՞րը, միշտեւ հիմա
իրաւ կը թուէին, հրաշալիօրէն ճիշդ:

ԱՆՏՐՈՍԱՔ.— Եւ այս անգամ սիս՞ի թուեցաւ քեզի պատերազմը:

ՀԵՔԹՈՐ.— Ինչո՞ւ այդ հարցոյ մը: Անոր համար, որ տարի՞քս յատմացած է:
Կամ արհեստէն բխած յոյնութիւնն է կը կարծես պատճառը, ինչպէս
յոզնութիւնը կաշաղտործին, որով ան երբեմն կը կրի սեղանին առ-

ջն: Այդ նոյն յոյնութիւնն էր, որ աստու մը գիտ բնկնեց այն վայրկեանին, որ վրաս շորած ինծի տարեկից թշնամի մը պիտի մեռցնէի: Անցեալին անոնք՝ զորս պիտի մեռցնէի, իմ հպատակներս կը թուէին: Այս անգամ ինծի թուեցաւ, թէ ծնրադրած էի հայելիի մը առջև: Այդ սպանութիւնը, զոր պիտի կատարէի՝ փոքր անձնասպանութիւն մը կը թուէր ինծի: Չեմ գիտեր, թէ այս պարագային ի՞նչ պիտի բնէր կանաչործը, արդեօք ղէ՞ն կը շարտէր իր վրձինը, թէ կը շարտէ նակէր...: Ես շարտէ նակեցի: Բայց այդ վայրկեանն սկսեալ, ոչինչ մտաց իր ամբողջական հնչեղութեան մէջ: Նեար, որ սահեցաւ իմ վահանիս վրայէն, յանկարծ դատարկ հունչ մը հանեց, ապա զգացի դիտապաստ մարդուն մէջն արթնցուցած ցնցուժը եւ, բանի մը ժամ ետք՝ տեսայ պայտաններուն կործանումը: Արդարեւ, պատերազմը տեսաւ, որ ես հասեցած էի գաղտնիքը: Եւ անիկա շնեղութեամբ ասոյն...: Մեռնողներուն հունդիւնները իրական շէնք թուէր...: Մաքով դեռ հոն եմ:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Ուրիշներուն համար ամէն ինչ ճիշդ էր:
ՀԵՔՔՈՐ.— Ուրիշները ինծի պէս են: Այն բանակը, որ հետս վերադարձաւ, կ'առէ պատերազմը:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Ատիկա ինչո՞ք տրամարանութեան տէր բանակ մըն է:
ՀԵՔՔՈՐ.— Ո՛չ: Ձեռ կրնար երեւակայել, թէ երբ մէկ ժամ առաջ Տրոփագան տեսն, ինչպէս ամէն բան ճիշդ թուեցաւ իրենց: Բոլոր գումարտակները քարացան իրենց անձկութեան մէջ, այնքան՝ որ ոչ ոք համարձակեցաւ մուտք գործել դարպասներէն ներս ու խուժ մը աս խուժը կծկուեցան դարպասներուն տակ...: Ըշմարտ բանակի մը արժանի միակ պարտականութիւնը իր երկիրը խաղաղ պահելն է:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Եւ չկրցար բժրունել, թէ կը գործուէր մեծագոյն սխալը: Պատտերազմը հոս է, Հեքթոր, Տրոփագայի մէջ: Անիկա էր, որ ձեզ դիմաւորեց զարպասներուն առջև: Անիկա է զարձակ, որ քեզի հանդէպ չփոթանար կը գարձնէ զիս եւ ոչ թէ սէրը:

ՀԵՔՔՈՐ.— Ի՞նչ բան կ'ուզես:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Ձե՛ս իմացած, որ Փարիս ասեւ անգամ է Հելլէնը:

ՀԵՔՔՈՐ.— Նոր իմացայ...: Եւ յետոյ ի՞նչ, որ ատեւանդեր է:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Իմացա՞ր նաեւ, որ յայներբ ես կը պահանջեն Հելլէնը: Եւ գիտե՛ս, որ այսօր հոս կը հասնի իրենց պատգամաւորը: Եւ որ, եթէ շանձնենք Հելլէնը, պիտի պայթի պատերազմը:

ՀԵՔՔՈՐ.— Եւ ինչո՞ւ պիտի չվերադարձնենք Հելլէնը: Ես ինքս կը վերադարձնեմ գայն:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Փարիս երբեք պիտի չընդունի այդ մէկը:

ՀԵՔՔՈՐ.— Փարիս համաձայն պիտի գտնուի հետս, եւ շատ շուտով: Քասանորը պիտի առաջնորդէ զինք ձօտս:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Բայց Փարիս չի կրնար համաձայն գտնուիլ ատոր: Իր փառքը կը ստիպէ իրեն տեղի չտալ: Հաւանաբար սէրը նաեւ, ինչպէս ինք կ'ըսէ:

ՀԵՔՔՈՐ.— Լա՛ւ: Հիմա կը տեսնենք: Գնա՛ ըսէ Պրիամին, որ եթէ կրնայ, թող վայրկեան մը սպասէ ինծի: Ըսելիք ունիմ իրեն: Դուսն ապահով զգայ ինքզինքը: Այն բոլոր տրոփագացիները, որոնք կոտուեցան եւ կրնան կոտուիլ, ղէ՛մ են պատերազմին:

ԱՆՏՐՈՒԱՔ.— Դեռ կան սակայն ուրիշներ, որոնք թեր են պատերազմին:
ՔԱՍԱՆՈՐ (Անբը մտնելով).— Ահաւասի՛կ Փարիսը:
 (Անտրոմաք դուրս կ'ելլէ):

ԶՈՐՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ

ՔԱՍԱՆՏՐ, ՆԵՔԹՈՐ, ՓԱՐԻՍ

ՆԵՔԹՈՐ.— Ենորհա որո թիւներս, Փարիս: Կը լսեմ, որ բացակայու թեանս շատ լաւ գրադած ես:

ՓԱՐԻՍ.— Գէշ չէր: Ենորհակայ եմ:

ՆԵՔԹՈՐ.— Ի՞նչ է շէլէնի այս պատճառ թիւնը:

ՓԱՐԻՍ.— Շէլէն շատ սիրու է ինչ որ է, այնպէս չէ՞, Քասանտր:

ՔԱՍԱՆՏՐ.— Բաւական սիրուն:

ՓԱՐԻՍ.— Ինչո՞ւ այս վերապահու թիւնը այսօր: Դեռ երկէ կ'ընէիր, թէ զինք յափազանց գեղեցիկ կը գտնես:

ՔԱՍԱՆՏՐ.— Զափազանց գեղեցիկ է, բայց բաւական ազնիւ:

ՓԱՐԻՍ.— Անձեղ ու պզտիկ եղնիկի մը չի՞ նմանիր:

ՔԱՍԱՆՏՐ.— Ո՛չ:

ՓԱՐԻՍ.— Բայց դու ն մէկն էիր, որ բո՛րք, թէ կը նմանի:

ՔԱՍԱՆՏՐ.— Սխալած եմ: Անկէ հաքն էր, որ եղնիկ մը տեսայ:

ՆԵՔԹՈՐ.— Զեր եղնիկներով կը ջղայնացնէք զիս: Այդքա՞ն շէլ կը նմանի եղնիկի մը:

ՓԱՐԻՍ.— Օ՛հ, յայտնապէս այստեղի կիներուն տիպարով մէկը չէ:

ՔԱՍԱՆՏՐ.— Իսկ ինչպէ՞ս կը պատկերացնես այստեղի կիները:

ՓԱՐԻՍ.— Քու կերպարանքով, սիրելի քոյրս: Կիներուն սարսափօրէն մատչելի տեսակը:

ՔԱՍԱՆՏՐ.— Քու չնչլնու չին անձատչելի՞ է սիրոյ մէջ:

ՓԱՐԻՍ.— Տես, մեր կոյս ազնիւներն են, որ կը խօսին: Դուն շատ լաւ գիտես, թէ ինչ բանի կ'ուզեմ: Ես բաւական լաւ կը ճանչնամ Ասիոյ կիները: Իրենց ողջազուրու մը ստիկնի պէս է, իրենց համբոյրները՝ աղէտարեր, իրենց խօսքերը՝ վերապահ: Կամաց-կամաց մերկանալու պահուն՝ կը նմանին բնականէն աւելի սեթեւանքով հաղուած մէկու մը: Իրենց շարունակ մերկութիւնն անգամ կը փորձեն պարտադրել մեզի, առանց անգրագատնայու, որ իրենք զիրենք կը մատենեն: Մէկ խօսքով՝ անոնց հետ սարսափելի է...: Բայց շէլէնը մինչեւ անգամ բազուկներուն մէջ չհուռ է ինձմէ:

ՆԵՔԹՈՐ.— Ետտ հետաքրքրական է: Բայց դուն կը կարծե՞ս, որ հետուէ հետու սիրելու իրականութիւնը կը թոյլատրէ Փարիսին պատերազմ ընել:

ՔԱՍԱՆՏՐ.— Հետուէ՞...: Կը սիրէ անձատչելի՞ կիները, բայց մօտէն, իր քիթին տակ:

ՓԱՐԻՍ.— Շէլէնի բացակայութիւնը իր ներկայութեան մէջ՝ ամէն ինչ կ'արժէ:

ՆԵՔԹՈՐ.— Ինչպէ՞ս առեւանդեցիր զայն, Համաձայնարա՞ր, թէ պարտադրար:

ՓԱՐԻՍ.— Այդ ի՞նչ հարցում է, Հեքթոր: Դուն եւս լաւ կը ճանչնաս կիները: Անոնք կը Համաձայնին, երբ կամքդ կը պարտադրես իրենց: Բայց կը Համաձայնին նաեւ խանդավառութեամբ:

ՆԵՔԹՈՐ.— Զիտ՞ի փախցուցիր զինք: Իր պատուհանին ասկ անշուշտ ձգելով թրիթի կոյտը, որ ընդհանրապէս կին Հրապարակներէն հետք կը մնայ:

ՓԱՐԻՍ.— Հարցաքննու թեա՞ն էլած ես:

ՆԵՔԹՈՐ.— Այո, Հարցաքննու թեան: Անգամի մը Համար փորձէ ճշգրիտ

պատասխան տայ ինձի: Քու արարքովդ դու ն չե՞ս անպատու ամ ար-
հօք ամուսնական տու ն մը կամ յուսական հողը:

ՓԱՐԻՍ.— Քիչ մը՝ յուսական ջուրը: Հելլենը կը լողար...

ՔԱՍԱՆՏՐ.— Ան փրփուրէն ծնաւ, այնպէս չէ՞: Այս պաղը ծնաւ փրփուրէն,
ինչպէս Վենիսը:

ՀԵՔՔՈՐ.— Ջայն անուանգամ աստեղ պարիսպին վրայ արձանադրու-
թիւններ կամ սպառնալիքներ չձգեցի՞ր, ինչպէս սովոր էս րնէլ:
Դու ն առաջինը չձայնեցի՞ր, որ ամէն ոք այս վայրկեանին խարուստ
ամուսնոյն նոյն բանը բտէ:

ՓԱՐԻՍ.— Մենեկար ծովափ կը գտնուէր եւ գրադամ էր սաքին փակած
խելափտող հեռացնելով: Ան դիտեց իմ նաւակիս հեռացու մը այն-
պէս, որ կարծես հովը կը տանէր իր հաղուստները:

ՀԵՔՔՈՐ.— Ջգայնացած էր:

ՓԱՐԻՍ.— Խելափառ է մը խոցուած թագաւ որի մը դէմքը երբէք երջանկու-
թիւն չէ արտայայտած:

ՀԵՔՔՈՐ.— Ուրիշ դիտող չկա՞ր:

ՓԱՐԻՍ.— Կային, իմ նաւաստիներս:

ՀԵՔՔՈՐ.— Հոյակապ:

ՓԱՐԻՍ.— Ինչո՞ւ «հոյակապ»: Ի՞նչ բան կ'ուզես:

ՀԵՔՔՈՐ.— «Հոյակապ» անո՞ր համար, որ դու ն անդարձանէի որեւէ արարք
չես գործած: Ուրիշ խօսքով՝ քանի որ Հելլեն մօրէ մերկ էր, ուրմն ո՛չ
հաղուստը անպատու բռն էր եւ ոչ ալ իր անարկաներէն որեւէ մէկը:
Ոչի՞նչ՝ բացի իր մարմինէն, որ պղծուած էր: Այդ ալ զանցառելի
է: Ես լաւ կը ճանչնամ յոյները, այնքան՝ որ ծով իջած էս քանի մը
ամիս ետք ծովէն հանդարտօրէն դուրս ելած այս պղտիկ թագու հիին
համար անոնք կրնան աստուածային արկածախնդրութեան մը
առասպելը հիւսել ի պատիւ իրենց:

ՔԱՍԱՆՏՐ.— Մենք կը հաստատենք իր գէմքին անձեզութիւնը:

ՓԱՐԻՍ.— Դու ն կը խորհիս, որ էս Հելլենը Մենեկարի պիտի վերադարձնէ:

ՀԵՔՔՈՐ.— Մենք այդքան շատ բան չենք սպասեր քեզմէ, ոչ ալ Հելլենէն...:
Յոյն պատուիրակը յանձն կ'առնէ այդ մէկը...: Ան դարձեալ ծով կը
տանի Հելլենը այնպէս՝ ինչպէս ծովային բոյսերու մասնադէտ մը իր
հիշող տեղը պիտի դնէր տուեալ բոյս մը: Դու ն Հելլենը Մենեկարին
պիտի յանձնես այս գիշեր իսկ:

ՓԱՐԻՍ.— Չեմ գիտեր, թէ արդեօք կ'անդրադառնա՞ս արարքիդ հրէշայնու-
թեան, ենթադրելով, որ մէկը Հելլենին հետ մէկ գիշեր անցընել էտք,
կ'ընդունի հրաժարիլ անկէ:

ՔԱՍԱՆՏՐ.— Դու ն դեռ յետմիջօրէ մը ու նիս Հելլենին հետ անցընելու: Ասի-
կա փոտա՛ւարար աւելի յուսական է:

ՀԵՔՔՈՐ.— Մի պնդեր: Մենք քեզ կը ճանչնանք: Ատիկա քու բնդուսած
առաջին բաժանու մը չէ:

ՓԱՐԻՍ.— Սիրելի Հեքթոր, ատիկա շատ հիշող է: Յարգ բաժանու մները ըն-
դունած էմ հանդիմանով: Անգամ ամենապիտի կնոջմէ մը բաժնու իլը
հանցայի այնպիսի պիճակ մը կը պատճառէ, զոր ես գիտեմ ոնէ է
մէկէն աւելի ճաշակելի: Անոր հետ ունեցած վերջին գիրկընդխառ-
նու մէն ետք, քաղաքի փողոցներուն մէջ երբ կ'ընես միայնակ առա-
ջին պատշաճ, արտասուելէն կարմրած պաշտելի սիրու հիիդ մեկնու-
մէն յետոյ, հանդիպած փոքրիկ գէմքով առաջին դերձակու հիդ քեզի
կը թուի բոլորովին անսարքեր ու թարմ: Որովհետեւ քաճուսած էս
խորասկուսած, ու յուսալքուած՝ հրաժեշտներէն, յուսցարարու հիի մը

կամ պողպատաճառ կնոջ մը առաջին խնդու քին ճիշը այնպիսի՝ հանուր մը կ'առիէ, որուն ես ինքս կամաւ կը զօնեմ միւս բոլոր հանցքները ...: Անձ մը կորսնցնելով կը վերագտնես ամէն ինչ...: Բոլոր կիները կը վերստեղծուին քեզի համար, բոլորը կը պատկանին քեզի՝ խղճիդ անճնացորդ ազատութեան, արգարութեան եւ խաղաղութեան մէջ ...: Այո, իբրաւունք ունիս, սէրը կը ստեղծէ յափշտակութեան խնայ-կան վայրկեաններ, որոնք բաժանու մի վայրկեաններ են...: Այնպէս որ, ես Հելլենէն բնաւ պիտի չբաժնուիմ, որովհետեւ անոր հետ կը զգամ, թէ խղուած եմ միւս բոլոր կիներէն, եւ փոխանակ մէկի՝ կ'ունենամ անսահման ազատութիւններ ու անսահման վեհու-թիւն...

ՀԵՔՔՈՐ.— Որովհետեւ Հելլենը քեզ չի սիրեր: Ըստձեռնը այդ կը հաստատեն:

ՓԱՐԻՍ.— Եթէ կ'ուզես: Բայց Հելլենի այդ վերաբերումը կը նախընտրեմ իր միւս բոլոր կիրքերէն:

ՀԵՔՔՈՐ.— Ետս կը ցուիմ, բայց, ամէն պարտադրեալ, պէտք է յանձնես դինք:

ՓԱՐԻՍ.— Դուն հոս վերջին խօսք ըսող տէր մը չես:

ՀԵՔՔՈՐ.— Ես չու ճեն կղբայրդ եմ եւ ապագայ տէրդ:

ՓԱՐԻՍ.— Ո՛ր բժն կը չբաժնայես ապագային: Հիմա ես միայն մեր հօրը կը հր-նազանդիմ:

ՀԵՔՔՈՐ.— Արդէն ուզածդ այդ է: Համաձայն ես, որ Փրիսմին դատողու-թեան յանձնենք խնդիրը:

ՓԱՐԻՍ.— Այո, բացարձակապէս:

ՀԵՔՔՈՐ.— Կ'նրդնու՞տ: Երգնու՞նք:

ՔԱՍԱՆՏՐ.— Զգո՛ւ, Հեքթոր: Փրիսմ խենթի պէս կը սիրէ Հելլենը: Ան պիտի նախընտրէր իր աղջիկները յանձնել, քան Հելլենը:

ՀԵՔՔՈՐ.— Ի՞նչ կ'ըսես:

ՓԱՐԻՍ.— Առաջին անգամն է, որ ճշմարտութիւնը կ'ըսէ:

ՔԱՍԱՆՏՐ.— Եւ այդպէս կը ժտանեն մեր բոլոր կղբայրները, բոլոր հօրեղ-բայրները, մեր հօրեղբայրներուն հօրեղբայրները...: Հելլենը ունի մեր բոլոր ծերունիներէն բազկացած պատու ոչ պահակադու՞նդ մը: Նայէ՛: Հիմա անոր պատշաճ ժամն է...: Տես, ճերմակ ժօրու թովզու խ-ները, որոնք կանգնած են պարիսպներու գիտարաններուն մէջ...: Կարծես պարիսպին վրայ փափուացող արագիւններ լլլային:

ՀԵՔՔՈՐ.— Գեղեցի՛կ տեսարան: Մօրուքները սպիտակ են, խոյ զէմքերը՝ կարմիր:

ՔԱՍԱՆՏՐ.— Այո, արեան խուժու մի հետեւանք: Աջամանորի դարպասին ձօտ պէտք է լլլային՝ աղջու նկու համար մեր յազթական զօրամա-սերք, միեւնո կանգնած են Սէի դարպասին ձօտ ու կը սպասեն Հելլենին:

ՀԵՔՔՈՐ.— Եւ նայեցէք ինչպէս զլուխնին կը խոնարհեն յանկարծ կարծես առեկտ անսամ արագիւններ լլլային:

ՔԱՍԱՆՏՐ.— Հելլենը կ'անցնի...

ՓԱՐԻՍ.— Իսկապէ՛ս:

ՔԱՍԱՆՏՐ.— Կեցած է երկրորդ քերասին մէջ: Կօշիկը կը շտկէ, եւ ա՛յնպէս՝ որ երեւին որու նքները:

ՀԵՔՔՈՐ.— Անկարելի է: Տրոփազայի բոլոր ծերունիները հոն են եւ գինք վե-րէն կը դիտեն:

ՔԱՍԱՆՏՐ.— Ոչ բոլորը: Խորամանկները վարէն կը դիտեն:

ԱՆՄԱՆՈՔ ԶԱՅՆՆԻ.— Կեցցէ՛ գեղեցկութիւնը:

ՀԵՔՔՈՐ.— Ի՞նչ կը պոռան:

ՓԱՐԻՍ— Եկեցցէ՛ղ զեղեցկութիւնք կը պոռան:

ՔԱՍԱՆՏՐ— Որոշ շափոյ Համաձայն եմ իրենց, ԼՔԼ ընդունին, թէ իրենք չուսոյ պէտք է մեռնին:

ԱՆՄԱՆՈՔ ՉԱՅՆԵՐ— Կեցցէ՛ Վենիսը:

ՀԵՔՔՈՐ— Իսկ չիմա՞:

ՔԱՍԱՆՏՐ— Եկեցցէ՛ Վենիսը...: Առանց Րի Նախագաստութիւններ կը ճշան որովհետեւ անատամ են...: Կեցցէ՛ զեղեցկութիւնք ...: Կեցցէ՛ Վենիսը...: Կեցցէ՛ Հելէնը...: Կարծես թէ միայն ճիշեր դուրս կու տան: Իրենց ամբողջ ուժով կը ծամծմեն բառերը:

ՀԵՔՔՈՐ— Վենի՞սը ինչ գործ ունի հոս:

ՔԱՍԱՆՏՐ— Իրենց երեւակայութեամբ Վենիսն է, որ մեզի կու տայ Հելէնը...: Առաջին հերթին խնձորը Վենիսին շնորհած ըլլայուն համար, ան փոխադարձաբար կը վարձատրէ զինք:

ՀԵՔՔՈՐ— Դուն եւս յաւ բուն մը ըրած էիր այդ որը:

ՓԱՐԻՍ— Դուն ինչ մեծ հարայք էս...

ՀԻՆԳԵՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ

ՆՈՅՆ ԱՆՁԵՐԸ, ԵՐԿՈՒ ՄԵՐՈՒՆԻՆԵՐ

Ա. ՄԵՐՈՒՆԻՆ— Վարէն աւելի յաւ կը տեսնենք զինք...

Բ. ՄԵՐՈՒՆԻՆ— Արդէն յաւ տեսանք:

Ա. ՄԵՐՈՒՆԻՆ— Բայց սակէ աւելի յաւ կը լսէ: Օ՛ն, մէկ, երկու, երեք:

ԵՐԿՈՒԲԸ ՄԻԱՍԻՆ— Կեցցէ՛ Հելէնը:

Բ. ՄԵՐՈՒՆԻՆ— Մեր տարբերին քիչ մը յոգնեցուցիչ է զայն տեսնելու կամ մեծարեկու համար գծուարին աստիճանները յաճախակի ելեւէջը:

Ա. ՄԵՐՈՒՆԻՆ— Կ'ուզե՞ս, որ փոխենք մեր յայտագիրը: Կրնանք որ մը մեծարելի զինք էս յաջորդ որը գիտելի միայն:

Բ. ՄԵՐՈՒՆԻՆ— Պենթագոն: Կարելի՞ է ամբողջ որ մը անցրնելի՛ առանց Հելէնը տեսնելու: Մտածէ, թէ ինչ տեսանք այսօր: Մէկ, երկու, երեք:

ԵՐԿՈՒԲԸ ՄԻԱՍԻՆ— Կեցցէ՛ Հելէնը:

Ա. ՄԵՐՈՒՆԻՆ— Եւ հիմա վար պիտի իջնենք նորէն...
(Վազելով դուրս կ'ելլեն):

ՔԱՍԱՆՏՐ— Դուն աչքովդ տեսար, թէ ինչպէս են անոնք, Հեքթոր. էս շեմ գիտեր, թէ ինչպէս պիտի գիմանան այս պահանջկոտ ստամոքսները:


ՀԵՔՔՈՐ— Բայց մեր հայրը չի կրնար այդպէս ըլլալ:

ՓԱՐԻՍ— Անոր ներկայանալէ առաջ, կ'ենթադրեմ, թէ կրնայիք աչք մը պարտցնել Հելէնին վրայ:

ՀԵՔՔՈՐ— Հելէնը զիս չի հետաքրքրեր: Օ՛, հա՛յր, ողջո՛ւն:
(Հէֆիւպի, Անտրոմաֆի, քանաստեղծ Տէմոֆոսի եւ ուրիշ ծերունիի մը հետ Փրիամ ներս մտած է: Հէֆիւպ բռնած է փոքրիկն Փոլիքսէնի մետք):

(Շար. 1)

ՓԱՆ ԺԻՐՈՏՈՒ



ԲԱՐՁՐԱՑՈՂ ՎԱՐԱԳՈՅՐՆԵՐՈՒ ԵՏԻՆ

Գորբաշովեան հրապարակայնութիւնը չափով մը վերցուց խորհրդային աշխարհին վրայ իրած կիսաթափանց ու անթափանց վարագոյրները եւ «խնամով» պահուած մութ անցուղարձներէն բաւական բան տեսանելի դարձուց:

Նմանօք գրողներուն ու անձանօք յուշագիրներու յուշերուն ու նշմարներուն հիմամբ պարզագոյն ընթերցողն անգամ այսօր գիտէ, որ ստալինեան սահմակեցուցիչ երեսնամեակ մը թաւայած է հոն եւ միլիոններ յօշոտած մարդասպանին մահէն ետք խորհրդային ժողովուրդները ապրած են նաեւ պրեժնեւեան ամլացնող ֆաւնամեակ մը:

Կր հետեւի. թէ «Ստալինի ժառանգորդները» ոչ՝ թէ ստալինականութիւնը բարեփոխեցին այնքան՝ որքան կրնային, այլ կիրարկեցին ստալինականութիւնը այնքան՝ որքան կրնային:

Մտքի եւ հոգիի կայուածներէն ներս կատարուած սպանդներուն մերկացման առնթեր. հիմա կեանքի միւս երեսներուն վրայէն ալ սկսած են վերնայ վարագոյրները: Նաե՛ւ հայրենագարձ բազմութիւններուն ապրած զառնադառն փորձառութեանց վրայէն. որոնք, յատկապէս վերջին մէկ-երկու տարիներուն, հայրենական ու մարդկային կացութիւնները հերժող իրենց խորքով սկսան նիւթ դառնալ հայրենի գրազէտներուն ու մտաւարականներուն:

Ինչ որ մինչեւ եիմա կր իւստիտէր ու ինչ որ հայրենիքէն խոյս տուածները կամ օրինական նամբներով հայրենաթող միւսները կը պատմէին, կիսով միայն եւսաստի կր թուէին. ոչ հայրենամուտը արարք մը արգարացնող թուամ մասանց, բայց հրապարակայնութեան ընձեռած համարակալութեան շնորհիւ պարզրած իրադարձութիւնները այլեւ կը զննեն բոլոր վերապահութիւնները եւ կը պարզեն ճշմարտութիւնները իրենց բովանդակ մերկութեամբ:

Զանգուածային առաջին ներգազքի օրերուն (1946) այնպէս կատարուած էր ֆարոգչութիւնը, որ նամբայ ելլողներէն ոմանք, դիւրակեցութեան հեռանկարներ փայփայող մակաբոյժներ մանաւանդ, հայրենիքէն բանով մը օգտակար ըլլալու մզումէն աւելի՝ հայրենիքէն օգտուելու ազահութիւն մը բուծանելով բարձրացան նա ու երբ զգացին պատերազմէն նոր գուրս ելած հայրենիքին աննպաստ պայմանները՝ յուսաբեկութիւնը եղաւ անմիջական:

Բայց այս պատրանաբափութիւնը ապրածները հարիւր հազար ներգաղթածներուն մէկ չնչին տոկոսն էր, միւսները այդպէս չէին, տարբեր երազներ փայփայած էին միւսները, այն օրերու պետական յայտնի դէմքերէն Անտոն Փռչինեանի ընդգծած իրականութեամբ ու հոգեբանութեամբ շնչող հոգիներ էին, որոնք՝

«Քողնկոյ առնն ու տեղը, անձամեծատ բարեկեցիկ լաւ կեանքը, մարդիկ գայիս էին Հայրենիք, գրեւորելով իրենց նուիրածութիւնը խորհրդային կարգերին, Ռուսաստանին: Նրանք չէին ընկրկում ոչ մի դժուարութիւնից: Մի խօսքով, Հայ Ժողովուրդը միաւորուած էր խորհրդային գրօյի ներքոյ, մայր Հայրենիքում՝ Հայաստանում»:

Այս կամ մտաւորապէս այս արումներով ու մտածումներով սոցզորուած էր մեծամասնութիւնը ներգաղթողներուն, որոնք օտար երկինքներուն տակ անգամ մը եւս ստուգած հայրենիքը ամէն բանէ վեր դասող նշանաբանին ճշմարտութիւնը, ազատ կեանք, բարեկեցիկ տնտեսութիւն եւ ուրիշ առաւելութիւններ անտեսելով ռաֆ դրին հայրենի հողին, բայց այն օրերու իշխանութիւնները քայլ չտուին հայրենավառ եկուորներուն մարդկօրէն շնչել: Արտասահման կամ Արեւմտեան Հայաստան ծնած ըլլալու սուկական փաստը բաւեց շատ անգամ, որ անոնք կասկածելի համարուին ու դատապարտուին ախարի դաժան լուծին: Բոլորովին անարդար որոշումով մը այդ դժբախտութեան ենթարկուած դժբախտներէն ռմանք փրկելու փորձ ընողներ չպակասեցան հարկաւ, մէկը՝ Ոոյն Անտոն Փռչինեանը ճորէն, որ, կը պատմէ ինքը, երբէ ընտանիք ազատելու իր ձեռնարկին համար՝ ստալինականի մը կողմէ կ'արժանանայ խիստ կշտամբանքի. *«Երեւում է՝ լաւ չէք ստուգել, չէ՞ որ նրանք ծնուել են արտասահմանում»:*

Հայրենադարձները բախեցան այս իրականութեան, որ մարդկային չէր ու հայրենական բնա՛ւ չէր: Ինչպէ՛ս կոչուէր մարդկային ու ինչպէ՛ս կոչուէր հայրենական, երբ հետապնդումը ամէնուրեք էր ու ամէն մարդու հանդէպ էր, երբ համատարած հալածանք էր, տեւական հարցաբնութիւն, բնկերային ծագման չարագուշակ ստուգում, կուսակցական պատկանելիութեան նայնքան ծանրակշիռ պրպտում, աննշան պատճառով մը բանտ, աննշան ուրիշ պատճառով մը՝ տնային կալանք, նախատիւններ՝ վերէն ու վարէն, վիրաւորանք՝ աջէն ու ձախէն, մահացու ակնարկութիւններ՝ արեւմտահայուն հասցէին, բարեացակամ վերաբերում՝ արիւնախումբ քուրքին հանդէպ, համընդհանուր ստալինականութիւն...

Հայրենադարձներուն դժուար արմատ նետելու երեւոյթը յանախ քաջաբուն կիներ զարձած է ուխտի գացած ուխտադրոժներուն եւ ուխտեալ նորտերուն կողմէ: Հայրենի մտաւորականները, սակայն, վարձահատույց մարդոց ակնոցներով չեն դիտեր իրականութիւնը, անոնք երեւոյթին այստարանական շարժադիպներուն վրայ կը դնեն իրենց մատը, ու խոր ցաւով, հաւատարիմ սրտի ձայնին, ազաղակներուն...

Ինձացը կ'արտագրենք հերգաղթած հայերուն ապրած բարդութիւնները բացայտող քանի մը վկայութիւն, իսկ յաջորդ էջին Անժիկ Յակոբեանի յօդուածէն հատուած մը, մզիչ ազգակներէն մէկը Աբրահամ Ալիբեանի գրութեան, որ գաղափար մը կու տայ մասնաւորաբար հայրենադարձներու մտաւորական խաւին հանդէպ բնիկներուն ցոյց տուած բաշարովին անյարիր եւ չմեղանքէ հիմնովին զօրկ վերաբերումներուն մասին...

ՎԱՅՈՒԹՅՆՆԵՐ

••

... Սրբ նա դիմեց անժիջական պատասխանատու անձին՝ ընկեր Փանոսեանին, օգնու թիւն ստանալու փոխարէն լսեց՝ «քո հետեի հրաւիրատուն չենք ուզարկել»։ Սե ժարգը Հայրենաթող դարձաւ Հայրենադարձու հիւոց բնդամէնը մէկ տարի յետոյ։ Իսկ ո՞վ է պատասխան տալու ...

Յրիտասարդը ուսումնարանի ուսարտական գիպլոմը ձեռքին՝ աւտոմեքենայի շարժիչ նորոգողի մասնագիտութեամբ, քաղաովետի նախագահ Արտովեանից աշխատանքի տեղ է պահանջել, այո, պահանջել, դա նրա իրաւունքն է, բայց նախագահը իմանալով, որ նա Հայրենադարձ է, պատասխանել է՝ «ու դում ես չիմարարութեան վրայ աշխատիք, քանի որ տեղ յատկացնել չենք կարող, չես ուզու մ, ինչպէս միանկերը, դու էլ մեկնիր Ամերիկա»։ Մի՞թէ կարծում էք Հեշտ է այդ վիրաւորանքը մոռանալ, մի՞թէ նա մեղաւոր է, որ ուսումնարանում, առանց Հայուի աննկու պահանջարկը, մասնագէտ են պատրաստում («Գարուն», 1988, թիւ 11, էջ 86)։

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

... Այդ աղաղակներին ես ուզում եմ միախառնել Հարիբաւ որ, Հազարու որ Հայրենադարձ Հայ ժարդկանց մայրերը, որոնք, 1946—47 թուականներին կարօտարագծ Հայրենիք վերագարձան, բայց արդէն 1949ին յայտնուեցին... Սիրիրու մ, Միլին Ասիայի աւաղուաներու մ... (մինչեւ կեանքիս վերջը ես ինձ Հեա պիտի տանեմ մի պատմութիւն, որ շտեյի 1981ին Ամերիկայում, Հաստատանից արտագաղթած երեք եղբայրներից։ 1949 թ. սեպտեմբերեան գրեհում, երբ գալիս եմ նրանց ընտանիքն աքսորելու, ընտանիքի հօրը՝ գլխաւոր «մեղաւորին» այդ օրը մեռած են գտնում։ Տղաները՝ մեծը քսանեոթ, կրտսերը՝ տասնութ տարեկան, ազալում են երկու—երեք օրով յնամազել աքսորը, մինչեւ որ կարողանան իրենց հօրը հողին յանձնել։ «Եր թաղեն, անթաղ չի մնալ,— բուժ պատասխանում են ստալինեան կարգուկանոնի նուիրեալները,— հրաման կայ մեզ չենց այսօր տանելու»։ 1957ին ազաները (ընտանիքի ժայրը 1952ին մեռել էր Սիրիրու մ) վերադառնում են աքսորից, վերականգնում իրենց ընտանիքի բնդՀաստուած կենսագրութիւնը, մի տունը գաւնում է երեք, բայց... 1975 թուականին Հեաանում են Հայրենիքից։ «Ան՛նար էր ներել, որ մեզ թող շտուեցին անգամ թաղել մեր հօրը, մենք նրա գերեզմանի տեղն իսկ չգրեանք...» («Գրական քերք», 1988, թիւ 22, 27 Մայիս)։

ՎԱՐԴԳԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Մարդիկ չեն փախչում Հայաստանից ու սովեաական կարգերից, այլ Հայաստանում այն բոլոր արաններից, որոնք, ըստ էութեան, կապ չունեն Հայոց աշխարհի կերպարի ու սովեաական կարգերի հետ։ Նրանք Հայրենաթող էին գատնում տեանելով, որ Հայաստանում գեոեւս ու մեղ են ստալինիզմի ու լեանցման արժանանքը, ժարդկանց ըստ աշխարհագրական գործօնի՝ ծննդավայրի գնահատելու վտանգաւոր սովորոյթը։ Նրանք փախչում են բիբոկբատներից, կաշառակերներից, խարհրաններից, դեմագոգներից, քաղաքացիների իրաւունքները ստեաւարողներից եւ ազգային մտանդութիւնից դուրի ժարդկանցից («Գարուն», 1988, թիւ 3, էջ 93)։

ԳԷՈՐԳ ԵՐԵՂՈՊԵԱՆ

ՍԱՌՈՅՑԻ ՏԱԿ ԷՆ ԳԵՏԸ ՀՈՍՈՒՄ Է...

Եղիշ Չարենց բանաստեղծից ապագայ բանասերներու ծանօթ էինք ընդամենը շուրջ դարձի, շորսն էլ տեղիք դիտելինք: Առաջին անգամ «Ըստ իմ անուշ Հայաստանի» ազօթքը մենք լսել էինք Գպրտցի մեր աւարտական երկերոյթի ժամանակ, որը մենք ներշնչու մով կարգաց մեր անդլերլնի գաստուու, ջահել մի հայրենադարձ: Լսել ու յուզումից, անուժոր գեղեցկութեանը հանդիպելու անակնկալից արտատուել էինք: Այդ օրերին մենքից մեռք էր անցնում Չարենցի «Գիրք Յանապարհի»-ն՝ ծպտու ան քաղաքական մի գրքի չապիկով: Ա. Բակուեցը, Վ. Թոթովեցը, Գ. Մահարին պարզապէս մենք անծանօթներ էին:

Մեր կուրսում հայրենադարձ տղաներ կային. գալիս ու գնում էին՝ օտարտի, մեկուսի, մեր համեմատութեամբ համարեա՝ շքեղ հագնուած, մագերթ քրիտիկանով օծուած. բայց տխուր ու քուտաքափ: Ինչո՞ւ՝ հայրենիք էին եկել, «Աւետեաց երկիր», ինչո՞ւ էին տխուր, չէինք հասկանում նրանց վիճակը: Այո, հայրենիք էին եկել, բայց այդ հայրենիքը նման չէր նրանց երազին (երազը ե՞րբ է նման եղել իրականութեանը): Նրանք կորցրել էին քե՛լ՝ իրենց երազը, քե՛լ՝ այս կամ այն չափով ապահով կեանքը: Դառնօրէն խարուած էին զգում իրենց. «Ինչո՞ւ եկաք, կարմիր խճճո՞ր ուզարկեցինք մեր յետեւից», — կոպտօրէն հարցնում էինք մենք: «Ոչ, կարմիր ազիտացիա ուզարկեցիք», — դառնացած պատասխանում էին նրանք: Այո, հայրենադարձութեան կազմակերպիչ-պատուիրակները սփիւռեալ հայերին չէին կարող ասել որք մշտարտութիւնը հայրենիքի դժուար կացութեան մասին: Պատերազմից դուրս եկած մի երկիր էր մեր «Երկիր գրախտավայրը»: «Բայց, եթէ իմանայիք իսկութիւնը, չէի՞՞ք գայ»: Կը գայինք, ինչպէս որ եկել են 20-30ական թուականների հայրենադարձները: Սակայն իմանալով գալի տարբեր է»:

Այո՛, մեր ընդհանուր քաղաքականութեան համար կարեւոր էր, որ պատերազմում մեր տարած արդար յաղթանակը բարձրացրել էր սովետների երկրի հեղինակութիւնը. հայերի հայրենադարձութիւնը գրա ապացոյցներից մէկն էր: Սակայն ընդհանուր գժուարութիւններից գատ, կային նաև իրաչատուկ քաղաութիւններ: Ընդունուած կարգախօսը հայրենադարձների հանդէպ յանախ անվտանգութեան նկատելի դոզա էր պարտադրում, «Ինդիք էր գրում» կապիտալիստական աշխարհից եկածներին վերադասախարակել սովետական դաշտախօսութեան թեան ոգով, կեանքը, առանց մեր ցանկութիւնները հաշուի առնելու, դուրս էր մղում արեւմտահայերէնը: Հայրենադարձների հետ տարուող աշխատանքը (եթէ միայն դա կայ) շատ կուպիտ, կամայական բնոյթ էր կրում: Սկաններից շատերն արհեստաւորներ էին, որոնց գոյութեամբ յանախ ակախօրէն հեռաբարձում էին Փինանսական բաժնի եւ միլիցիայի աշխատողները: Սրանք հարցեր էին, որոնք աւելի ուշ մեզ մտահոգեցին, երբ դէմ առանք գրանցից բխող տխուր հետեւութիւններին...

ԱՆՃԻԿ ԹԱԿՈՐԵԱՆ

Ա. ԱԼԻՔԵԱՆ

«..... ԿԱՐՄԻՐ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ»
ԵՒ ՍՊԻՏԱԿ ԱԿԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ



... Հիմա էլ ստեղծվեց արտիստի կերպարը, ինչպես մենք կենք հոշոտ, քրոնի-քրոնի տարուայ յուրեան այն արք, կոր արքունիքի հետ կույ տալով մեր թիւաթիւները թիւեր, մեղքի իրար կենք չարքունի գրքեր: Իր նորա արտ տան մէջ, գրեթէ, հազնաւոր էր արտիկ ազնուազուն մի մարդ՝ խմբագիր, մանկավարժ, կոմունիստ, Սերբայի եւ Լեթոնիանի ներգաղթի կոմիտեի նախագահ՝ Հրանտ Դեզլեանը: Մի յերի բանոյ պատմութեան զամբանաբարով փակուեց նոր շրջիքը, ու կէր ստակացնելով մեր մէջ մուշակուեցի պէս հնչող անդգրժ ու անպատասխան զինու շնորհ: ԵՄԼ Հ. Դեզլեանի սպանութիւնից յետոյ դատ ու գաղտնասանի ուղիքակատակերդ ու թիւեր խաղացուեց, տպու այդ քրտաբանի իսկ շարժանացու թանձրեղանայ տաղանդ աւր բանաստեղծ Անդրանիկ Թերզեանը, որ 1932 թ. մի ապրիլեան կիրակի իրկուեւ, նոր Արկ-ժի դիւանան փողոցի պիտու ու խաւար հանապարհին կասկածելի աւտովորդի գուն գործուեւ, անուարաւ թողնելով երդ ու սեր, տուն ու համայնարան եւ իր յետեից գերեզման տանելով նորն ու մարդ:

Համարեա՛ ամիս չի անցնում, որ մի ծանօթ արտագաղթող հրաժեշտ ապու շղայ ինձ մտա («Աստուած գիտե՛ք՝ մի անգամ էլ կը տեսնուե՛նք, թէ ոչ»): Գայիս է նա, եւ մենք մի անորակելի լուսթեան մէջ, իրար կրես նայելով եւ մտովի ողկողնելով անցած տարիները, նստու մ ենք մի պահ, յետոյ սկսու մ ենք բոլորովին անտեղի, բունագրութի մի խօսակցութիւն, որի անյարբիրութիւնը (կրկու ստեղք ջաղ գիտենք) ու բիշ նպատակ չու երի, եթէ ոչ ըստ հնարաւ որին հետուից շրջանցել բուն, խոցոս, անհաս տապի նիւթը՝ արտագաղթը: Եւ ջանի որ կարծես փշի վրայ նստած լինենք, շատ շուտով՝ մնաս բարով, գնաս բարով: Ու անա գ ու որ փակուելու ն պէս անգործելն զգում եմ, որ մի մտ եւս հանգել է իմ մէջ, լույ է կրած շտական հարազատ մի գործիք, ինչպէս Հայդնի «Նրա-ժեշտի սիմֆոնիայի աւ արտական մատուց:

Ի՞նչ անել: Մաքաւարե՛լ արտագաղթող ծանօթիս (ի՞նչ արտով): Գա-տապարտե՛լ նրան (ի՞նչ իրաւ ու նքով): Արդարեւ, ի՞նչ իրաւ ու նքով, ջանի որ ջատանամեայ անմտուել համակերպումը մէկ ու միակ նշմարութեանը խո-րանի պէս գրողմել է իմ մէջ այն անխախտ համոզումը, թէ ամէն ոք ու երի ի՛ր նշմարութեանը, եւ որ մարդ արարածը նախ եւ առաջ յիշողութիւն է, յետոյ միայն՝ ու բիշ բան: Եւ որովհետեւ մարդկային կեանքում հնչում է մի ժամ, երբ այս երկու հասկացութիւնները զրկիլ նոյնանում են եւ միանուելում, եւ ցանկանում եմ խօսել յիշողութեան մասին, այսինքն՝ ուղում եմ իմ էութիւնը

բաղադրող զգացական տախտակի այսինչ կամ այնինչ կէտի վրայ, ու դղել մի պահ մեր օրերի հրապարակայնու թեան լուսարձակը: Յոյս ու նեժ, որ անհասկացից դէպի ժողովրդական պանդուխտը ձգուող ընդհանրացման ճանապարհով փոքրիշատէ բացատրած կը լինեժ, թէ ինչու: Ընկրդաղթ՝ բառի այնքա՞ն ներուժ նախանանցին յանկարծ փոխարինելու եկաւ մի ուրիշ, արտաուող նախանանց, եւ թէ ներքին ի՞նչ մղումով մի ամիս առաջ ճեմարանական դարձնելու հետեւ գաւազը հրածելա տուեց ինժ, իսկ երկէ՛ հարազատ զարմիկս, երկուսն էլ հանգերժ ընտանեօք:

Անժիկ Յակորեանն իր ըստ ամենայնի սրտացաւ յողուածուժ (ԲՊրական քերք), շոկտեմբեր, 1917 թ.), անդրադատ նայով հայրենացարձու թեան տարիներին, մէջ է բերուժ կարմիր խնձորի եւ կարմիր ազիտացիայի յայտնի փոխկառմարանքը, որ կեանքի դժուակ պայմանների հրամայականի տակ իրար երեսի էին շարուժ տեղացի հայն ու հայրենագարձը: Կարիք կա՞յ սաւուժու: Թէ 1916-17 թթ. ոչ մի, ոչ մի ներգաղթող Կարմիր խնձորի՞ չէր սպասուժ, որովհետեւ խորապէս հասկանուժ էր, որ պատերազմի արհաւիրքը դեռ նոր թօթափած իր բնաշխարհիկ հայրենակիցը շափազանց հեռու էր հարսանքատէր լինելուց, իսկ եթէ իրապէս կար մի հարսանքատէր, ապա միայն ու միայն ի՞նքն էր, որ պարելով ու ԲՊան քարաւան՞ երգելով, ճամբայ էր ընկնուժ դէպի իր Կարսունան նորահարս-Յրեւանք: Ինչ վերաբերուժ է Կարմիր ազիտացիային, ապա այդ կառմարանքը Կարսունաց յետոյ միայն հայրենագարձի յղացած Կարսուն՞ էր, արդիւ նք ինչ-ինչ յու սախարու թիւների, որոնք, ծայր տունելով Բաթումի նաւամատոյցուժ իսկ կատարուժ զեղծարարու-թիւներից ու ներշնչուժ վախերից, ու ճանցան օրաւ ուր եւ իրենց զազաթ-նակէտին հասան մանաւանդ, երբ նա վարկ ստացաւ տուն կառուցելու համար, ալլապէս ամէն, ամէն ներգաղթող կա՛մ անմիջականորէն, կա՛մ եղեռնապուրժ ծնողների, դատարարական թեան հանապազօրեայ միջնորդու թեամբ մի բողոքովին տարբեր Կարմիր ազիտացիայով՞ էր բերնէրեան լցուժ ամ, որը նաւի վրայ անգամ ստիպուժ էր նրան ապահար կրկնելու: ԲՊայց նաւ ու շախտան կ'երթըցուի...»:

Ես, ինչպէս եւ մի խումբ գրող-բող աղաներ, եկել էինք նաեւ մի այլ, նիւթական տնից տարբեր կացարան կառուցելու պատանեկան երազով, ի՞նչ փոյթ, որ այդ կացարանը կոչու էր խուզ կամ խրճիթ, միայն թէ լինէ՛ր հայրենի երկնքի տակ: Այս նպատակով մենք Կարիք չէինք խնդրուժ, մեզ հարկաւ որ էր միայն մարդկանց հաճութիւնը, բարեացակամութիւնը մեր մայրենի, մեր ստուգուած ու սրբանուէր շինանիւթի՞ լեզուի հանդէպ, որով ցանկանուժ էինք զէր սկսել մեր կատոյցը: Անժիկ Յակորեանն իր վերոյշինալ յողուածուժ չի մանրամասնուժ, լուկ յուչուժ է, թէ այդ տարիներին ինչ բախտ վիճակուեց արեւմտահայերէնին: Ես իժ մեծազոյն յու սախարու թիւներից մէկն ապրեցի, երբ ներգաղթելուց բնգամէնը երկու ամիս յետոյ, չգիտես ինչից պատուպան-ելով, խմբագրու թիւներուժ պետական լեզուի, ԲՊովուրդը չի հասկանալի հարց յարուցեցին իժ աղեւ: Այս հիասթափութիւնն անկարելի էր համեմատել նոյնիսկ այն ցաւի հետ, որ դրացի, երբ մի անգամ Էճեղնար աղբիւրի հեղինակը, գիմելով ինժ, առաց, թէ՛ Էճեր գրողներին պէտք է անպայման մեր լեզուին վերածել: Էճերի՞, Էճերի՞ այս մտայնութիւնը չէ՞ր արդեօք, որ հակազդեցութիւններ սերմանելով, յանգեցրեց հետագայ տխուր երեւոյթին:

Այո՛, հետագայ տխու՛ր երեւոյթին...: Հրապարակուեց, պրոֆ. Ա. Ղաբիրեանի բնորոշմամբ, ԲՊարտիստական լեզուարանութեան մանիփեստը, բացասական կարծիք ստորագրեցին, ԲՊական քերքուժ, թէ ուժ

«Հանճարեղ գրչին» էր պատկանում: Անձիջապետ, ինչպես ամէնուրեք, Հայաստանում էլ ժարգիկ անպայման մի ժարգոն պանելու յեանէից ընկան օր ու գիշեր: Եւ, ի՞նչ խօսք, գաս'ն: Արեւ մտահայերէ՛նը: Եւ հղաւ մի պահ, միայն մէկ պահիկ, երբ ամենավերջին Հայրենազարն իսկ կեանքում առաջին անգամ երկմտեց, թէ արդեօ՞ք օտար ասիերին ի դուր չի երգել ՎՊ՝ի մեծաաքանչ դու չիզու՞ք, միշտ եւ ամէնուր նախապատուութիւն տալով նրա՞ն, քան «հասնապարզ հացի» ստոյգ երաշխիք այլաբարբառ սպաժոններին:

Այդ ժամանակ եւ ուսանող էի Մոսկուայում, չգիտեմ, զուցէ առաջին Հայրենազարն ուսանողն այնտեղ, նշուակ ամէն տեսակ կասկածանքի, անփաստութեան ու աննիւթ Հակոբութեան: Պատահեց այնպէս, որ լեզուական այդ թունոյրո՛ւնին մէջ լոյս տեսաւ իմ առաջին փորձիկ ժողովածուն, արեւ մտահայերէն, եւ հագիւ մի օր վաճառուած՝ նման զէպիքում պատկան ժարմինների անօրինակ գործարարականութեամբ հուսարուեց գրախանութներից եւ ոչնչացուեց ի սպասու: Յիշում եմ, մի շարաթ շարունակ ստանում էի հօքոս ու քոյրերին տաղնապատ հետադրերը, որոնց, ի չզոյժ մամոնայի, լակոնիկ պատասխանում էի. ողջ եմ, առողջ: Մի տարի յետոյ այդ նոյն գրքոյից թարգմանուեց արեւելահայերէնի, հրատարակուեց, եւ անձիջապետ գտնուեց մի գրախօս, որ անպայման իմանալով ժողովածուի գլխին եկածը եւ, երեւի, քաջածանօթ լինելով այն տարրական ճշմարտութեանը, թէ բանաստեղծին չի կարելի պուկել նրա լեզուից, քաջջուկի ենթարկելով ինչ-ինչ «մեծաաքանչ բառեր», որոնք խորթ միջավայր բնկած մանկանց շուտուս երեւոյթն ունեն: Եւ այսուանդ փաստ եմ արձանագրում միայն եւ ոչ թէ արժէք նժարում: Ի՞նչ չէի տայ հիմա, եթէ այդ գրքոյից, նոյնիսկ արեւմտահայերէնը, գոյութիւն չունենար կենսագրութեանս մէջ:

Կարծում էի, թէ բոլորիկ եմ փորձանքի փուլը, բայց, օ՛ միամտութիւն: Ամիսներ անց փաստօրէն ոչ ոքի «ողջ եմ, առողջ» չէի կարող հետադրել եւ, Քրաններացի բանաստեղծի բառերով. «ստուեր կը գտնուայի ստուերների աշխարհում», եթէ վրայ շահանէր 1953 թ. ամենափրկիչ օրը՝ Մարտի հինգը, որ ոճանց չգիտես անկեղծ, թէ կեզմաւ որ լացի, ու բիշների ներքին զուսպ ցնծուութեան մէջ մտացութեան մտանց այն փաստը, թէ Մ. Գորկու անուան գրականութեան ինստիտուտի կոմերիտմիութեան կոմիտէն մի անստորագրիչ նամակ էր ստացել իմ մասին, ուր մէկը «ամէն սովետականի» հակա էր հուշակոմ ինձ...

Մի անգամ Երեւանում, երբ մի Հայրենազարն բանաստեղծ բարեկամի վերոյիշեալ մասնագրի խօսքն արեցի, նա տարօրէն քմծիծաղեց եւ զրեթէ նոյն ժամանակ իրեն պատահած մի զէպե պատմեց ինձ, որ տառացի վերարտադրում եմ անհա, խոնարհազին ներողութիւն խնդրելով նրանից:

«Վաղուց գրողների սուս չի մտել — սկսեց բարեկամս: — Մի ու չ գիշեր, երբ Մարքսի փողոցով էի անցնում, ուր մեր եկած տարիներին, գիտես, գտնուում էր գրողների սուսը, տեսայ, որ լուսաւոր են նրա բոլոր պատուհանները: Բարձրանում, ասացի ինքս ինձ, տեսնեմ՝ ի՞նչ բանի են մեր հոգու ճարտարադէտները: Վեր ելայ եւ կամացուկ ծնրպեցի դուռը: Մրա՛նք դրեթէ չեցուն էր: Բեմի վրայ, կրակուրոց կարած էլոյթ էր աւնենում անուն հանած մի բանաստեղծ: Կուսակցութիւնը ոչ ոք, հագիւ էի ոտքս ներս գրել, երբ ճարտիտան իսկույն ընդհատելով իր նլոյթը եւ ինձ գիմելով, ուղղակի գոռաց:

— Ընկեր այսի՛նչ, ասա՛, քեզ կուսակցութի՛ւնը բերեց Հայրենիք, թէ՛

Արարատը...

Ձգիտեմ, թէ ինչպէս ամենամօտիկ դատարկ աթոռն իմ փրկութիւնը եղաւ, — աւարտեց բարեկամս:

